



ԷԶՄԻԱՇԻՆ



№ 146



ԼԲ

ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ԿԵԿՐԻՄԲԵՐ



1975



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
1975 ԹՎԱԿԱՆԸ ՀՈՔԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ
ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԻԼԻԿՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԸ
ՈԳԵԿՈՉԵԼՈՒ ԱՌԹՎ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ
ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ
Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱԶՆՈՑ, ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԷԻՆ
ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՑ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԳՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ
ԵՒ ՍԻՐԵՏԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԽԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Փրկել զմեզ ի քերանդ առիժուց, ազատել զգերեալսն ի տանէ կռապա-
նաց և դարձուցանել զամենեանս յաշխարհն հայրենի»:

Ս. Ներսէս Շնորհալի

Հայաստանեայց եկեղեցու և ժողովրդի բազմադարեան պատմութիւնը
սրտաշարժ դիցազներգութիւնն է նրա ապրելու սրբազան կրքի ու նրա
ստեղծարար ուժերի: Յաճախ, նույնիսկ արտաքին մահացու հարուածներին

տակ, վերջնական փլուզում թուացող վախճանը, դարձել է նոր կեանքի սկիզբ, որով հայ ժողովուրդը տատապանքի ազնիւ լուսապսակը ճակատին շարունակել է գոյատեւել, մարտնչել ու յառնել իր իսկ անբաւականներից:

Այսպիսին է եղել մեր եկեղեցւոյ պատմութեան ճառ կիլիկեան Հայաստանի շրջանը, երբ այնտեղ է փոխադրուել ու գործել անէի բան երեք դար մեր եկեղեցու կենտրոնն էլ՝ Ամենայն Հայոց հայրապետական Մայր Աթոռը:

Ժողովուրդների պատմութեան մէջ, գրեթէ եզակի երեւոյթ է, որ անդունդի եզրին հասած մի փոքր ազգութիւն, իր պատմական հայրենիքից հեռու, մի այլ հողամասի վրայ, կարողացել է հիմնել մի նոր ազգային իշխանութիւն, ուր և փոխադրելով իր եկեղեցու գերագոյն կենտրոնը, դարեր շարունակ գոյատեւել, գործել ու զարգացրել է իր հոգեւոր և մշակութային կեանքը, ապա վերադառնալու համար իր պատմական հողամասի վրայ, նոր վերածնունդի տեսիլքով առցուն:

Այսպէս է որ Բագրատունեաց Հայաստանի անկումից յետոյ, մեր եկեղեցւոյ պատմութեան կիլիկեան ժամանակաշրջանը, մինչեւ 1441 թուականը հանդիսացել է մի ճշմարիտ՝ հոգեւոր ու մշակութային վերածնունդ:

Արեւմուտքից ու ապա արեւելքից կրած ահաւոր հարուածներից, հոգեւարքի մէջ տուայտող հայ եկեղեցու և ժողովրդի համար, փրկութիւն է դարձել Կիլիկիան, որը կամրջել է մեր թուարկութեան հայոց պատմութեան առաջին հազարամեակը և յետագայ դարերի զարթոնքի ու ապա մերօրեայ վերածնունդի դարաշրջանը:

Կիլիկեան վերածննդեան երեք հարիւր տարիները հանդիսացել են մի քախտորոշ ժամանակաշրջան մեր եկեղեցու և ժողովրդի փոթորկայոյզ պատմութեան ճանապարհի վրայ:

Յիրսի, Բագրատունեաց Հայաստանի անկումից յետոյ, կիլիկեան շրջանն է որ բացել է մեր պատմութեան «Յուսոյ դռները» և ապա երեք դար շարունակ փառքի էջեր արձանագրելուց յետոյ նոր «Յուսոյ դռների» ժառանգութիւնը փոխանցել է մեր եկեղեցուն ու ժողովրդին, որը այս անգամ բուն Հայաստանի հողի վրայ, պիտի շարունակէր իր պատմական առաքելութիւնը, մանաւանդ հայրապետական Մայր Աթոռի 1441-ին Սսից ա. էջմիածին փոխադրուելուց յետոյ:

Կիլիկեան դարաշրջանը ոչ միայն նոր կեանքի է կոչել մայր երկրի տարածքի վրայ շնչափեղծ վիճակի հասած հայ եկեղեցին ու հայրապետական Աթոռը, հայ մշակոյթն ու դպրութիւնը, ազատ ու ինքնիշխան ապրելու ազգային գիտակցութիւնը, այլեւ առաւել ամրապնդել է դրանք, ու անկորնչելի նոր արժեքներով հարստացրել է հայ ստեղծարար հոգու ու մտքի գանձարանը:

Արդարեւ, կիլիկեան շրջանը նոր ու ինքնատիպ խօսք է ասել և նոր բարձունքներ է նուաճել հայ եկեղեցու աստուածաբանական մտածողութեան, փիլիսոփայութեան ու գրականութեան, օրէնսդրութեան, գիտութեան, գրչութեան ու մանրանկարչութեան պատմական զարգացման ու ծաղկման ճանապարհի վրայ:

Մեր պատմութեան երկնակամարի վրա՝ հինգերորդ դարի հայոց ոսկեդարին, կիլիկեան շրջանն է որ պատասխանել է՝ հայոց արժաթեայ դարը կերտելով: Ոսկեդարից ուր հարիւր տարիներ յետոյ, արժաթեայ դարով՝ կոթողուել է հայ եկեղեցու և մշակոյթի երկրորդ սինը: Եւ այդ երկու սինների

վրայ է յենուել ու յենում է՝ հայ ոգեկանության բոլոր ժամանակների յադ-
թական կամարը:

Եւ առեկին տակալին, մեր հաւատաւոր ու արիական ժողովուրդը, իր
պատմութեան կիլիկեան փառքի յիշատակը իր սրտում ամուր ծրարած, ար-
թուն գիտակցութեամբ սպասել է «Յուսոյ դռների» առաջ, մինչեւ նրանց
բացուել են մեր ժամանակաշրջանում, մեր մայր հողամասի վրա, արդի մեր
պերն Հայաստանի ծնունդով, եղբայրացած ժողովուրդների մեծ ընտանի-
քում, խաղաղութեան, անվտանգութեան ու անմախքնթաց յառաջադիմու-
թեան պայմանների մէջ:

Չի կարելի խոր յուզումով չյիշել Ստեփանոս Օրբելեանի մարգարէա-
շունչ «ողբը» տասնեւչորսերորդ դարի սեմին, երբ նա ողբում էր բուն Հա-
յաստանի ժողովրդի ու հայոց եկեղեցիների «խորշակահար» վիճակը, բայց
և երազում էր նրանց վերականգնումը մայր երկրի վրայ:

«Կանգնէ Աստուած զԱթոռ [Հայկեան]... նոր զարդարէ փառօքն հին...

Տայ մեզ գոչել ձայնի ուժգին, վերջինս է մեծ քան զառաջին»:

Այսօր, երբ մեր անցեալի հին մագաղաթները յուշում են մեզ՝ վեց հա-
րիւրամեակը հայոց կիլիկեան շրջանի վերջաւորութեան (1375—1975), մեր
սուրբ եկեղեցու և Մայր Աթոռիս գիտակցութեան առաջ յառնում է մեծ յի-
շատակը այդ ժամանակաշրջանի, և փառաւոր ժառանգութիւնը, որ նա ըն-
ծայ է թողել մեզ, իր երեք հարիւր և առեկի տարիների կենսունակ գոյա-
տեւմամբ, հերոսական մարտնչումներով և հոգեւոր մեծարժէք իրագործում-
ներով:

Որով, այս Մեր կոնգակաւ, հրաւեր ենք կարդում որ 1975 տարին
նուիրուի հայ եկեղեցու և Ամենայն Հայոց Հայրապետութեան կիլիկեան
շրջանի յիշատակին, որ Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում տեղի ունե-
նան գոհարանական մաղթանքի արարողութիւններ, ու կենդանի խօսքով
ոգեկոչուեն, մանաւանդ այն մեծանուն հայրապետներն ու վարդապետները,
հոգեւոր մշակներն ու գիտութեան և արուեստի վարպետները, որոնք կեր-
տել են հայ ոգեկանութեան արծաթեայ դարը:

Զերմապէս յանձնարարում ենք, որ այս նուիրական յիշատակի պան-
ծացմանը նաև մեր եկեղեցական-մշակութային կազմակերպութիւնները և
հայ մամուլը, կիլիկեան շրջանի հոգեւոր մշակոյթի արժէքները լայնօրէն
ծանօթացնելու համար հայ նոր սերնդին և այլազգի ժողովուրդներին, հա-
յերէն և օտար լեզուներով հրատարակութիւններով:

Յարգա՛նք ու պատիւ հայ եկեղեցու և ժողովրդի հոգու մշտանորոգ
ուժերին:

Յարգա՛նք ու պատիւ հայ եկեղեցու և ժողովրդի լուսաւիտ պատմու-
թեանը և մեր օրերի հայրենական պայծառ վերածննդեան:

Հայր Դե Ռ

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

Տոտա կոնգակա ի ԼՏ-Ճ մարտի
1974 վերջական ամի,
և ի տոմարիս հայոց ՌԵՄԳ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 767



Երեսնամյակ

ԿԻԼԻԿՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ 300 ՏԱՐԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԻՇՈՏԱԿԸ

Հայ եկեղեցու տարեգրության և հայ մշակույթի պատմության մեջ, հոգևոր, եկեղեցական և մշակութային տեսակետներից, Կիլիկյան Հայաստանի «վերածննդյան երեք հարյուր տարիները հանդիսացել են բախտորոշ մի ժամանակաշրջան մեր եկեղեցու և ժողովրդի փոթորկահույզ պատմության ճանապարհի վրա», նշում է Հայոց Հայրապետն Իր հոբելյանական գեղեցկահյուս և բովանդակալից կոնդակում:

Կիլիկիայում, հին ժամանակներից սկսած, այլ ազգերի հետ միասին բնակություն են հաստատել նաև հայերը:

Ալեքսանդրեթի ծոցը հնուց կոչվել է նաև «Հայկական ծոց»:

Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսը (973—992) Ժ դարի վերջին քառորդում Կիլիկիայում կաշք հաստատած հայ գաղթականության համար հոգևոր առաջնորդներ է ձեռնադրում «յամենայն գաւառս այնուսիկ... գկողմամբք արևմտից», ըստ Ժ դարի պատմիչ Ստեփանոս Տարունեցու կամ Ասողիկի վկայության:

ԺԱ դարի կեսերից բուն Հայաստանում սելջուկյան արշավանքների պատճառով երկրում տիրող քաղաքական ու տնտեսական ծանր և դժբախտ պայմանների բերումով, սկսվում է համաժողովրդական արտագաղթի մի մեծ հոսանք դեպի Կիլիկիա, հյուսիսային Ասորիք և Միջագետք:

Ժողովրդի հետ միասին գաղթական է դառնում նաև Հայրապետական Աթոռը Կիլիկիայում, 1065—1441 թվականներին:

Հայ ժողովուրդը ևս, պատմական իր հայրենիքից հալածական, 1080 թվականին Կիլիկիայում, Տավրոսի բարձունքների վրա, կարողացավ հիմնել ազգային պետական մի նոր կենտրոն, Ռուբինյան իշխանությունը, և ապա, 1198 թվականին՝ հայկական թագավորությունը, որն իր գոյությունը պահեց մինչև 1375 թվականը:

Արդարև, հայկական իշխանության հատատումը Կիլիկիայում ու նրա զարգացումը և գոյատևումը շուրջ 300 տարիներ բարդ ու դժվարին պայմաններում, օտարների գնահատմամբ իսկ, հանդիսացել է հայկական մի փառավոր հրաշք, «սրտաշարժ մի դյուցազներգություն», հայ ժողովրդի «ապրելու սրբազան կրքի և նրա ստեղծարար ուժերի», ինչպես հաստատում է Հայոց Հայրապետն Իր հոբելյանական կոնդակում:

ԺԱ դարի վերջերին հայերը արդեն բազմամասնավ մեծ դեր են խաղում Կիլիկիայի տնտեսական և քաղաքական կյանքում:

Կիլիկիայում Ամենայն Հայոց Հայրապետության ջանքերով ու գլխավորությամբ և կիլիկյան հայ իշխանության հովանավորությամբ սկիզբ է առնում ու զարգանում մեր ժողովրդի հոգևոր, եկեղեցական և մշակութային նոր կյանքը՝ իր արտահայտության բոլոր ձևերի մեջ, «ապա վերադառնալու համար իր պատմական հողամասի վրա, նոր վերածննդի տեսիլքով

աուցուն» (Վեհափառ Հայրապետի կոնդակը):

Կիլիկյան Հայաստանում ծաղկող մշակույթի վառ օջախներն էին հանդիսանում դարձյալ հայ վանքերը, բարձրագույն տիպի կրոնական դպրոցները, այդ թվում՝ Շուշրի Կարսի վանքը, Սկևտան, Հոռնկլան, Մեծ Քարի վանքը, Մլինո վանքը, Դրազարկը, Բարձրաբերդը, Ակները, Արքակաղիքը, Սիսը և այլն:

Հայրապետանոցներում և վանքերում բացվել էին մնայուն գրադարաններ: Կիլիկյան Հայաստանը հայ մշակույթի և կրթության ամենափայլուն օջախներն է ունեցել բուն Հայաստանից հետո:

Կիլիկյան շրջանի հայ մշակույթի ընդհանուր ու հիմնական ուղղությունը մնում է դարձյալ կրոնականը, եկեղեցագիտականը, դավանաբանականը, երաժշտականը, ինչպես նաև, ժամանակի չափանիշով՝ փիլիսոփայությունն ու արտաքին գիտությունները:

Կիլիկյան շրջանի հայ մշակույթի վաստակաշատ մշակներն են հանդիսանում մեր անվանի և եռամեծ վարդապետներ Գրիգոր Բ Վկայասերը, Գրիգոր Գ Պանյալունին, ս. Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Գրիգոր Տղան, Սարգիս, Իզնատիոս Շնորհալիները, Վարդան Այգեկցին, միջնադարի մեր մեծ երաժիշտները, գիտնականներն ու մատենագիրները՝ Մկիթար Հերացին, Սմբատ Գունդստաբլը, մեծ արվեստագետներ Սարգիս Պիճակը, Թորոս Ռոսլինը և ուրիշներ:

Կիլիկյան Հայաստանի մեր հոգևոր մշակույթը սնվում էր Արևելյան Հայաստանի մշակութային հին ակունքներից:

Կիլիկյան Հայաստանի վանքերն ու դպրոցները շարունակում են Արևելյան Հայաստանի հոգևոր, մշակութային կենտրոնների ուսումնա-դաստիարակչական, լուսավորական գործը՝ դրանց օրինակով և ոգով սերունդներին հավատարմորեն փոխանցելու նախորդ դարերի հայ քաղաքակրթության նվաճումները, երբ բուն Հայաստանը ոտնակոխ էր եղել թուրք-թաթարական հորդանքերի կրուկների տակ:

Բուն հայրենիքի հետ, սակայն, հոգևոր կապը չէր կտրվել:

Կիլիկյան հայ մշակույթի ակունքները բարձրանում են մինչև Ե դար: Այդ մշակույթը սնվում է, պաշտոնապես՝ բուն Հայաստանի հին մշակույթի զանձերով և նվիրական ավանդույթներով, որոնք շարունակվում են կենդանի մնալ հայկական սպա նոր օջախում, որ Կիլիկյան Հայաստանն էր:

Կիլիկիան, հեռու լինելով հանդերձ Մայր Հայաստանից, չէր կտրվել նրանից: Կիլիկիան չկորցրեց իր ժողովրդի դարավոր ավանդությունները, կենցաղն ու բարքերը, գիրն ու գրականությունը, գիտությունն ու արվեստը: Դրանք պահեցին մեր ժողովուրդը որպես ոգեկան ամբողջություն:

Կիլիկիան, որպես անբաժանելի մի մասը Հայաստանի, շարունակեց, սակայն, պահպանել ու զարգացնել հայ մշակույթը իր տեղական առանձնահատկություններով ու պայմաններով և այն հավատարմորեն հանձնեց հայ նոր սերունդներին:

Կիլիկյան Հայաստանի մշակույթն իր պատմական ու գեղարվեստական նշանակությամբ մեծ ազդեցություն գործեց հետագա դարերի մեր մշակույթի զարգացման վրա:

Միջեկեղեցական հայ-հույն և հայ-կաթոլիկ հարաբերություններում հայ դավանաբանական միտքը, մանավանդ Շնորհալու մոտ, մի նոր բարձունքի է հասնում: Շնորհալին փաստորեն դարձավ իր մատենագրական հարուստ ու բազմաթվանդակ վաստակով հայ մշակույթի կիլիկյան շրջանի ամենապայծառ դեմքը:

Շնորհալին նույնիսկ մեր եկեղեցական ծիսապաշտության հարցում ձգտել է Կիլիկիայում վերականգնել բուն Հայաստանի վանքերի հնագույն ժամապատկերը՝ լավագույն ավանդությունները և հայ եկեղեցիներում հասարակաց աղոթքն ու ժամերգությունը բարեկարգելու և նրան միաձելություն տալու քարի ցանկությամբ, Հայաստանի Մաքենոցաց և Թեղենոցաց «հրուշակաւոր և աստուածաբանկ, հրեշտակակոծ» վարդապետների վանքերից հատկապես քերել է տվել Հոռնկլա եկեղեցական ժամերգության հաստատուն և վավերական կանոնները՝ «Ժամատեղեաց խրատք» անունով: Ըստ Շնորհալու, բուն Հայաստանի վարդապետներն ու վանքերն էին հայրենիքի, հայ եկեղեցու և մշակույթի **«Հիմն հաստատութեան մեր»:**

Կիլիկյան Հայաստանում հայ մշակույթի զարգացման ճանապարհի վրա նոր նվաճումներ է կատարում մանավանդ օրենսգիտական հայ միտքը:

Կիլիկյան շրջանում աննախընթաց ծաղկում են ապրում նաև հայ արվեստը, մանավանդ հայ գրչության արվեստը, մանրանկարչությունն ու ճարտարապետությունը:

Կիլիկյան Հայաստանում մեծ ուշադրություն են դարձնում նաև ժողովրդական կրթությանն ու դաստիարակությանը: Կիլիկյան հայկական իշխանությունները ևս

քաջալերում են ու հովանավորում կրթության և լուսավորության գործը: Մի շարք վանքերի ու դպրոցների դասատուները նշանակվում են իշխանության կողմից, և պետությունն է վճարում նրանց ամսականները. «Է այժմ կարգեալ դասատու ի Լևոնէ երկրորդէ... և կամ թագադրէն և պալլէն Օշինի՝ տեսուն Կոռիկոսայ»:

Կիլիկյան Հայաստանի մեր տարեգրությունների և եկեղեցական մատենագրության մեջ մնացել են հազարավոր հիշատակարաններ, որոնք պերճախոս վկաներն են կիլիկյան շրջանի մեր մատենագիրների, դավանաբանների, գիտնականների, արվեստագետների ստեղծած քաղաքական-դասկ և հարուստ մշակույթի:

Կիլիկիայում հաստատված հայկական նոր իշխանությունը հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած քաղաքական խոշոր իրադարձությունն է հանդիսանում՝ իր պետական կառուցվածքով, պետական օրենսդրությամբ և վարչական կազմակերպվածությամբ, որպես հայության երկրորդ հայրենիքը, ուր և հաստատվեց ժամանակավորապես հայ եկեղեցու գերագույն կենտրոնը՝ Հայրապետական Աթոռը, և որը դարձավ միջնադարյան հայ մշակույթի խոշորագույն օջախը:

«Երեք հարյուր և ալեկի տարիների կենսունակ գոյատևմամբ, հերոսական մարտընչումներով և հոգևոր մեծարժեք իրագործումներով», ինչպես հաստատում է Հայոց Հայրապետը, Ե դարի «ոսկեդարից ութ հարյուր տարիներ հետո՝ արձաթա դարով» կիլիկյան շրջանի մեր մատենագիրներն ու գիտնականները կոթողեցին «հայ եկեղեցու և մշակույթի երկրորդ պուրը: Եվ այդ պուրների վրա է հենվել և հենվում է հայ ոգեկանության բոլոր ժամանակների հաղթական կամարը»:

1375 թվականին վերջ գտավ հայկական, համակիլիկյան թագավորությունը և հայ ժողովրդի համար թե՛ Կիլիկիայում և թե՛ բուն Հայաստանում ստեղծվեցին քաղաքական, տնտեսական ծանր պայմաններ, մրդապանջալին իրադրություններ:

Հայ ժողովրդի սրտում, սակայն, երբեք չմեռան դարձյալ՝ քաղաքական անկախության հասնելու նրա պայծառ երազը, հայրենիքը ազատագրված տեսնելու ձգտումն ու անկյուրումն հավատքը:

1166 թվականին ս. Ներսես Շնորհալին Հոմսկյայի Հայրապետանոցում, «օձերի, կարիճների և գազանների» մեջ նստած, աչլազգի բռնակալներով շրջապատված, «իբրև գայձեամն յորտրդաց և ի շանց փախուցեալք ի քարանձախս բնակեալ», քաջ

քաջ հուսացյալ հոգով աղոթում էր, որ կգա երջանիկ օրը, երբ Աստված կիրկի Կիլիկիայում ապրող հայ ժողովուրդը «ի բերանոյ առիժուց» և ողջ հայությունը կվերադարձնի դարձյալ «յաշխարհն հայրենիս, յարուցանել թագաւոր արդար և իշխանս...»:

Ստեփանոս արքեպ. Օրբելյանը 1300 թվականին գրած իր «Ռիբ ի դիմաց կաթողիկէին» (Էջմիածին) աշխատության մեջ արտահայտում էր Արևելյան Հայաստանի ժողովրդի հայրենասիրական ցանկությունը, որ ցրված հայությունը կրկին համախմբվի իր մայր հայրենիքում՝ Հայաստանում, և Վաղարշապատը նորից դառնա հայության և՛ հոգևոր, և՛ եկեղեցական, և՛ քաղաքական կենտրոնը:

Հայրենասիրական միշտ ու արդար այս կոտակի, այս ժառանգության հետապնդումն ու իրագործումը 1441 թվականին շարունակեցին Հայրապետական Աթոռն իր պատմական, բնիկ վայրը՝ Վաղարշապատ վերադարձնելուց հետո, հայրենամեկեր հոգևորական թե աշխարհական մեր բոլոր գործիչները:

Իսկ 600 տարի «մեր հավատավոր ու արիական ժողովուրդը, իր պատմության կիլիկյան փառքի հիշատակը իր սրտում ամուր ծրարած, արթուն գիտակցությամբ սպասել է «Յուսոյ դռների» առաջ», նշում է արդարորեն Հայոց Հայրապետը իր հոբելյանական պատմական կոնդակում:

Կիլիկյան իշխանության անկումից հետո, 600 տարիների գերությունից, նահատակություններից և ազատագրական հերոսական մարտնչումներից հետո, վերջապես հայ ժողովրդի համար քացվեցին «Յուսոյ դռները» Սարդարապատով և 1920 թվականի Նոյեմբերյան այգաբացով, «մեր ժամանակաշրջանում, մեր մայր հողամասի վրա, արդի մեր պերճ Հայաստանի ծնունդով, եղբայրացած ժողովուրդների մեծ ընտանիքում, խաղաղության, անվտանգության ու աննախընթաց հառաջադիմության պայմանների մեջ», հաստատում է Հայոց Հայրապետը իր հոբելյանական կոնդակում:

Կիլիկյան շրջանի Ամենայն Հայոց Հայրապետության և հայ մշակույթի 300 տարիների հիշատակի ոգեկոչման այս պատմական ու սրտատուչ առիթով, որպես եկեղեցի և ժողովուրդ, մի անգամ ևս երախտագիտությամբ և հպարտությամբ գլուխ ենք խոնարհում մեր եռամեծ հայրապետների, վարդապետների, հայ գիտնականների և արվեստագետների, ինչպես նաև կիլիկյան պետական, խնամախոս, հայրե-

նանկեր քաչ գործիչների, հոգևոր, եկեղեցական, մշակութային, հայրենասիրական փառավոր և անկրկնելի ժառանգության տալու:

Փա՛ղք հայ ոգեկանության այն եղամեծ նարտարապետներին, որոնք կերտեցին կիլիկյան շրջանի հայ մշակույթը, մշակույթ,

որը, Վեհափառ Հայրապետի զեղեցիկ բնութագրումով, «կամրջել է մեր թվարկության հալոց սրտմտության առաջին հազարամյակը և հետագա դարերի զարթոնքի ու ապա մերօրյա վերածնունդի դարաշրջանը»:

Ա. Հ.





ԿԻԼԻԿՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ
300-ԱՄՅԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության և մեր մշակութային ժառանգության մեջ իր ուրույն և կարևոր տեղն ունի կիլիկյան շրջանի պատմությունն ու մշակույթը:

Մարդկության պատմության հազարամյակների ընթացքում եզակի դեպք է, երբ մի ժողովուրդ պետականություն և փառավոր մշակույթ է ստեղծում իր հայրենիքից դուրս՝ օտարության մեջ, և ավելին, օտար այդ հողին հայրենի հողի ու շունչ է հաղորդում ու դարձնում մի նոր հայրենիք:

Հայ պատմագրության մեջ 1375 թվականն ընդունված է որպես Կիլիկյան հայ թագավորության վախճանի թվական: Այս տարի, 1975 թ., լրացավ այդ վախճանի 600 տարին:

Կիլիկյան 300-ամյա շրջանը ոչ միայն հայ ժողովրդի պատմության, այլ նաև հայ եկեղեցու և հայ մշակույթի փայլուն ու լուսավոր էջերից մեկն է:

Ելնելով այս ամենից, Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոսը 1974 թ. մարտ 18 հմբ. 767 սրբատառ կոնդակով, Ամենայն Հայոց Հայրապետության Կիլիկյան շրջանի պատմության փառքի հիշատակը ոգևորչելու առթիվ, 1975 թ. հաշտարարում է հոբելյանական տարի:

Կիլիկյան շրջանի փառքի հիշատակն ըստ արժանիւնն ոգևորչելու համար Նո-

րին Սրբությունն իր գեղեցկահյուս կոնդակում պատվիրում է:

«... Այս մեր կոնդակա, հրաւեր ենք կարդում որ 1975 տարին նուիրուի հայ եկեղեցու և Ամենայն Հայոց Հայրապետության կիլիկեան շրջանի յիշատակին, որ Հայաստանայց բոլոր եկեղեցիներում տեղի ունենան զոհաբանական մատթանքի արարողութիւններ, ու կենդանի խօսքով ոգեկոչուեն մանաւանդ այն մեծանուն հայրապետներն ու վարդապետները, հոգևոր մշակներն ու գիտութեան և արուեստի վարպետները, որոնք կերտել են հայ ոգևորչութեան արծաթեայ դարը: Զերմապէս յանձնարարում ենք, որ այս նուիրական յիշատակի պանծացմանը մասնակցեն նաև մեր եկեղեցական-մշակութային կազմակերպութիւնները և հայ մամուլը, կիլիկեան շրջանի հոգևոր մշակութի արժէքները լայնօրէն ծանօթացնելու համար հայ նոր սերնդին և ալլազգի ժողովուրդներին, հալերէն և օտար լեզուներով հրատարակութիւններով»:

Վեհափառ Հայրապետի այս հրահանգի համաձայն, ս/թ. դեկտեմբերի 14-ին, կիրակի օրը, Մայր Աթոռում էլ հանդիսավորապես ոգևորչվում է կիլիկյան շրջանի հայ եկեղեցու և հայ մշակույթի հիշատակը՝ տաախոյան ս. պատարագով, հայրապետական կոնդակի ընթերցումով և բարոգով, և երեկոյան՝ հանդիսավոր նիստով Վեհաբանի հանդիսությունների դանիմում:

**Հանդիսավոր ա. պատարագ,
հայրապետական կոնդակի ընթերցում և
քարոզ Մայր տաճարում**

Դեկտեմբերի 14-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում մատուցվում է հանդիսավոր ա. պատարագ: Պատարագում է տ. Թորգոմ արք. Մուշեղյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Հրաշափառ Աստուած» շարականի երգեցողությանը, տաճարի զանգերի դողանջների ներքո, բուրվառով և մոմերի լույսերի առաջնորդությամբ տ. Մասիս վրդ. Գալստյանը ա. խորան է քարձրացնում Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը՝ արծաթյա սկուտեղի վրա դրված, և հանձնում պատարագի հայր սուրբին:

Տ. Թորգոմ արք. Մուշեղյանը երկյուղածությամբ վերցնում է հայրապետական կոնդակը և ընթերցում ա. խորանից՝ ժողովրդին:

Այնուհետև օրվա հանդիսավոր աղիթով քարոզ է խոսում պատարագի հայր սուրբը՝ «Երբ որ բացվին դռներն հուսո» բնաբանով, և ընդհանուր գծերով հավատացյալ ժողովրդին ներկայացնում կիլիկյան շրջանի հայ ժողովրդի և եկեղեցու պատմությունը, ինչպես նաև անդրադառնում այդ շրջանում ստեղծված հայկական մշակույթին՝ նշելով այդ ամենի կարևորությունը այսօրվա վերածնունդ ապրող հայ ժողովրդի, հայ եկեղեցու և հայ մշակույթի համար:

Ա. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

**Հորեյանական հանդիսավոր նիստ
Վեհաբանում**

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Վեհաբանի հանդիսությունների դահլիճում, բարձր նախագահությամբ **Ամենայն Հայոց Վահափառ Հայրապետի**, տեղի է ունենում հորեյանական հանդիսություն՝ նվիրված կիլիկյան շրջանի Ամենայն Հայոց Հայրապետության և հայ մշակույթի 300-ամյա պատմության ոգեկոչմանը:

Հանդիսությանը ներկա են լինում Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, թեմակալ առաջնորդներ, մայրավանքի պաշտոնեյուրներ, հոգևոր ճեմարանի դասախոսությունը և ուսանողությունը:

Հանդիսությանը ներկա են լինում նաև շուրջ 300 հրավիրյալներ, այդ թվում՝ մտավորականներ, արվեստագետներ՝ Երևանի

զանազան գիտական և մշակութային հիմնարկներից:

Նույն հորեյանական հանդիսությանը ներկա է լինում նաև Հայկական ՍՍՀ Միհրաթյանների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը**:

Հանդիսությունը սկսվում է Սովետական Հայաստանի պետական հիմնի նվագով:

Այնուհետև հանդիսությանը ժամանակ կիլիկյան շրջանի փառքի հիշատակին նվիրված բացման խոսքով հանդես է գալիս Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Մայր տաճարի լուսարարապետ տ. **Հուսիկ եպս. Սանթրույանը**:

Հանդեսի բացումից հետո ընթերցվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը՝ 1975 թվականը հորեյանական տարի հայտարարելու և Ամենայն Հայոց Հայրապետության կիլիկյան շրջանի պատմության փառքի հիշատակը ոգեկոչելու առթիվ (սույն կոնդակը տպագրվել է «Էմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3): Վեհափառ Հայրապետի կոնդակն ընթերցում է տ. **Թորգոմ արք. Մուշեղյանը**:

Այնուհետև ամբիոն է հրավիրվում օրվա գլխավոր բանախոսը՝ բանասիրական գիտությունների դոկտոր **Գևորգ Աբգարյանը**:

Հարգելի բանախոսն իր խոսքի սկզբում ասում է. «Կիլիկիան» անանցանկի լեռների կրճին բացված այդ բերրի երկիրը, հին հոռմեական ժամանակներում հաշտի էր որպես ավազակների և ծովահների ապաստարան և անհամբեր սպասում էր իր վատ անունը վերջապես թոթափելու և բարի համբավի արժանանալու բախտավոր աղիթին: Այդ աղիթը ներկայացավ մեր թվականության 11—14-րդ դարերում, երբ այստեղ հայտնվեց հեռուներից եկած մի շինարար ժողովուրդ, որը շուրջ 300 տարի անընդհատ իր բարձր մշակույթով փառք ու պատիվ էր բերելու Միջերկրականի կապույտ ջրերով ողողվող ափերին»:

Այնուհետև բանախոսն, արձանագրելով կիլիկյան շրջանի հայ փառավոր ու ծաղկուն մշակույթը, տալիս է այդ մշակույթի ստեղծման ամենահաստատուն հիմքը, օտար հողում մշակույթ ստեղծելու համար ամենակարևոր գրավականը. «Որ հայերը ոսկեհոտ մշակույթ ստեղծեցին՝ զարմաճալի չէր, որովհետև ունեին ստեղծելու դարավոր փորձ: Բայց որ այդ փորձը հրաբուխաբան կիրառելու նաև օտար հողում դա գերազանցում էր բոլոր սպասելիքները: Փախուստ Բուզանդին դարեցար կարդացած ժողովուրդը սովորել էր միայն

հայրենի հողին վատահեղուն, միայն հայրենի հողից բարիքներ ակնկալելուն: Բոլորս էլ հիշում ենք Փալատոսի պատմածն այն մասին, թե ինչպես հայոց Արշակ թագավորը Պարսկաստանում արգելված ժամանակ իրեն առյուծի պես էր զգում միայն այն ժամանակ, երբ քայլում էր Հայաստանից ոտտեքի քարավանով Պարսկաստան տարված հողի վրա: Բայց բավական է, որ նա իջնեք այդ հողից՝ այլևս ուժերը լքում էին նրան: Արքան կորցնում էր իրեն: Ուրեմն ինչպես պատահեց, որ հայրենի հողին տվոր և այդ հողից կտրված մի ժողովուրդ Կիլիկիայում չկորցրեց իրեն, ընդհակառակը, ավելի գորացավ, ավելի բարձրացավ: Մի՞թե ոտտեքի քարավաններն այս անգամ էլ հայոց հողը Կիլիկիա էին տարել: Բայց այդքան հող տանել չէր լինի: Բացի այդ, հողը հայրենիքում արդեն այնքան էր բզկտված, որ մանավանդ օտարության մեջ այլևս չէր կարող դիմանալ նորանոր փորձությունների: Ուրեմն պետք է մտածել, որ ժողովուրդն իր հետ Կիլիկիա է տարել հողից էլ ավելի գորավոր մի բան, որը օտար երկրի տակ ոչ միայն ապրեցրել, այլև վերածնունդի ուժ է հատրդել ժողովրդին: Այդ գորավոր ուժը նրա կրծքի տակ բարաված ազգային մշտադրուն ոգին էր: Առանց այդ ոգու, միայն հողը առհասարակ անգոր է հրաշքներ գործելու: Մոսկ հողին ապավինելով չես հարստեփ:

Այնուհետև բանախոսը հանգամանորեն անդրադառնում է այն կարևոր ջանքերին, որ գործ են դրել Կիլիկյան շրջանի հայ մշակույթի մեծ վատակավորները ազգապահպանման սրբազան գործին ի սպաս:

Խոսելով հայացած Կիլիկիայում զարգացած բժշկության մասին, բանախոսը նշում է հետևյալը. «Ժամանակի մեծագույն հայ բժշկապետը, միջնադարյան հայ բժշկության փառքը՝ Մխիթար Հերացին, տիրապետում էր արաբերենին, պարսկերենին և գիտեր, որ իր ժամանակի նշանավոր բժիշկները արևելյան մյուս երկրներում իրենց գրքերը գրում են մեծ մասամբ արաբերեն, որովհետև արաբերենը բժշկության ընդհանուր լեզուն էր Արևելքում, ինչպես որ լատիներենը՝ Արևմուտքում: Արաբերեն չգրելը օտարի աչքում կարող էր նույնիսկ նվաստացուցիչ թվալ, բայց Մխիթար Հերացին չենթարկվեց սուտ փառքին և իր անմահ բժշկարանը գրեց հայերեն: Ըստ որում՝ նա գրեց ոչ թե գրաբար, այլ ժամանակի աշխարհաբար, հասկանալի լեզվով: Եվ նա այդպես վարվեց ժամանակի հայոց կաթողիկոս Գրիգոր Տղայի (1173—1193) խորհրդով»:

Կիլիկյան հայկական թագավորության շրջանում մեծ զարգացում է ապրում նաև հայ օրենսգիտությունը, հիմնականում նշանավոր իրավաբան և մեծ պետական գործիչ Սմբատ ապարապետի աշխատություններով: Որովհետև «եթե բժշկաբանները ժողովրդին շատ պետքական գրքեր էին առողջապահության բնագավառում, ապա պակաս կարևոր չէին նաև բնակչության կարգ ու կանոնի վերաբերող օրենսգրքերը: Եվ Կիլիկյան մշակույթի առաջընթացն այս բնագավառում նույնպես նշանավորվեց ժողովրդի խոսակցական լեզվով գրված «Դատաստանագրքով», որի հեղինակն էր Կիլիկիայի հայկական գործերի հրահանատար Սմբատ ապարապետը կամ Սմբատ Գունդատաբլը: Նա այնքան էր զբաղված պետական և ռազմական գործերով, որ թվում է, թե ժամանակ չպետք է գտներ նույնիսկ իր այդ գործերը լրիվ կատարելու համար, այնինչ նա թողել է և՛ իրավաբանական, և՛ պատմագրական, և՛ թարգմանական հարուստ ժառանգություն: Նա է, որ հին ֆրանսերենից թարգմանեց և սերունդներին հասցրեց «Անգիսթ Անտիոքա» կոչվող իրավաբանական հուշարձանը, որի բնագիրը մինչև օրս էլ կորած է»:

Ապա հարգելի բանախոսը նշում է, որ իրավաբանական ասպարեզին մեծ ծառայություն է մատուցել նաև հայ նշանավոր հոգևորական Ներսես արքեպի. Լամբրոնացին իր մի բանի իրավաբանական հուշարձանների թարգմանությամբ՝ հունարենից և լատիներենից՝ հայերենի:

Կիլիկյան շրջանի հայ նշանավոր դեմքերից է ս. Ներսես Շնորհալին, որի անունը հավերժորեն սրբություն է դարձել հայ ամեն մի սերնդի համար: Խոսելով ս. Ներսես Շնորհալու մասին, բանախոսն ասում է. «Կիլիկյան մշակույթն իր զարգացման ամենաբարձր կատարներին հասավ Ներսես Շնորհալու երկերում: Շնորհալին հսկա էր, բանաստեղծ, երաժիշտ, հրապարակախոս, գիտնական, կաթողիկոս, ուսուցիչ և այլն»: Ս. Ներսես Շնորհալու ստեղծագործություններից միանգամայն զգացվում է, որ «Կիլիկյան մշակույթի բոլոր բնագավառներում առաջին տեղը հատկացված էր ազգային ավանդությունների պահպանմանը, որոնց միջոցով էլ պահպանվելու էր օտար հողերում իջևանած ժողովուրդը... Շնորհալին Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հիմուն վրա գրել է բնդարձակ մի պոեմ («Վիպասանություն»), որի նպատակն է եղել դարձյալ ժողովրդի (և, իհարկե, ոչ միայն

կիլիկեցի ժողովրդի) հիշողության մեջ մեր մեծ նախնիների հիշատակը արթնացնելը.

«Հայց Մեսրոպայ շրջագայեալ,
Զամենեւեան լուսաւորեալ,
Վրաց ու Աղուանից գիր քատեղծեալ»:

Նույնիսկ «Ողբ Եղեսիոյ» կոչվող պոեմում, որը Շնորհալու չափածո երկերի պատկան է, և որի մեջ, թվում է, հին հայոց պատմությունները հիշատակելու առիթը չպիտի ներկայանար, Շնորհալին գտել է այդ առիթը: Նրա արագաթիչ միտքը Եղեսիայից սուրում-հասնում է Հայաստան, գալիս-մտնում է հենց այն քաղաքը, որտեղ այժմ մենք ձեզ հետ միասին հաղթարկած լսում ենք Շնորհալու մասին.

«Ո՛ր եմ գահոյք թագաւորի,
Վարչաշուկաւ քո քաղաքի,
Ո՛ր նախարարք մեծ արքայի
Այրարատեանն գաւառի...»:

Բանաստեղծն այնուհետև տեղափոխվում է Շիրակ, Բագրատունյաց մայրաքաղաք Անի.

«Արևելեան քաղաքդ Անի...
Մերձաւորաց յոյժ ցանկալի,
Հեռաւորաց փափաքելի,
Շինեալ եղեր տուն արքունի...
Թագաւորաց Բագրատունի...»:

Այնուհետև դուրս. Գևորգ Աբգարյանն իր բանաստեղծության մեջ արձանագրում է այն իրողությունը, որ կիլիկյան շրջանի Ամենայն Հայոց Հայրապետությունն իր շուրջն էր համախմբում բազմաթիվ հայ և օտար մշակույթի գործիչներ, և որ կիլիկյան շրջանի հայ մշակույթի օրրանը հիմնականում հայոց կաթողիկոսարանն է հանդիսանում: Այս առթիվ բանաստեղծը նշում է հետևյալ փաստը. «Կոստանդին Ա. Բարձրաբերդի կաթողիկոսի օրոք ասորի գիտնական Իշոխր Կիլիկիայում օգնեց, որպեսզի հայ պատմիչ Վարդան Արևելցին ասորերենից հայերենի թարգմաներ Միխայել Ասորու «Ժամանակագրությունը»: Միխայել Ասորին բարեկամական սերտ կապերի մեջ էր Ներսես Շնորհալու հետ և շատ հաշտեր մի ասորի եկեղեցական բարձրագույն պաշտոնյա: Նրա գիրքը գիտական շրջանառության մեջ է մտել առաջին անգամ Վարդան Արևելցու թարգմանության միջոցով: Վարդանի ձեռքին 13-րդ դարում գտնված ասորերեն բնագիրը երկար ժամանակ կորած էր և հայտնաբերվեց ու

հրատարակվեց միայն 1904 թվականին: Մինչ այդ ասորերեն բնագիրն փոխարինում էր հայերեն թարգմանությունը, որից կատարված վկայակոչություններ այսօր կարելի է գտնել աշխարհի տարբեր երկրներում ապրած ու գործած պատմաբանների գրքերում»:

Այնուհետև բանաստեղծը, անդրադառնալով թարգմանական գրականությանը, ասում է. «Առհասարակ կիլիկյան գրավոր մշակույթի հիմնական բնագավառներից մեկը թարգմանական գրականության բնագավառն էր: Գրիգոր Վկայասեր կաթողիկոսին (1066—1105) կարելի է համարել կիլիկյան շրջանի հայ թարգմանական գրականության նախադեմը, որը Վկայասեր մականունն ստացել է հենց վկայաբանական գրականության բազմաթիվ նմուշներ թարգմանելու համար: Առհասարակ Կիլիկիայում ծավալված թարգմանական աշխատանքներից կարելի է ստանալ այն տպավորությունը, թե մեր գրասեր նախնիները Կիլիկիայի բարձր լեռներում իրենց կառուցած մի ամենատես դիտակետից հետևել են տարբեր ժողովուրդների գրական կյանքին և որոնել ու բացահայտել են այն ամենը, ինչ արժանի է դուրս գալ ազգային սահմաններից և մտնել համամարդկային մշակույթի գանձարանը: Երբեմն բնիկ երկրներում դեռ չեն հասցրել այս կամ այն երկր լրիվ ավարտել, և հանկարծ Հայաստանում գտնում ենք այդ երկերի նախնական տարբերակների թարգմանությունները: Այսպես, օրինակ, միջնադարյան ռուսները դեռևս նոր էին գիր ու գրականություն ստեղծել, նոր էին գրի առնում իրենց անդրանիկ վկայաբանական գիրքը՝ «Բորիսի և Գլեբի պատմությունը», և հանկարծ հայերն այդ մասին իմանում են և շտապում Կիև՝ հայթայթելու համապատասխան ձեռագրեր, և դեռևս 13-րդ դարում թարգմանում հիշյալ երկը: Այդպիսի արագությամբ թարգմանվեց նաև 10-րդ դարում Բյուզանդիայում կազմված գյուղատնտեսական հանրագիտարանը՝ «Գիտություն»-ն, որը հայ մատենագրության մեջ հայտնի է «Գիրք Վաստակոց» անվամբ»:

Խոսելով Ներսես արքեպ. Լամբրոնացու մասին, բանաստեղծը նշում է. «Մենք այսօր առիթը կօգտագործենք խոսելու համար Լամբրոնացու՝ հայ հրապարակախոսական գրականությանը փառք ու պատիվ բերած մի պայծառ հեղինակի մասին: Լամբրոնացու երկերի գլուխ-գործոցը՝ հուշակալոր «Ատենաբանություն»-ը, դեռևս 141 տարի առաջ, 1834 թ., թարգմանվել է գերմաներենի և տպագրվել Լայպցիգում: Այն 1865

թ. թարգմանվել է նաև ռուսերեն: Լամբրոնացու փառքը իր ժամանակին տարածված էր նաև Եվրոպայում: Կիլիկյան պետությունն այդ եվրոպականորեն զարգացած մտավորականին էր գործողում ամենապատասխանատու դիվանագիտական առաքելությունների: «Ատենաքանության» ռուսերեն թարգմանության առաջաքանում նշանավոր հայագետ Մկրտիչ Էմինը գրում է. «Ներսեսը... մտքի խորությամբ, խոսքով, պայծառ հայացքով, դարի ու ցեղի նախապաշարմունքներով չմթազնված՝ խառնում է բարձր, իր ժամանակներից վեր»: «Ատենաքանության» գերմաներեն թարգմանության հեղինակ Կարլ Ֆրիդրիխ Նոյեմերը գրել է. «12-րդ դարի բոլոր գերագույն մարդկանց մեջ փայլելով բարձրանում էր Ներսես Լամբրոնացին, ինչպես իր լայնարձակ գիտականությամբ, այնպես էլ խոսքի սրությամբ, ուժով և կրակով... Եվ հիրավի, նրա Ատենաքանությունը պատկանում է այն ամենահռչակավոր հրապարակախոսությունների շարքին, որոնք երբևէ արտասանվել են»:

Իր բանախոսության ավարտին դուրս. Գևորգ Արքայանն ասում է. «Ամեն անգամ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան մոնեխի նայում եմ շքամտքի երկու կողմերում բարձրացող վեց արձաններին և ափսոսանքով նկատում, որ Մատենադարանի շենքը անվերջանալի չէ և հնարավոր չէ նրա շքամտքի մոտ կանգնեցնել հայ մշակույթի բոլոր մեծերի արձանները: Ես կուզեի այդ արձանների շարքում տեսնել նաև Լամբրոնացու, նրանից առաջ՝ Ծնորհալու, Մխիթար Հերացու և Կիլիկյան մշակույթի մյուս ներկայացուցիչների արձանները: Այդ ներկայացուցիչներից միայն քչերին ես կարողացա այսօր հիշատակել: Ժամանակ չմնաց հիշատակելու պատմագրության, փիլիսոփայության, ձեռագրական արվեստի, ստակագրության, դավանաբանության, երաժշտության, թատրոնի և այլ բնագավառներում Կիլիկյան հայերի ստեղծած կոթողները: Անհիշատակ թողեցի նույնիսկ այնպիսի մի բնագավառ, ինչպիսին է Կիլիկյան ճարտարապետությունը: Բայց ճարտարապետության վերաբերյալ ինչ կարող ես ասել, երբ ունես այն գիտակցությունը, որ այդ հուշարձանների մասին պատկերացում հաղորդելու լավագույն միջոցը հենց հուշարձանները տեսնելն է: Եիշտ է, այդ հուշարձաններից այժմ պատմական Կիլիկիայի տարածքում մնա-

ցել են միայն ավերակներ, բայց ավերակներն էլ կարող են պատմել իրենց անցյալի մասին»:

Բանախոսության ավարտին հայտարարվում է ընդմիջում:

Տասնհինգ րոպե դադարից հետո սկսվում է հանդիսության գեղարվեստական բաժինը:

Ելույթ է ունենում հայկական հանրապետության վաստակավոր արտիստ **Ռուբեն Մաթևոսյանը՝** կատարելով Անտոն Մայիլյանի «Ինձ մի խնդրիր», Կոմիտաս վարդապետի «Ողբերգ» և Հովհաննես Փարազանյանի մշակումով՝ «Ախ տվեք ինձ քաղցր մի քուն» երգերը՝ դաշնամորի նվագակցությամբ վաստակավոր արտիստ **Հովհաննես Փարազանյանի:**


Ապա ելույթ է ունենում հայկական հանրապետության ժողովրդական արտիստ **Միհրան Երկաթը**, որն իրեն հատուկ տաղանդով կատարում է Մակար Ելմայանի «Լոնգ...», Ռոմանոս Մելիքյանի «Վարդը» և Կոմիտաս վարդապետի «Հայաստան» երգերը՝ դաշնամորի նվագակցությամբ **Էռնա Գրիգորյանի:**

Այնուհետև ելույթ է ունենում հայկական հանրապետության վաստակավոր արտիստուհի, ասմունքող **Սիրվադ Մեսրոպյանը:** Տաղանդավոր արտիստուհին մեծ ապրումով արտասանում է երկու գործ՝ հատկաճաբար զուգակցված ս. Ներսես Ծնորհալու և ս. Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններից:

Վերջում ելույթ է ունենում **Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախումբը՝** գեղարվեստական ղեկավարությամբ գլխավոր դիրիժոր, հայկական հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ **Էմմա Ծատուրյանի:** Երգչախումբը հմտությամբ կատարում է ս. Մեսրոպ Մաշտոցի «Ողորմես ինձ Աստուած», Ստեփանոս Սյունեցու «Օգնական ընդունելի եղև», «Տէր, զլուր քո լուայ», ս. Ներսես Ծնորհալու «Հայր երկնաոր», «Համեմայնի օրհնեալ ես Տէր», «Առաւօտ լուսոյ», Տիգրան Մանուրյանի «Հայր մեր» (խոսք՝ Կոստան Զարյանի) և Կոմիտաս վարդապետի «Ով մեծաքանկ» երգերը:

Ժամը 20-ին հրավիրչալները հրաժեշտ են ասում Մայր Աթոռ ս. Էջմիածնից՝ Կիլիկյան հայ մշակույթի ներշնչանքի ներքո, մեծ բավականություն ստացած:

ԵԶՆԻԿ ԱՅԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Գեկտեմբերի 7-ին, կիրակի.—Գ կիրակի Յիսնակաց.

Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ ապաշխարության ա. խորհրդի մասին քարոզում տ. Տիրան արդ. Կյուրեղյանը:

Ա. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

• •

Գեկտեմբերի 12-ին, ուրբաթ.—Այսօր Վեհաբանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում ընդունվում է, ստորագրվում և հրաժարականը Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական և Մոսկվայի հայոց հովվության պարտականություններից: Գերագույն հոգևոր խորհուրդը Մոսկվայի ա. Հարության եկեղեցու առժամյա հոգևոր հովիվ է նշանակում տ. Անանիա վրդ. Արաքաջյանին:

Գեկտեմբերի 14-ին, կիրակի.—Այսօր Մոսկվա մեկնեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը՝ հանուն Վեհափառ Հայրապետի ներկա լինելու Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի «Հայրենիք» համամիութենական հոգ կազմակերպության հիմնադիր ժողովին:

Տ. Կոմիտաս սրբազանը Մայր Աթոռ Վերադարձավ դեկտեմբերի 16-ին:

• •

Գեկտեմբերի 20-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում մրցույթի երեկո՝ հոգևոր ճեմարանի ուսանողների մասնակցությամբ:

Սույն երեկոյին ներկա է լինում նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Երեկոն, որ կազմակերպել էր Մայր Ա-

բոլոր միաբան տ. Թորգոմ արդ. Մուշեղյանը, անցնում է շատ հետաքրքիր մեկնություն:

Երեկոյի ավարտին քննող հանձնախումբը, բաղկացած հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանից, հոգևոր ճեմարանի դասախոսներ պրն. Արթուր Հատիսյանից և պրն. Սամվել Անթոնյանից, բաջալերական նվերներ է հանձնում հետևյալ ուսանողներին:

«Ծղնավորը» թեմայով ինքնուրույն բանաստեղծության համար՝

Ա. մրցանակ՝ Լևոն Բաղդասարյանին (Բ լսարան):

Բ. մրցանակ՝ Արս Եղևյանին (Գ. դասարան):

Ազատ, ինքնուրույն բանաստեղծության համար՝

Ա. մրցանակ՝ Գագիկ Գալաճյանին (Բ դասարան):

Բ. մրցանակ՝ Տիգրան Սահրադյանին (Գ դասարան):

Հատված Նարեկացուց, պարտադիր արտասանության համար՝

Ա. մրցանակ՝ Ալեոխա Քենտերջյանին (Ա դասարան):

Ազատ արտասանության համար՝

Ա. մրցանակ՝ Ստեփան Դավթյանին (Բ դասարան):

Բ. մրցանակ՝ Վաչագան Ալեոխյանին (Գ դասարան):

Քննող հանձնաժողովը պարգևատրում է նաև Բ լսարանի ուսանող Կիրակոս Հովհաննիսյանին՝ ինքնուրույն երաժշտական ըստեղծագործությունների համար («Հալիական պար», «Հալիական սյուիտ»):

Վերջում հոգևոր ճեմարանի ուսանողությանն ողոված օրհնության և գնահատանքի խոսք է ասում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 21-ին, կիրակի.—Ե կիրակի Յիսնակաց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում տ. Եզնիկ արդ. Պետրոսյանը օրվա

Ալեառարանի՝ փառիսեցու և մարտավորի սուսկի քարոզական նշանակության մասին:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 22-ին, կիրակի.—Այսօր հոգևոր ճեմարանում սկսվեցին 1975—1976 ուսումնական տարեշրջանի կիսամյա բանավոր և գրավոր քննությունները, որոնք ավարտվեցին դեկտեմբերի 31-ին, չորեքշաբթի օրը:

*
* *

Դեկտեմբերի 26-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում տ. Արսեն Խաչ. Բերբերյանը և պրն. Պարզև Ծախազյանը զեկուցեցին Նայրոբիում գումարված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Ե համագումարի մասին:

«Էջմիածին» ամսագրի հաջորդ համալրում հանգամանորեն ընթերցողների ուշադրությանը կներկայացվեն Եկեղեցիների համաշխարհային խորհրդի սույն համաժողովին հայ եկեղեցու մասնակցությունը և ժողովում քննարկված նյութերն ու րնդունված որոշումները:


*
* *

Դեկտեմբերի 28-ին, կիրակի.—Զ կիրակի Յիսնակաց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Արդ եղևրուք դուք կատարեալ որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» (Մատթ. Ե 48) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:





Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ս. Ստեփանոսը Քրիստոսի փառավոր ու անթափանց գործի համար նահատակված առաջին մարտիրոսն է: Նրա կյանքի և գործունեության մասին խոսվում է «Գործք առաքելոց»-ի Զ-Է գլուխներում:

Երբ Երուսաղեմի քրիստոնյա առաջին համայնքի մեջ հավատացյալների թիվը սկսեց աճել, անհրաժեշտություն զգացվեց 12 առաքյալների կողքին ընտրել 7 սարկավագներ, որպեսզի առաքյալները նվիրվեն Աստուծո խոսքի քարոզության սրբազան գործին, իսկ 7 սարկավագներն աղքատներին նպաստ բաժանեն, որքերին և այլքին հոգատարություն ցույց տան և սուրբ Սեղանին պատասխանություն անեն:

Այս բնորված 7 անձինք եկեղեցու մեջ ճանաչվեցին «սարկավագ» անունով: «Սարկավագ» բառը նշանակում է օգնական, գործակից, սպասավոր:

Սարկավագները, բացի վերոհիշյալ պարտականությունները կատարելուց, գրադվում էին նաև քարոզչությանը:

Այսպես, Ստեփանոս սարկավագը «շքևորեցանքով և զորությանը լեցված մարդ, ժողովրդի մեջ զարմանալի գործեր և մեծամեծ նշաններ էր անում» (Գործք Զ 8): Հատկապես նշանավոր են նրա վիճաբանությունները լիբիացիների, կյուրենացիների և ալեքսանդրիացիների ժողովարանների անդամների ու կիլիկեցի և ասիացի հրեաների հետ (Գործք Զ 9):

Հրեա կրոնական առյուծակր և Ստեփանոսին, իր քարոզչությունների համար, մահվան է դատապարտում:

Եվ այն պահին, երբ սուրբն իր հոգին էր ավանդում, միայն աղոթում էր. «Տեր, սա մեղք մի համարիր դրանց» (Գործք Է 59):

Այս սուրբ, ազատամիտ ու ներողամիտ անձնավորությունն իր հերոսական նահատակությանը մեծագույն դաս է հանդիսացել հետագա սերունդների համար:

Ս. Ստեփանոսի տոնը, սակայն, ավանդաբար մեր վանքերում և եկեղեցիներում համարվում է մասնավոր տոնը սարկավագների և դպրեվանքի ուսանողների:

Այս տարի նույնպես ս. Ստեփանոսի տոնը մեծ հանդիսավորությամբ է տոնվում Մայր Աթոռում:

Դեկտեմբերի 24-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, Մայր Աթոռի ողջ միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը մասնակցում են նախատոնակին, որը կատարվում է տաճարի հյուսիսային թևում գտնվող ս. Ստեփանոսի խորանի առաջ:

Հավարտ նախատոնակի արարողության Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրուրյանը դպրության 4 աստիճաններ է տալիս Գ. դասարանի 8 ուսանողների, ուրաք կրելու իրավունք՝ Բ լսարանի ուսանողներ Բյուզանդ Գալայճյանին, Գրիգոր Հաճյանին, և կիսաառկավագական աստիճան՝ Բ լսարանի 7 ուսանողների:

Դեկտեմբերի 25-ին, հինգշաբթի օրը, առավոտյան, Մայր տաճարում պաշտվում է ժամերգություն: Հնչում են օրվա սրբին նվիրված «Նահատակ բարի Քրիստոսի», «Այսօր դասք» և «Ընդ երկնայնոց» շարականները:

«Փառք ի քարծուհ»-ի ժամանակ Մայր Աթոռի սարկավագները, աղավարտ ի գլուխ, բուրվառներով և տապանակներով, գույգ-գույգ դուրս են գալիս ավանդատնից,

բառ ավագության շարվում և Ստեփանոսի խորանի առջև։ Ս. արարողությունը շարունակվում է մինչև ավարտ։

Ժամը 10.30-ին սկսվում է և պատարագը, որը մատուցում է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քին։ Մարությանը։

Ս. պատարագի սկզբում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը կատարում է Բ լսարանի 7 ուսանող սարկավագների ձեռնադրությունը։

Խարտավիլակի պաշտոնը կատարում է տ. Մասիս վրդ. Գալստյանը։

Հավարտ և պատարագի նորրևմա սարկավագներին ջերմ սիրով ընդունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։ Նորին Սրբությունը, մասնավոր ջերմությամբ շնորհավորելով Իր հոգևոր զավակներին, խրատում է նրանց՝ լինել և Ստեփանոսի նման հավատարիմ սպասավորները Աստուծո և Սեդանի, և օրհնում նրանց կատարած սրբազան ուխտը։

Ժամը 15-ին միաբանական սեղանատանը տրվում է ճաշկերույթ՝ ի պատիվ Մայր Աթոռի սարկավագների։

Ճաշկերույթին ներկա են լինում Մայր



Լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քին. Մարությանը և նորրևմա սարկավագները ձեռնադրությունից հետո

Ձեռնադրության ավարտին նորրևմա սարկավագներին ուղղված խրատական խոսքով հոգեշունչ քարոզ է խոսում տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը՝ «Եթե ոչ ցորենույ անկեալ յերկիր մեռանիցի, ինչն միայն կա, ապա եթե մեռանիցի, բազում արդիւնս առնէ»՝ նրանց մաղթելով լինել հարազատ զավակները Հայաստանյայց եկեղեցու և ս. Էջմիածնի ու իրենց նվիրումով նմանվել ս. Ստեփանոս նախավկային, որպեսզի միշտ լինեն «մշակք ստանց անօթոյ»։

Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսությունը և ուսանողությունը։

Նորրևմա սարկավագներին ուղղված ողջույնի և շնորհավորության խոսք են ասում Մայր Աթոռի միաբան տ. Թորգոմ արդ. Մուշեղյանը և հոգևոր ճեմարանի դասախոս Սարգիս արկ. Սարգսյանը։

Հանուն սարկավագության Նորին Սրբությանը և ներկաներին ուղղված շնորհակալական խոսք է ասում Աղասի արկ. Բարուչյանը։

Մայր Աթոռում կատարված այս սարկա-

վագների ձեռնադրությամբ հայ եկեղեցու սպասավորության կանչված բնօրինակների հավերժական աշակերտության ոսկե շղթայի վրա ավելանում է ևս 7 նոր օղակ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորընծա սարկավագներին, գնահատում նրանց նվիրումի և զոհողության ոգին և բարեմաղթում նրանց պայծառ ու արդյունավետ գործունեություն՝ ի պայծառություն Հայաստանյայց ատաքելական և եկեղեցու և Մայր Աթոռ և Էջմիածնի:

Կիրակոս սրկ. Հովնանյան.—Ծնվել է 1953 թ. Երևանում: Ավարտել է տեղի № 79 դպրոցի 8-րդ դասարանը: 1969 թ. բնդունվել է հոգևոր ճեմարան:

Լևոն սրկ. Բաղդասարյան.—Ծնվել է 1956 թ. Երևանում: Ավարտել է տեղի № 44 միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանը: 1970 թ. բնդունվել է հոգևոր ճեմարան:

Արծրուն սրկ. Ավետիսյան.—Ծնվել է 1956 թ. Երևանում: Ավարտել է տեղի № 24 միջնակարգ դպրոցը: 1974 թ. բնդունվել է հոգևոր ճեմարան:

Աղասի սրկ. Բաբուջյան.—Ծնվել է 1957 թ. Ախուրյանի շրջանի Սարխար գյու-

ղում: Ավարտել է Զվարթնոցի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանը: 1969 թ. բնդունվել է հոգևոր ճեմարան:

Գերենիկ սրկ. Սայան.—Ծնվել է 1954 թ. Հալեպում (Սիրիա): Ավարտել է Բեյրութի Թորգոմյան ազգային վարժարանը և 1969 թ. երկու տարի սովորել Անթիլիասի դրպրեվանքում: 1972 թ. բնդունվել է հոգևոր ճեմարան:

Վան սրկ. Տեր-Մկրտչյան (ազատ ուսանող).—Ծնվել է 1951 թ. Ֆրեզնոյում: 1969 թ. ավարտել է տեղի պետական բուլեջը և 1973 թ. ստացել պատվավորի աստիճան:

1973—74 թթ. Լոս-Անջելոսում հետևել է Կալիֆոռնիայի համալսարանի դասընթացներին և պատմության գծով ստացել գիտական աստիճան: 10 տարի եղել է անդամ Կալիֆոռնիայի Հայ եկեղեցու երիտասարդաց կազմակերպության: 1974 թ. բնդունվել է հոգևոր ճեմարան՝ որպես ազատ ուսանող:

Ռուբեն սրկ. Սաղոյան (ազատ ուսանող, որպես բահանայացու).—Ծնվել է 1949 թ. Ախալցխայի Ծողրուք գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1965—68 թթ. սովորել է հոգևոր ճեմարանում:





ԿԻՐՈՎԱԲԱԴԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԱՎԱԳ ՍԵՂԱՆԻ
ՕԾՈՒՄԸ

Դեկտեմբերի 20-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետի քարեհաճ կարգադրությամբ, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ և Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը մեկնում է Կիրովաբադ (Հին Գանձակ)՝ կատարելու տեղի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ վերանորոգված եկեղեցու Ավագ սեղանի օծումը:

Այս առթիվ առաջնորդ սրբազան հորը Մայր Աթոռից ընկերակցում են հոգևոր ճեմարանում եկեղեցական երաժշտության դասախոս Հայկ Ֆրունջյանը և Հակոբ սրկ. Խաչատրյանը:

Կիրովաբադի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առաջ սրբազանին և նրան ողեկցող անձանց ջերմորեն դիմավորում են տեղի հայոց հոգևոր հովիվ տ. Ղուկաս քհն. Հակոբյանը, եկեղեցական խորհրդի պատվարժան անդամները՝ գլխավորությամբ խորհրդի նախագահ Միքայել Սամվելյանի, և հավատացյալների խումբը:

Դեկտեմբերի 21-ին, կիրակի օրը, թեմի առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը հանդիսավոր ս. պատարագ է մատուցում

Կիրովաբադի հայոց վերջերս վերանորոգված ս. Գրիգոր Լուսավորիչ գեղեցիկ եկեղեցում և կատարում Ավագ սեղանի օծումը՝ ի ներկայության խոտմեքան հավատացյալների:

Սրբազան արարողության ավարտին պատարագիչ սրբազանը քարոզում է ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերանորոգության կարևորության և օրվա հանդիսության հոգևոր նշանակության մասին՝ «Տէր, սիրեցի զվաչելչութիւն Տան քո և զտեղի յարկի փառաց քոց» (սաղմոս) բնաբանով, և, հաղորդելով Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու ողջույնները, մխիթարում հավատացյալներին:

Հավարտ ս. պատարագի եկեղեցու նորաշեն երիցատանը, ի պատիվ առաջնորդ սրբազանի, տրվում է ընդունելություն:

Կիրովաբադի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերանորոգությունը, շրջապատի քարեկարգումը և երիցատան ու մատաղատան կառուցումը կատարվել են նախաձեռնությամբ և ֆակողությամբ եկեղեցական խորհրդի նախագահ Միքայել Սամ-

վելյանի և խորհրդի ժրաջան ու հավատաց-
յալ մյուս անդամների, սրտաբուխ լուծանե-
րով՝ հավատացյալների:

Կիրովաբադի հայոց ս. Գրիգոր Լուսա-
վորիչ սյունազարդ եկեղեցին, որը կառուց-
վել է քաղաքի վերին թաղում, ուր հայ ազ-
գաբնակչությունը բազմամարդ է, Անդրը-
կովկասի հայ եկեղեցիների մեջ նշանավոր

ի կալսարության ամենայն հուսաց Ալեք-
սանդր Բ. և ի հայրապետության Գեորգ Դ.
Յծառ 1-9-ն նույնների 1869 ամի ի սրբա-
զան Մակար արքեպիսկոպոսէ սուաջնորդէ
Վրաստանի և Իմերէթի և անուանեցաւ
սուրբ Լուսավորիչ եկեղեցի յանուն սրբոյն
Գրիգորի մեծի Հայրապետին ազգիս: Հիմ-
նարկեցաւ սուրբ տաճարս յանուն սրբոյն



Կիրովաբադի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին


է իր նարտարապետական կառուցվածքով,
գեղեցկությամբ, նազելիությամբ և մեծու-
թյամբ: Կիրովաբադի հայոց ս. Գրիգոր
Լուսավորիչ եկեղեցու արևելյան պատի
վրա կա նաև շինության հետևյալ արձա-
նագրությունը. «Շնորհօք և ողորմութեամբ
Աստուծոյ հիմնեցաւ սուրբ տաճարս ի 14-ն
սեպտեմբերի 1853 ամի և յետ աւարտելոյն
սրբօք բարեպաշտ ժողովրդոց Գանձակայ

Գրիգորի Լուսավորչին ի 1853 ամի և աւար-
տեցաւ 1869 ամի»:

Եկեղեցին ունի և շրջապարիսպ, որ շին-
ված է սրբատաշ քարերով:

Վերանորոգված եկեղեցուն անցկացվել է
նաև ջեռուցման գազային սիստեմ:

Դեկտեմբերի 22-ին, երկուշաբթի օրը,
տ. Հուսիկ սրբազանը և նրան ողեկցող
անձինք վերադարձան Մայր Աթոռ լավա-
գույն տպավորություններով:



ԵՂԻՎԱՐԴ

(Եղիշե պատրիարք Տերտերյան)

ԿԱՐՄԻՐ ԶՕՐԱՎԱՐ*

(Հատվածներ պոեմից, Երուսաղեմ, 1975, տպարան սրբոց Հակոբյանց)

Առաստ էր գարնանային.
Կը հնչէին զանգերն անդու
Տաճարներուն,
Եւ ամէն կողմ կը լսուէին
Երգ ու աղօթք դառնաթախիծ:

Մապիսն հեռուն, արծաթաթագ,
Մէջքին կապած սուրն Երասխին
Աղամանդեայ,
Կոտի պատրաստ ասպետ մ'ինչպէս՝
Կը պատուէր գլխուն իջած
Ամպերը սև:

Հովի թևով, տազնապահար,
Հետախոյզներ կը հաւնէին,
Հաղորդելու թէ թշնամին

Կը մօտենար հարստային
Սահմաններուն Հայ աշխարհին:

Բանակն Հայոց,
Տօնէն յետոյ կարմիր Զատիկի,
Հագած երկաթ, հուր ու հաւառք,
Ոգետրմամբ մարտիրոսի
Կ'ըլլար հաղորդ՝
Մահու, կենաց մեծ խորհուրդին:
Կ'որոտային շեփորներ գոո՝
Բզկտելով սիրտն երկնքին:

Վարդանն հեծած էր բոցաշունչ
«Վիշապ»ն աղուոր,
Խրխիւնցն որուն պղնձաձայն
Կը տարածուէր մինչեւ հեռուն:
Մէջքն էր կապած ոսկեգօտին,
Լանջքին վրայ եւ ազդրերուն
Կը շողային
Պղնձաձող պատեաններ կոտ:
Գըլխուն պողպատ ձող սաղաւարտ,
Վրան՝ արծիւ հարթաքանդակ,
Նշան տոհմին իր քաջարի:
Հագարատր աչքեր ժրպտուն
Կ'ողջունէին
Սպարապետն Հայոց Մեծաց,
Որ նպոյածքով լայն ու խոհուն՝
Կ'ընդգրկէր ողջ բանակն անեզր՝
Մահն անգոսնող զինուորներուն:
Հովի բերնին կը ծփային
Նիզակներու ծայրին բարձած
Դրօշ, խաչվառ,
Յոյսերու պէս պայծառափայլ:

* 1975 թվականի դեկտեմբերի 19-ին, ուրբաթ օրը, Երևանում, հանդիսավոր իրադրության մեջ բացվեց 451 թվականի Ավարայրի հերոսամարտի զորավար Կարմիրն Վարդան Մամիկոնյանի մոմուսնետալ, պղնձակոթի հուշարձանը (գործ՝ տաղանդավոր արվեստագետ Երվանդ Քոչարի, ճարտարապետ՝ Ստեփան Քուրքչյան):

Քաղաքամայր Երևանի ճարտարապետական կերպարը հարստացնող ու գեղեցկացնող զորավար Վարդան Մամիկոնյանի հուշարձանի բացման առիթով մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում նաև անվանի բանաստեղծ Եղիշարդի «Կարմիր Զօրավար» պոեմից հատվածներ:



ՔԱՋՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԱՐԶԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*
*

«Չօրավարներ ու գինուորներ
Մեր հայրենեաց,
Բազում անգամ
Կրտսեր ենք մենք բռնադատեալ՝
Ուրիշներու փառքին համար,
Պիտի կոտինք բաց այս անգամ՝
Սիրոյն համար մեր Աստուծոյն,
Պաշտպանելու
Մեր խղճմտանքն ու մեր հաւատը:
Գիտե՛մ, սիրտերն ամենուն ձեր
Կը բաբախեն՝
Մահուան յօժար տրոփիւնով
Եւ կ'ըստանան մեծ գրոհին՝
Հարուածելու կայծակնաթափ
Ասպակներն ամբարհաւան
Մեր հոգիին ու մեր երկրին,
Որ եկեր են ասլշուպելու
Խիղճն ու սրտին մեր բոլորին:
Չունինք երկիւղ թիւն անոնց,
Երկու անգամ չի մտնիր մարդ:
Թող մեր մարմնով մտնի բնդմիշտ
Մահն հայրենեաց,
Հազար ողջո՛յն նահատակաց»:

*
*

«Յն ա՛նդր, քաջեր, մա՛հ ուտիին»-
Զայնեց ուժգին
Սարսափելուն Հայոց Մեծաց,
Կեցած ձիւս ասպանդակին,
Բարձրացնելով ձեռքն իր խրոխտ,
Պատգամ մ'ինչպէս արիւնագիր:
Հոփի թևով ու փողերու
Երկարածիգ՝
Արձագանգեց ձայնն այդ կախարդ
Սիրտերէ սիրտ,
Պատուելով կուրծքն Ասարայրի:

*
*

Մոռցած ինքզինք, տեղ, ժամանակ՝
Կը կրտուէր ան,
Իր ուժին մէջ տասնապատկուած,
Հարուածներուն ներքեւ իր շանթ՝
Կը փոռէին մարդ, երիվար:

*
*

Կը կոռէր ան,
Վրէժխնդիր ու տեսաբար,
Որպէս ոգին Հայ աշխարհին:
Յաւերժութեան անթաքթ հայոյ
Էակ մ'ինչպէս՝
Բացեր էր ան դուռն հոգիին
Անճանաթէն զալիք ուժին:

*
*

Սաղաւարտն էր թըրեր զըլխէն,
Ու վահանն իր դարձեր էր մաղ,
Իսկ վերքերէն կը ժայթքէր բոց՝
Մահու հետով:
Կը խորանար խաւարն իր շուրջ,
Ինչպէս անդունդ,
Կը դողար հողն իր ոտքին տակ,
Ու կը թուէր քիչ քիչ սուզուիլ
Ծոցը մութին:
Կ'իյնար հերոսն Ասարայրի,
Հազար վերքով,
Լեռ մը ինչպէս լեռներու քով,
Ակոսներուն մէջ դեռ բռնած
Նետն ուտիին:

*
*

Լուսարացին, գետի ափին
Քաջեր հազար
Կը ննջէին անգերեզման:
Յօղն ատտուան
Արցունք արցունք կը դողողար
Սարսափին դէմ այդ քարացան:
Երկինքն Հայոց աչք էր ստամ:

Այնտեղ էին
Նահատակ զօրքն ու զօրականք,
Մահուան մէջն իսկ եղբայրացած,
Սուրերն իրենց՝
Արեւին դէմ փայլակնացայտ,
Ծիծաղ մ'ինչպէս սառ ու անգութ:
Մութ շեղջին դէմ մարմիններու,
Հազար վերքով
Ինկած էր քաջն Ասարայրի:
Սաղաւարտն իր նետուած հետուն,
Մաղ էր դարձեր մահուան պատուար
Վահանն իր կոտ՝ ինկած կողքին,
Բաց կը մնար դեռ իր աչին,
Արիւնթաթախ իբրեւ կայծակ,
Մեր արտոմութեան սուրն անխորտակ:

*
*

ՎԵՐՋԵՐԳ

Անցան օրեր ու տարիներ
Անցան դարեր-
Հեղեղելով արիւնն իրենց
Մագաղաթին մեր պատմութեան,
Խորհուրդն որուն՝
Մենք քնթեռնել կարենալու
Համար իշանք բիրտ անգամներ
Ծոցն հոգերուն:

Անցան մեզմէ, մեր դարերէն,
Հազար իշխան ու զօրական,
Փառք ու պալատ,

Բաց մնաց միշտ խորն սիրտերում
Բոցե պատկերն մեծ մերտսին
Ասարայրի,
Չիուն վերան իր սպիտակ,
Իբրեւ պատգամ՝
Մահուան ընդդէմ մաքառելու:

Անցան դարեր,
Կրակն ինչպէս բլխող անշէշ,
Բիրտաւորներ գացին մահուան,
Սիրտերն իրենց լրած սեղան
Հայրենիքին,
Պահելով միշտ խորհուրդն անյաղթ
Իրենց ցեղին,
Որ կը մաքրէ ժանգն ու արատ
Հոգիներէն մեր բոլորին:

Դարեր յետոյ,
Երիվարովն իր հրեղէն
Կեցած նորէն
Հողին վերայ իր պապերուն,
Ինչպէս երբեմն
Դաշտին վերայ Ասարայրի,
Պարսիկին դէմ մեր օրերուն,
Կը նայի ան
Մեր նորագոյրս հայրենի տան,
Աստուծոյ մը ծնունդին պէս
Առած մարմին,
Ընթմակ յոյսէն ու հաւատքէն
Մեր կոյսերուն,
Պարմաններուն և ծերերուն,
Ոսկորներէն նահատակաց:

Հոն են շէնքերն,
Նոր քաղաքներ ու նոր փառքեր,
Ուժը պատմող

Ստեղծագործ ժողովուրդին
Մեր դարաւոր:
Խորշն այդ անուշ
Աւերակէն մեր հայրենի
Որ ծաւալի պիտի ընդհուպ
Ազատելու լքուած հողերն
Մեր պապերուն:

Հոն է սիրտն իր, նոր պատարագ,
Գինին որուն նշխարքին հետ՝
Մատոյց պնքան առատօրէն
Չեւքն ունիւրին:
Հոն է սիրտն իր,
Հին ըմպանակ և նոր բուրուստ,
Որկէ կաթիլ, ուրկէ բուրում
Կը թաւալի նորէն հիմա,
Մեզ ընկելու այդ հողերուն
Եւ իր սիրոյն
Ընդունարան անքակտելի:

Մեր հետն է ան,
Ասարայրի հերոսն անմահ,
Երէկ, այսօր ու յաիտեան.
Գօտիէն կախ դեռ կ'երկարի
Շուքը սուրին արիւնակաթ,
Եւ այդ սուրով կը զարնէ ան
Արարատին,
Մեր պատմութեան Լացի Պատին,
Հրաւիրելու ողջերուն հետ
Մտեւները իջած հողին՝
Ասկէ առաջ վաթսուն տարի,
Կրակներովն իրենց ոխին
Ու վրէժին
Հրդեհելու սիրտն ոստիին,
Պացարին մէջ վաղուան կարմիր:



« Կ Ա Ր Մ Ի Ր Զ Օ Ր Ա Վ Ա Ր »
(Հեղինակ՝ ԵՂԻՎԱՐԴ, Երուսաղեմ, 1975)

Սփյուռքահայ գրականությունն այս քննադիմացիկ տարում նշանավորվեց բանաստեղծական բարձրարժեք մի գրքով, որ պատկանում է տաղանդավոր բանաստեղծ ու բարձրաստիճան եկեղեցական ԵՂԻՎԱՐԴԻ (Եղիշե պատրիարք Տերտեղյան) քեղուն գրչին: Գիրքը տիտղոսված է «Կարմիր Զօրավար», լույս է տեսել Երուսաղեմի Ա. Հակոբյանց վանքի տպարանից ու նվիրված է 1915 թվականի Ապրիլյան նահատակների վաթսուամյակին:

Ներկա գիրքը՝ «Կարմիր Զօրավարը», պատմական նյութ է հայ ժողովրդի անցյալից: Առաջին անգամ չէ, որ հեղինակը դիմում է դեպի պատմության հեռատեսները: Պատմական անցյալը միշտ էլ նրաները նշումների աղբյուրն է եղել առաջին իսկ գրքից սկսած: Բանաստեղծը, սակայն, պատմության կամ պատմական անցյալին չի դիմում որպես սոսկ պատմություն, այլ նա պատմական անցյալը միշտ զուգորդում ու ծառայեցնում է ներկային, ներկա կյանքի խնդիրներին: Հիրավի, պատմությունը, ինքնըստինքյան, արժեք ու նշանակություն պիտի չունենար, եթե չծառայեր ժամանակակից մարդու նոր մտահոգություններին:

«Կարմիր Զօրավար» գրքի նյութը մեզ ծանոթ Վարդանանց պատերազմն է, որ հայոց պատմության մեջ հուշակ և ժողովրդականություն վայելող իրադարձություն է համարվում: 451 թվականի Ավարայրի ճակատամարտը պարսիկների դեմ:

Հայ ժողովուրդը մինչև օրս Վարդանանց պատերազմը դիտել է իբրև անցյալի իր ամենից նշանավոր մեծագործություններից մեկը և իր գիտակցության մեջ նվիրա-

գործել այն որպես հերոսական դյուցազներգություն: Դարեր շարունակ բազում սերունդներ երգել ու փառաբանել են այն, և հայ եկեղեցին իր համար զոհված սրբերի շարքին է դասել Վարդանանց և Ղևոնդյանց նահատակներին:

Հիրավի, Վարդանանց պատերազմը պատմական այն դեպքերից և երևույթներից է, որոնք ԻՄԱՍՏԱՎՈՐՎԱԾ ԵՆ ժողովրդական սիրո ու ոգևորության արտահայտությամբ, և, հետևաբար, սովորական չափանիշներով չի կարելի գնահատել նրանց նշանակությունը: Որքան էլ պատմական ՔՆՆԱԿԱՆ ՈԳՈՒ անաչառությամբ մոտենանք, այսինքն՝ ձգտենք լինել առարկայապաշտ, պնդումենայնիվ, չենք կարող նրանց ԽՈՐՀՈՒՐԴԸ հայտակեցնել պատմա-քննական քննադատ օրենքների, որովհետև նրանք, բոլոր օրենքներից վեր, ՈԳԵԿԱՆ ՊԱՅՄԱՌԱԿԵՐՊՈՒՄՈՎ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՎԱԾ, հանդիսացել են ինչպես իրենց ժամանակաշրջանում, այնպես էլ հետագա դարերում՝ ժողովրդական ձրգտումների ու տենչերի հարազատ արտահայտությունը: Այս իմաստով, դեպքերի և երևույթների ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, այսինքն՝ նյութական, առարկայական տարողությունը երկրորդական է դառնում, մինչ ՈԳԵԿԱՆ ներքո հասկանիշն է, որ ավելի կարևոր նշանակություն է ստանում ժողովուրդների կյանքի համար:

Վարդանանց հերոսամարտն այս իմաստավորումն ստացած իրադարձություններից մեկն է հայ ժողովրդի պատմության մեջ:

Բայց Վարդանանց համար հատկանշա-

կան են երկու տարբեր երեսներ, որոնք բխում են պատմական դեպքի բուն իսկ էությունից:

ա) Վարդանանց պատերազմը ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՅՈՒՑԱԶՆԱՄԱՐՏ:

բ) Վարդանանց պատերազմը որպես ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԸՏ-ՔԻ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ:

Բանն այն է, որ հայ ժողովրդի պատմության մեջ նվիրագործված ավանդական ըմբռնումը սրանցից առաջինն է եղել, որը համապատասխան ու հարազատ է մեր ժողովրդի ներքին տարերքին. քաջություն, հերոսություն, հավատասիրություն ու հավաքական անձնությանություն: Ապահովա-

ԿԱՐՄԻՐ ԶՕՐԱԿԱՐ



Համար

բար, դա մեր պատմության ճակատագիրն է: Եվ պատահական չէ, որ Վարդանանքը դարեր շարունակ դիտվել է իբրև ազգային հայրենասիրական ապրումների և ոգևորության աղբյուր:

Եղիշե պատրիարք Տերտերյանը նույնպես Վարդանանց պատմությունը մեզ մատուցում է ավանդական այս ծանոթ ըմբռնումով ու բովանդակությամբ: Պատմական եղելությունը, թեր ու դեմ տեսակետներով, նա ուսումնասիրել է խորությամբ: Նա Վարդանանց պատմությունը դիտում է ՅՈՒՐՈՎԻ և, ըստ իր մտանդագման ու առաջադրության, հաղորդում մի նոր. շունչ

ու մի նոր շեշտ: Նա պատմության ուրվագիծը օգտագործում է գաղափարական մի նոր հեղեղի վրա և իր տեսիլի պրիզմայից անդրադարձնում նոր լուսավորությամբ: Նա բանաստեղծականացնում է նյութը, այսինքն՝ մարդկանց առաջնորդում իրենց բարձրագույն ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ: Բանաստեղծել, այս դեպքում նշանակում է՝ մարդկանց ու հերոսներին վերածնել ու ներկայացնել իրենց ոգեկան համադաշնության գեղեցկագույն պատկերի մեջ: Բանաստեղծականացնել, նշանակում է՝ տալ նրանց աստվածների վեհագույն պատկերը:

Իրողություններ կան, որոնք քացառքվում են միայն ՈԳԵԿԱՆ ԽՈՅԱՆՔՆԵՐՈՎ, առանց որի, օրինակ, Թերմոքիլեի կիրճի անօրինակ սխրագործությունը մի անհավատալի պատմություն կլիներ: Այս առումով, մարդկանց ու իրերի ճակատագիրը վեր է նյութական հարաբերությունների ու առարկայական հանգամանքների բռնավոր սահմաններից: Ժիշտ այս իմաստըն է, որ Եղիվարդն ուզում է տեսնել Վարդանանց պատերազմի մեջ: Վարդանանց պատերազմը նրա համար ոգու սլացք է, ծառացող բռունցք, քաշերը թոթվող արդարության ըմբռնացում: Հաղթանակում է նա, ով հավատում է առաքինության այս հրամայականներին: Վարդանանց շարժումը, հանուն հավատքի ու հալ-րենյաց, ինքնուրույնության կամ ինքնուրույն գոյության հզոր տենչ էր, որի արժեքը կախնում էր ոչ թե ձեռք բերված նյութական արդյունքի մեջ, այլ բռնության թաթի դեմ ծառացող այն խիզախ ոգորումի, որը, հակառակ անհավասար ուժերի հարաբերականության, բարձրանում է ժողովրդի ընդերքից իբրև տարերային պոթելում ու, կործանելով ինքն իրեն, կործանում է նաև բռնության եռանդն ու համատությունը և իր պարտությամբ ու մահով իսկ դառնում վաղվա հաղթանակի ու գոյության իրավունքի երաշխիքը: Զենքերը կարող են շաշել ու թրերը՝ շառաչել: Նետերի ամպակործան տարափներ կարող են տեղալ և Ծավարշանա դաշտը ներկել մեռնող մարդկանց արյուններով: Մարտավորների գազազած փաղանգներ կարող են շարժվող լեռների պես քայլել մարդկանց վրա՝ նրանց ճգնելու հակառակ թաթերի տակ, և, վերջապես, կարող է թշնամին մտնել հայրենի հողը... Բայց հենց որ մտնում է, անմիջապես իր ամբողջ հզորության մեջ զգում է ԸՆԿՃԵԼՈՒ ԱՆԿԱՐՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ և իր ամեղ թափի մեջ խոնջ ու ոգևապա՝ ժայռերի վրա փշրվող ալիքների նման ետ է շարժվում: Այսպես է օրերը, երբ արթնանում

է ժողովրդական ոգին, այլ կերպ ասած՝ հավաքական կամքը: Ժողովուրդները խելանդ հերոսների արբեցումով դեպի մահ են վազում՝ այդ իսկ մահով հավերժացնելու համար կյանքը: Այս դեպքում այնքա պարտություն չկա: Կա միայն հաղթանակ, որովհետև երկրային ուժերը տնօրինվում են միայն գերերկրային կամքով:

Եղիվարդի «Կարմիր Զորավար» գիրքն ամա Վարդանանց պատերազմի այս խորհրդի վրա նարտարապետված մի շքեղ կտույց է: Նրա միտք-բանին ազատության գաղափարական է: Այդ գաղափարական է, որ կարմիր թելի նման անցնում է ամբողջ գործի միջով: Նրա շուրջն են դառնում բոլոր դեպքերն ու գործողությունները, և, հետևաբար, նրա հիման վրա է, որ մարդիկ միանում են իրար կամ տարանջատվում իրարից:

«Կարմիր Զորավարը» Եղիվարդի ամենից ավելի հայրենաշունչ և հայրենասիրական ստեղծագործությունն է «Մեսրոպ Մաշտոցի» հետ: Գիրքը բաղկացած է երեք մասերից, որոնց տակ խմբավորված են տասնյոթ երգ՝ իրենց նախերգանքով և վերջերգով:

Գրքի մտահղացման մի տեսակ բացատրություն է հանդիսանում նախերգանքը, որ մեզ պատմում է բանաստեղծի նոր ներշնչման շարժառիթները: Վերադարձ դեպի անցյալը, դեպի անցյալի հերոսներն ու հերոսապատումները, նրանց փառավոր ոգիություններն ու խիզախ մարտնչությունները՝ հանուն հայրենիքի ու ժողովրդի ազատության: Ոգեկոչման այս հանդեսին, սակայն, ուր վերակենդանանում են միաժամանակ մեր պատմության «հերոսաշունչ» ու «ողբերովագ» դեպքերը, հայտնի է դառնում, որ հեղինակի նպատակն է երգել «հերոսների մեծ հերոսին», այսինքն՝ Վարդան Մամիկոնյանին:

«Բացած հոգիս
Անցյալներուն հրաշալուս,
Սրտիս ձայնով ես կկանչեմ
Ոգիները մեր լեռներուն,
Ըղձափուշներն կապտառաչի
Մեր ջուրերուն,
Տաղասացներն անտառներու
Հազարաբան,
Որ երգիս տան նոր շեշտ ու բառ
Եվ նոր պացք,
Ոգելու հուշն արյունահոսած՝
Ներսեսներու մեծ հերոսին
Մեր պատմության»:

Եվ ամա, այնուհետև, հայ անցյալի մարդըն ու հողը, ժողովուրդն ու երկիրը, պատ-

մությունն ու ավանդությունները, մի կախարդական ու հմայիչ ֆոնի վրա միմյանց ընդելուզված, բանաստեղծի հայրենակարոտ սրտի առջև շողշողում են թովիչ ու անմահական կրկներկայիցի ցուցումն երանգներով:

Առաջին երգում ՀՐԱԾԲ-ՄԱՆԿԱՆ, ծրնունդն է: Աշխարհ է գալիս Մամիկոնյան տոհմի նոր շատափուր: Բայց դա տեղի է ունենում հերոսների ծնունդը գուշակող հրաշալիքով: Երկնքում արծիվն է ճախրում: Եվ ամա, մինչև Չորրորդ երգը, մեզ նկարագրվում է հերոսական ապագա ունենալու կոչված կյանքի նախապատրաստությունը: Մանուկը մեծանում է հայրենի հողի վրա ամուր կանգնած՝ հայրենի դաշտերի ու սարերի օդը ծծելով և աղբյուրների ջուրը խմելով որպես հայրենիքի ոգի, ինչպես Սարունցի Դավիթը: Մեծական հողի ընդերքի ուժը մեծ նշանակություն է ունեցել մեր ժողովրդական մտածողության մեջ, որ միշտ աներկույց հգորություն է հաղորդել իր որդիներին: Եվ երբ Վարդան Մամիկոնյանը դառնում է հասունացած այր, գնում է պարսկական քանակ՝ իր ծառայությունը մատուցելու: Հոների և բուշանների դեմ մղված պատերազմներում նա հուշակվում է որպես քաջ ու խիզախ մարտիկ:

Իրադրությունը Հայաստանի համար ամբողջովին փոխվում է, երբ Պարսկաստանում գահ է բարձրանում Հազկերտ Բ-ը: Դա մի աղետալի շրջադարձ է լինում հայ ժողովրդի կյանքի համար: Հազկերտը անմիջապես ետ է կանչում հանգստյան կոչված վզրուկ Միհրներսեսին: Միհրներսեսը, մոլի ու մոլեռանդ գրադաշտական, Բյուզանդիայի հետ ունեցած մրցակցության առկայությամբ հպատակ և ալլաղալան ազգերի կրոնափոխության սկզբունքը քաղաքական ուղղություն էր դարձրել: Պաշտոնի ետ կանչվելուց հետո, նա խորհուրդ է տալիս Հազկերտին՝ հավատադրացության գիր ուղարկել հայերին և առաջարկել կրոնափոխ դառնալ:

Վաղարշապատում համախմբված են բոլորը՝ Հայաստանի մեծ ու փոքր նախարարները, պատասխան տալու կրոնափոխության հրովարտիչին: Բայց այդ իսկ ժողովում հայտնի է դառնում երկու տարբեր և իրարամերձ դիրքավորում: Ազատության ձգտումն ու քաղաքական տրամաբանությունը բախվում են իրար: Թվում է, որ երկու կողմերն էլ իրավացի են: Բայց ավելի իրավացի ու ճշմարիտ է հնչում ներքին համոզականությունը, այսպես ասած՝ ոգու տրամաբանությունը:

«Հրովարտակն այս մահագույժ
կկործանեն մարմնեն առաջ՝
Ծեները հոգվույն մեր բոլորին:
Չեղբն ամբարիշտ այս գրության՝
Կուզե քանդել մեր տաճարներն
Ու մարել ջահն մեր հավատքին...»

հայտարարում է երկրի հոգևոր պետը՝
Հովսեփ կաթողիկոսը:
Վասակ Սյունեցին, որ նույնպես ներկա
է ժողովին, խոսք է առնում և շեշտում կա-
ցության ավելի քան բարդ հանգամանքը:

«Հրաժարիլ մեր հավատքեն
Անհնար է մեզի համար,
Ընդդիմանալ և անաստել
Բայց արքային՝
Պատերազմի է հավասար,
Բանակներեն որուն հզոր
Կասրսափին
Հյուսիսային ցեղեր բոլոր
Եվ Բյուզանդիոն»:

Վասակին մերձավոր մի տեսակետ է
հայտնում Տիրոց Բագրատունին, որ նա-
խարարների մեջ կշիռ ունեցող մարդ է: Նա
հարում է.

«Ըլլանք խոհեմ և իմաստուն
...
Կարելի չէ,
Տարազներով երկնահամբույր
Լուծել հանգույցն այս աղետին,
Ազատության կարմիր բոցեն
Կրնա ծնիլ
Նաև շղթան ստրկության»:

Վասակի տեսակետի կողմն են Տիրոց
Բագրատունին, Խորխոռունի իշխանը, Մա-
նեն Ապահունին: Մինչ կաթողիկոսին և
Ղևոնդ Երեցին են հարում Եզնիկ Կողբա-
ցին, Արծրունին, Եղիշեն, հազարապետ
Ամատունին, Արշարունին և ուրիշներ:

Ժողովը տակավ շիկանում է: Ընդդիմա-
դիր երկու կողմերի դիրքերը սրվում են:
Բայց պատմության այս հանգրվանում նը-
րանք մնում են հրովարտակը ՄԵՐԺՈՂ-
ՆԵՐԻ և մերժվողներին ՀԱԿԱԴՐՎՈՂՆԵ-
ՐԻ հարաբերության սահմաններում: Վեր-
ջիններս կրոնափոխությունը ընդունելու
սրբապղծությունը, իհարկե, չեն կատարում:
Եղիվարդը զգաստ և իրապաշտ է: Բայց
նրանց բռնելիք հետագա ընթացքի բոլոր
սխտանշանները երևան են գալիս իրենց
ներկա հոգեբանական կացության մեջ:
Ինչպես երևում է, ստեղծված բարդ իրա-
դրությանը նրանք ոչ թե ավելի ճշմարիտ

լուծում և կողմնորոշում են ցույց տալիս,
այլ ձգտում են հայրենասերների ԱՐԻՈՒ-
ԹՅՈՒՆԸ ԱՀԱՔԵԿԵԼ: Այս է նրանց բրո-
նաձ զիծը: Եվ չնայած այն բանին, որ Վա-
սակն ու իր համախոհները երբեմն կոչ են
անում «խոհեմության» և «իմաստության»,
բայց իրենք իսկ չեն պատկերացնում, թե
ինչո՞ւ են կայանում դրանք, գործնական
ի՞նչ լուծում և ի՞նչ հստակ քաղաքակա-
նություն են պարտավորեցնում անհրաժեշ-
տաբար որդեգրել: Նրանց տեսակետները
մնում են հայտարարված ընդհանուր խոս-
քեր:

Հայրենասերների համար միայն մեկ
լուծում գոյություն ունի. իրենց մահով փրը-
կել երկրի ու ժողովրդի կյանքն ու ապա-
գան: Ով հրաժարվում է կյանքից, նա վախ
չունի: Այս սկզբունքով է, որ մարդիկ բա-
ժանվում են իրարից: Խոսքը Վարդան Մա-
միկոնյանին է հիմա, որ հնչում է իր հզոր
կամքի ձայնով ու շեշտով.

«Արծիվներուն հատուկ է լոկ
Քալել ճամփեն ազատության,
Երկինքն անգամ զինակից է
Հանդգնության:
Լավ է այրել մեր իսկ ձեռքով՝
Երկիրն Հայոց,
Ատրուշանի կրակներով,
Քան ընդունիլ հրովարտակն այս
Նգովք մ'ինչպես անկարագիծ՝
Մեր երեսին այսպես նետված»:

Կամքի այս քաջությունն ու խիզախու-
թյունը միշտ իր հետ են ու իրենից անբա-
ժան հետագա փորձությունների դժնեզույց
հանգամանքներում իսկ: Բայց միայն կո-
րովն ու քաջությունը չեն, այլ միաժամա-
նակ միտքն ու խորագիտությունը ընկերա-
կից են դրանց: Դա է ապացուցում Տիգրե-
նում կայացած դատավարության ժամա-
նակ (Ութերորդ երգ) Վարդանի խորի-
մաստ ու անվեհեր պատասխանը: Բոլոր
մյուսները իրենց հպատակության խոնարհ
խոստովանությունով ուզում են ողորդել ու
մեղմացնել արյաց արքայի ցատունն ու
զայրույթը: Հասկանալի են նրանք, բայց
Վարդանի ելույթը, թե՛ ոգով և թե՛ խորքով,
ամբողջովին տարբերվում է: Միշտ է, որ
նրա խոսքի մեջ էլ «հպատակ» բառը օգ-
տագործվում է, բայց դա բոլորովին տար-
բեր և ուրիշ իմաստով:

«—Ինչո՞ւ լուռ ես Մամիկոնյան,—
Ըսավ Հազկերտ
Նաչելե ետք գորավարին,
Որ կմնար միշտ անաչալ...»:

Վարդանի պատասխանի մեջ, որ նա տալիս է, «հավատարմությունը» բարեկամական առաքինության պարտավորություն է և ոչ թե ՀՊՍՍՍԿԻ երաշխավորություն: Նա հարկ է համարում հիշեցնել, որ հաշերը կովել են արյաց փառքի ու հաղթանակների համար, վճարել են պետության հարկը ու մինչև անգամ չեն խնայել իրենց արյան վերջին կաթիլը, երբ արյաց արքան պահանջել է այն:

— Սակայն ինչ որ իբրև տվանո
Առեր ենք մեր նախնիքներեն,
Խիղճ ու հավատք՝
Կերպարաններն հոգիին մեր
Երկնահարդար,
Մենք ոչ որին չենք հանձներ զայն:

—...Եվ չենք կրնար մենք ուրանալ
Հավատքը մեր,
Վկայությունն մեր հոգիին
Հավերժափառ:
Ով կղափե իր Աստուծուն՝
Կրնա դավել նույնքան դյուրին
Իր արքային:

Գերագույն ճշմարտություն: Բիրտ կամայականություններից կուրացած իշխանների աչքերը հաճախ չեն նկատում, որ մարդը, հոգեպես և բարոյապես փչանալուց հետո, չի կարող այնուհետև ավելի առաքինի լինել: Իր հոգևոր տիրոջը դավաճանողը ավելի դյուրին կդավաճանի իր մարմնավոր տիրոջը: Այս համոզման մեջ անհողողող, Վարդան Մամիկոնյանը նույնիսկ որացության գնդանում, որ արշավույսին իրենց սպասում է փղերի ոտքերի տակ ճզմվելու պատիժը, չի ցանկանում դավաճանել իր հավատքին, ինչ որ, առաջին հերթին, նշանակում է դավաճանել իր իսկ անձին:

«Սուտն ու կեղծիքը կվնասեն
Թե հոգիին և թե մարմնին»
Ըսավ Վարդան:
«Քրիստոնյա եմ և իմ ծնած
Հավատքին մեջ կուգես մեռնիլ»:

Գործողության ծիրի մեջ քանատեղծը բնորոշվում է ամբողջ երկիրն իր հիմնական երեք խավերով՝ նախարարություն, եկեղեցականություն և ժողովուրդ: Այս պատերազմը նման չէ նրանց, որոնք տեղի էին ունեցել անցյալում հայ Արշակունի թագավորների օրոք: Հիմա թագավորություն չկա, և ազգը գտնվում է կիսանկախ վիճակում: Այդ մեծ քաղցր դարմանելու համար

նախարարներից, որոնք երկրի քաղաքական և ազգային իշխանության տերերն էին, պահանջվում է ավելի մեծ միասնություն: Բայց, դժբախտաբար, փորձության այդ տագնապալի ու դժնշակ պահին առաջանում է անջատողականության անդունդը: Առանձնանում են Վասակյանք և հակադրվում Վարդանյանք:

Այստեղից էլ ամա քանատեղծն սկսում է զարգացնել երկու զուգահեռագիծ, քաղաքական և հոգեքանական երկու հակադիր քեռներ, որոնք միմյանց հետ մտնում են բախման մեջ: Բանաստեղծը գիտե, որ պատմությունը պետք է ներկայացվի իբրև այսօրվա կենդանի դեպք և իրադարձություն: Ուստի նա դյուցազներգությունն անցկացնում է իր իրապաշտ ըմբռնողության բովից և մատուցում մեզ որպես իրապաշտ ստեղծագործություն:

Ինչպես պատմական դեպքի, այնպես էլ քանատեղծի գլխավոր հերոսը Վարդան Մամիկոնյանն է, որը գրքում ստացել է գեղարվեստական կերպարի տարողություն: Այս իմաստով Վարդան Մամիկոնյանը ոչինչ ունի երևակայական, այսինքն՝ գերբնական և հրաշագործ: Նա մարդկորեն կենդանի ու հաղորդ է մեզ: Եթե Հոմերոսի հերոսները դյուցազուններ են, ծնունդով աստվածներ կամ կիսաստվածներ, ապա Վարդան Մամիկոնյանը ծնունդով մարդ է, մարդկային տիպար, և մարդկային առաքինությունն է, որ իր մեջ մարդուն դարձնում է դյուցազն: Նրա կենսագրությունը, սկսած մանկությունից, այս հիմնական գծի աստիճանական զարգացումն է: Նրա կյանքի բոլոր շրջանները մեծ գործի համար նախասահմանված ճակատագրական կոչումի պատրաստության հանգրվաններ են: Նրա մանկությունն ու պատանեկությունն անցել են հայրենի աշխարհի կախարդական բնության ծոցում, և նա կապված է իր հայրենի երկրին ու ժողովրդին հոգու ամենանվիրական զգացմունքներով: Հետևաբար՝ նա սիրում է իր հայրենիքի անցյալն ու ավանդույթները: Եվ երբ ներկայանում է փորձության ժամը, նա միայն մի բանի է ձգտում՝ մեռնել իր հայրենիքի ու ժողովրդի համար և փրկել նախնիների փառքն ու պատիվը: Եվ իրոք, պատմիչի այն թեւավոր խոսքը, թե՛ գիտակցված մահը անմահություն է,— նրա ճակատը պնդում է հերոսի լուսապսակով:

Գրքի ամբողջ տարածքի վրա Վարդան Մամիկոնյանի անձը փայլում է քաջ և անձնուրաց գորավարի ամենաբնորոշ հատկանիշներով: Նրա կայուն ու վճռական կամքն է իշխում դեպքերի և իրադարձություն-

ների վրա, նրա անհողորդ սկզբունքայնությունն է վարում իրերի ընթացքն ու հակասագիրքը: Տարբեր իրադրությունների մեջ միշտ բարձրանում է նրա տիրական դեմքը, և ուսման գետն ու քաղաքագետը նրա մեջ միշտ միանում ու լուսնում են իրար: Եվ, վերջապես, նա հույսն ու ապավենն է երկրի ու ժողովրդի:

Վարդան գորավարին հակադրվում է Վասակ Սյունեցին՝ հայոց երկրի մարգալ: Դեռք է նկատել, որ երկունս էլ հավաքական կերպարներ են. մեկը բնորոշվում է բարի, իսկ մյուսը՝ չար հակումներով: Վասակի մեջ, ի տարբերություն Վարդանի, խոսում է սեփական անձի հաջողության ու երջանկության տեճը: Դրանց հասնելու համար նա միջոցների մեջ խտրություն չի դնում և օգտագործում է այն բոլոր առիթները, որոնք հաջողություն կարող էին խոստանալ: Բայց ի՞նչ է ուզում և ինչի՞ է ձգտում Սյունեցին:

«— Տե՛նչ մը գաղտնի՝
Կտոշորեն միտքն ու հոգին
Սյունեցիին:
Տիրանալու անվերադիր
Արշակունյաց լքյալ գահին»:

Թագավորական գահին տիրանալու այս տենչից կուրացած, նա երբեք հաշիվ չի տալիս իր խղճի և հայրենյաց հանդեպ ունեցած պարտքի առջև: Նա իր մարգալականության սկզբում հայրենիքի հանդեպ եղել է «խոսեմ ու հոգածու»: Բայց հետո, «փառքի տենչից թունավորված», կատարել է ոճիրներ և սպանություններ: Ամեն գնով թագավորելու կիրքը նրա մոտ վերածվել է քաղաքական դավաճանքի: Եվ ահա մերթ՝ պարսիկների հետ՝ պարսիկներին մոլորեցնելու, մերթ՝ իր հայրենակիցների հետ՝ հայրենակիցներին խաբելու նպատակով որդեգրած երկդիմի քաղաքականությունը նրան դարձնում է դիպվածների գերի: Այստեղից էլ առաջ են գալիս նրա հակասությունն ու բախումները ինչպես Վարդանի, այնպես էլ Վարդանանց հետ: Բայց ահավոր է այն տարբերությունը, որ բանաստեղծը բացահայտում է մեզ ընդմեջ երկու թևերի՝ հայրենիքի և ժողովրդի բախտի տեսակետից: Սյունեցին պարսիկների հետ, պարսիկներին հպատակվելով ու ենթարկվելով, իր անձնական փառքն ու ապահովությունն է ուզում շահել, մինչ Վարդանն ու Վարդանանք, մեռնելով, ուզում են հայրենիքի ու ժողովրդի ազատությունը երաշխավորել:

Գրքում նկարագրված դեպքերի ու գործողությունների զարգացումը, ուրացության

նրավարտակից մինչև Ավարայրի ճակատամարտը, ընթանում է այս երկու ուժերի ներքին պայքարի ճանապարհով: Նախաբարների մեծամասնությունը Վարդանի հետ է: Վարդանի հետ է նաև ողջ եկեղեցականությունը՝ իր գերագույն իշխանությամբ: Արարատի և Էջմիածնի զուգորդումը գրքում բանաստեղծական գեղեցիկ ու ինքնատիպ գյուտ չէ սուկ: Դա լավագույնս բացատրում է հայ ժողովրդի մարմնավոր և հոգևոր կյանքի անքակտելի միության ու միասնության խորհուրդը: Արարատն ու Էջմիածինը հայ ժողովրդի գոյության հիմնախարխսն ու ապավենն են եղել դարեր շարունակ ու կշարունակե՛ն լինել նաև ապագայում:

Եղիվարդը կարևոր դեր է հատկացնում նաև ժամանակաշրջանի մտավորականությանը, որը նույնպես կողմնակից է Վարդանանց դատին և հոգեկան թեղերով կապված է մաշտոցյան սերնդին ու ներկայացնում է նրա շարունակությունը:

Գրքի վերջերգում բանաստեղծը ժամանակակից կյանքի մասին արտահայտած իր խոհերով ու խորհրդածություններով արդիականացնում է նյութը: Վարդանի կերպարը, դարերի ընթացքում պայծառացած ու բյուրեղացած, դարձել է Ազատության խորհուրդ ու Անմահության պատգամ: Նա վերածնվել է բյուրավոր նահատակների ոսկորներից իբրև մեր հույսերի ու հավատքի լուսավոր մարմնացում: Նա հայության հավերժացած ոգին է, որ անբաժան է իր ժողովրդից ու նրան մղում է նորանոր պայքարների:

«Մեր հետն է ան,
Ավարայրի հերոսն անմահ,
Երեկ, այսօր և հավիտյան.
Գոտիեն կախ դեռ կերկարի
Շուքը սուրին արյունակաթ.
Եվ այդ սուրով կզարնեն ան
Արարատին,
Մեր պատմության Լացի Պատին»:

Եղիվարդի այս գործը՝ «Վարմիր Զորավար»-ը, քնարական-պատմական պոեմ է՝ իր սեռին բնորոշ առանձնահատկությամբ: Նշեցինք արդեն, որ նյութը թեպետ պատմական անցյալին վերաբերող դուցազներգություն է, բայց մշակված է հեղինակային նոր մտահղացմամբ և իրապաշտ արվեստի սկզբունքներով: Դա ներում տալիս է նաև պատմական հեղինակի մի շքեղ ստեղծագործություն է, որ գալիս է վկայելու, թե Եղիվարդը սփյուռքահայ բանաստեղծության մեջ իր սերնդի ամենահզոր ու տիրական դեմքերից մեկն է: «Մագդաղիկեն

«Ներքամումն»-ն առաջին հատուստունն ՎԱՍ-
ՅՈՒԹՅՈՒՆՆ Էր այդ տաղանդի, «Խոր-
տակման գիշերներ»-ը՝ դրա ՎԱՎԵՄԱ-
ՅՈՒՄԸ, «Անցորդը»՝ ԽՈՐԱՅՈՒՄԸ, «Մե-
րուս Մաշտոցը»՝ ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄԸ, և,
վերջապես, «Կարմիր Զորավարը» աներկ-
բա ՆՎԱՃՈՒՄՆ Է տաղանդավոր բանաս-
տեղծի կատարողական արվեստի բարձր
վարպետության: Այս հատորի մեջ ներդաշ-
նակորեն զուգակցվում են բանաստեղծա-
կան հզոր շունչը, բարձրաթոփ էրևակա-
յությունը, գեղեցիկ ու ինքնատիպ պատ-
կերները, սահուն երաժշտականությունը,
որ կշռույթավոր տողերի միջից արձագան-
քում է մերթ հախտուն ու մարտական, մերթ

մեղմ ու նեղամրմունջ, մերթ խառվիչ ու
կարոտավոր, մերթ հանդարտ ու աղաչա-
կան՝ այնքան հարազատորեն անդրա-
դարձնելով հեղինակի ներքին զգայական
աշխարհի ծփանքներն ու ելեւջները՝ ըստ
նկարագրված դեպքերի և իրադարձու-
թյունների յուրահատկության: Արևմտահայ
լեզվի դասական հատկությունն ու պաշ-
տոնությունը գիրքը հանդերձել են գունա-
վառ ու ցուցյուն երանգների մի գեղեցիկ
տարազով, որ հաճույք ու վայելք է տալիս
ընթերցողին:

ԳԵՎՈՐԳ ԼՍՏԻՏՅԱՆ





ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

ՄԱՔԵՆՈՑԱՑ ՄԵԾ ԵՎ ՀՌԶԱԿԱՎՈՐ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ*

ՀԱՐԱՆՑ ՀԱՅՐ ՍՈՂՈՄՈՆԸ. ՆՐԱ
ԳՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ Ի ՄԱՔԵՆԻՍ

Մաքենցաց մենաստանը հանդիսանում է ոչ միայն Գեղարքունիքի, այլ նաև համայն Հայաստան աշխարհի հռչակավոր վանքերից մեկը: Այն նշանակալից դեր է կատարել հայ դպրության, մանկավարժության, գրչության արվեստի, եկեղեցական-ծիսական գրականության զարգացման ապարեզում: Մաքենցաց վանքում իրենց կրթությունն են ստացել բազմաթիվ հոգևորականներ, նրանցից ոմանք նույնիսկ բարձրացել են նաև հայրապետական գահ:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին և Ստեփաննոս արքեպիսկոպոս Օրբելյանն առանձին ջերմությամբ և բարձր գնահատանքով են խոսում հարանց հայր Սողոմոն վարդապետի մասին:

«Բայց լետ վախճանելոյ հայրապետին Յովաքայ զՍողոմոն անեալ կացուցանեն յաթոռ արքութեանն Սա էր ի քաղաքագի-

ղէն Գառնոյ, և ի մանկութենէ առեալ էր զլուծ կրօնաւորութեան կարգի և բազում առաքինաջան երկոց զանձն տուեալ ի մեծ ուխտին Մաքենցաց, այլ և վարժեալ իսկ էր ի փիլիսոփայական արուեստս և առաւել ևս հմուտ լեալ փաստութեան կրթանաց:

...Ի միայնակեցի կարգ ելեալ լինէր ի խրճիթ՝ բազում ճգանց և աշխատութեանց զանձն առեալ»⁴⁶:

Օրբելյանը գրում է Սողոմոն վարդապետի մասին. «Յատուածարնակ առաքինարանն Մաքենցաց, առ աւտուածագեաց և Սերոբէատիպ հարանց հայրն Սահօն, որ էր էզոնոմոս մեծի ուխտին. որ պայծառանալոյ յայն ժամանակի մեծամեծ ճգամքք և անտանելի խստամբեր քարոյք»⁴⁷:

Հարանց հայր Սողոմոնի գիտական լայն իմացության և բազմակողմանի զարգացման մասին խոսվում է նաև Մշո ս. Ղազարո կամ Առաքելոց վանքի հանրահայտ

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1975 թվականի № ԺԱ-ից:

⁴⁶ Հովհ. կաթող. Դրասխանակերտցի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 110—111:

⁴⁷ Ստ. արք. Օրբելյան, Պատմություն, էջ 132:

Տոնականի հիշատակարանում (գրված 1204 թ., գրիչ՝ Վարդան քահանա Կարենցի)։ Սույն հիշատակարանը հրատարակվում է առաջին անգամ։

«Այր ոմն իմաստուն, որոյ անուն Սաղովմովն, ոչինչ հարուստ ամառ անխազոյն եղեալ աշխարհէ արեւելից՝ դաշնաւոր անուանեալ ծովուն Գեղարքունեաց, վանաց վանական Մաքենտենից ոխտական, սրբազարդից արանց առաջնորդի, թէ որպէ՛ս տեղեկացեալ պապիսի մեծ քննութեանց և յորպիսի՞ հիմանց հաստատեալ զպապիսի շինուած ստուորածեղէն զհաստատեալ կառն տանից ժողովոց և զվեմական արտադրութիւնս հոգեւատումն ճառից պատմութեանց և զժողովոց արդարոց զգիւնութեան գովութիւնս, սակայն և ի մեմանէ առեալ զթելադրելի արհմակս ոխտաւորաց երջանկաց, յարինեցին ընդ միտ ամեղով, ոչինչ նուազ ի նորացոցն գրելոց։

Վասն զի սա արմատ եղեալ ի հայրական արտոյն, որ նախ քան զդրախտն նմանի, տունգ երկնագունակ, վասն զի ծովացեալ քանն Աստուծոյ և գերապանծեալ գիտութիւն նորա յորդահոս ելից զվայրս զայս, զոր վերագոյն երկնի նման։ Սա է ծովն տիեզերական, զոր ասաց նախագոյն մարգարէիցն Մովսէս, թէ հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջրոց, որում հովանացեալ հոգի Աստուծոյ՝ զայր և երթայր ի վերայ ծովոս այսորիկ՝ ծնանելով ի սմա զկայտաւորուն վայելչատեսիլս։

Սա է լեւոն քարծու աստուածական ցաղով պարարեալ, որով խրախանան ի սմանէ և ի ճարպոյ սորա հաւոր և հատապետք անդաստան հովուաց լերինն գեղեկութեան ի բազմաց լսելիս և ի քիմս, և քարծրացեալ տեսութեամբ գետս աշխարհաբարոզս զքանն հնչէ... (եւս՝) ըստ այնրմ, զոր Եսայեաս ձայնեաց, թէ ել ի վերայ լերինն քարծու։

Սա առակաւոր քանն Աստուծոյ, որ յաւետարանն, թէ հանէ ի գանձէ իւրմէ զնորն և զհինգն, վասն զի սա զարդարեալ արհմաւոր մասամբք, հնախատեան վկայութեամբ զարմագան նորոգ պատմութեանս։

Սա էից անձանց Երրորդութեանն հրամանակատար և թարգման ի լեզուս զպատգամս մեծին Աստուծոյ։

Սա զարդ եկեղեցոյ աղբիւրաբար քիւեալ երկահոսեան վտակաւ, զոր մարգարէն ասի, թէ ելցէ աղբիւր ի տանէ տեսուն և արքուսցէ զծորն վիճակաց, քան զի սովա կենդանեաց ցնծութիւն, տեսողաց բերկրումն և ընթերցողաց արքումն մատրոնակութիւն, ոչ փոխադրաբար, այլ փո-

խարկաբարի քերանոյ ի լսելիս, տակալին եւ մեռելոց աննուագելի յիշատակ, միջնորդական սահման և կամորջ առ Աստուած երթալոյ»⁴⁸։

Հարանց հայր Սողոմոնն իր ժամանակին հանդիսացել է նաև հայ եկեղեցու խոշորագոյն և հմուտ սատկաւարաւոր. այդ մասին հատկանշական է Մ. Կաղանկատվացու հետևյալ վկայությունը. «Թե ինչպես բյուզանդացիները վիճում էին հայերի հետ եկեղեցական կարգավորության ինը դասակարգում չունենալու պատճառով»։ Այս հարցերի պատասխանները տալու համար ժամանակի կաթողիկոս Սողոմոն Ա Գառնեցին (791—792) դիմում է Սողոմոն վարդապետին, որը գրավոր կերպով կաթողիկոսին է ներկայացնում հայ եկեղեցու ուղղափառ դավանությունները⁴⁹։

Իրոք որ իր ժամանակի ամենագարգացած անձնավորությունն է եղել Սողոմոնը. «Դիմէին ամենեքին ի աստար սրբութեան և գիտութեան... և նա գրով ուսոյց զպատճառս հակառակութեան յունաց ընդ հայս. վասն ոչ ունելոյ զինն դասս քահանայութեան, և հայոց՝ լքնարութեան Աբրահամի ի կաթողիկոս՝ կոչել զնա պատրիարք, զկաթողիկոսն Աղուանից՝ արքեպիսկոպոս, և զեպիսկոպոսն Սիւնեաց՝ մետրապօլիտ։ Այլ շատ լիցին այսոքիկ ի յիշատակ բազմարդիւն և բաշմաշնորհ հօրն այն հարանց և պարծանաց Մաքենցաց»⁵⁰։

8-րդ դարում ծաղկում է եղել Մաքենցաց վանքի դպրոցը։ Այդ մասին մենք տեղեկանում ենք Սևանի վանքի վանահայր Մաշտոց Սևանցու (հետագային՝ կաթողիկոս, 897—898) Գևորգ Գ Գառնեցի կաթողիկոսին (877—897) գրած նամակից. «Նորոգեին Հայաստան եկեղեցիքն ըստ բազմամարդ շինութեան, եւ ՊԷՍ ՊԷՍ ՌԻՍՄԱՆՅ առատութիւնք եւ ԱՐՈՒԵՍԱԻՈՐՔ (քերականք, քերթողք և այլն) եւ դպրոցք կանգուն էին յաշխարհիս, ԵԻ ՅՈՅՆ ԲԱՐԲԱՌՈՅՆ ՏԵՂԵԿԱԳՈՅՆՔ ԵԻ ԶՈՒԳԱՇՈՒՐԹՆ ՆՈՅՆ ԹԱՐԳՄԱՆՔ ՅՈՒՎ ԿԱՅԻՆ»⁵¹։ Վերոհիշյալ փաստի մասին Եղիշե պատրիարք Դուրյանը հետևյալ եզրահանգումն է անում. «Ը դարուն սկիզբը արդէն նշանաւոր հանդիսացող Սողոմոն վարդապետը, Մաքենցաց ուխ-

⁴⁸ Մատենադարան, Զեռագիր № 78։

⁴⁹ Մովսէս Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 211։

⁵⁰ Հ. Ղ. Այիշան, Սիսական, էջ 67։

⁵¹ «Գիրք թղթոց», էջ 283, տես նաև Եղիշե պատրիարք Դուրյան, Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղեմ, 1933, էջ 52—53։

տին հարանց հայրը, գրով մը կը հաստատէր թէ Զ դարում եւ է-ին առաջին կիսուն երկրին մէջ ՅՈՅՆ ԼԵԶՈՒԻՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇԱՏ ՀՄՈՒՏ ՈՒ ՏԵՂԵԱԿ ԱՆԶԵՐ ԿԱՅԻՆ»⁵²:

Վերոգրյալ փաստերն ապացուցում են, որ Հայաստան աշխարհը նույնիսկ 8-րդ դարում, արաբական տիրապետության շրջանին, վառ էր պահում գիտությունը⁵³:

Հ. Վ. Հացունին էլ այս մասին վկայում է. «Է դարու երկրորդ կիսէն վերջ ուսմամբ կը փայլի Մաքենցաց ուխտը՝ Սիւնեաց Գեղարքունի գաւառին մէջ, նույն Սողոմոնի ձեռամբ, որ հեղինակ կը լինի տօնական գրոց, և դաստիարակ համանուն կաթողիկոսին»⁵⁴:

Մատենագիտական գրականությունը ամփոփելիս Մաքենցաց դպրոցի վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում նշել նաև Ա. Ալադյանյանի կարծիքը այդ դպրոցի մասին. «Արդարև Սյունյաց նահանգին մէջ կը հանդիպինք վարդապետարաններու, որոնք կամ կայաններ են Սյունյաց վարդապետարանին, կամ անոր ճյուղավորումները:

... ինչպես անհկա վանքէն փոխադրված էր Մաքենցաց կամ Մաքենեաց վանքը, Գեղարքունիքի գալստը, է դարուն երկրորդ կեսին: Այնպես՝ անհկա կը դառնա ուսումնավայր մը, որ Ը դարուն մեծ փայլ կատանա՝ շնորհիվ Սողոմոն ուսուցչին, որուն ձեռքին տակ «վարժեալ իսկ էր ի փիլիսոփայական արուեստս, և առաւել ևս հմուտ լեալ փաստությունեան (ՓՍԱՂՏԻ—սաղմոսներգու քառեն՝ երգեցողության իմաստով):

Այսպես՝ Մաքենցաց վանքէն ճյուղավորված է Սևանի վանքը, որ Թ դարուն կը փայլի»⁵⁵:

Սովետահայ պատմաբաններին ևս զբաղեցրել է այս վանքի դպրոցի պատմությունը.

«Սյունյաց գլխավոր դպրոցի ազդեցության տակ 8-րդ դարում հիմնադրվեցին մի շարք նոր դպրոցներ. որոնցից առաջինը պետք է համարել Մաքենցաց վանքին կից դպրոցը: Այս դպրոցի համբավը առա-

վել չափով մեծացավ, երբ հաջորդաբար նրա գլուխ կանգնեցին համանուն ակադեմիկոս գիտնականներ՝ առաջին Սողոմոնը, որ կոչվում էր «Հարանց հայր» և երկրորդ՝ Սողոմոն Գառնեցին»⁵⁶:

Այսպիսի խոհական և հոգեկան տեսիլք ունեցող ուսուցչապետ հարանց հայր Սողոմոնը Մաքենցաց վանքի դպրոցում դաստիարակում և հասցնում է ընտիր և զարգացած աշակերտներ, որոնցից են.

1. Ստեփաննոս Ա Սյունեցի եպիսկոպոս Սյունյաց. Դվինի տ. Սահակ ավագերեցի որդին, աշակերտեց Մովսեսի, ճգնական կյանք վարեց Մաքենցաց վանքում, ինչպես այդ մասին մանրամասնորեն վկայում է պատմիչ Օրբելյանը. «Ստեփաննոս՝ սինն երկնի և խարիսխն հաւատոյ, վեմն անդրդռնելի և ախոյեանն անվախ սուրբ եկեղեցւոյ, մարդն երկնային և հրեշտակն երկրային, հաւնապազ մեռեալն և միշտ կենդանին հիացուցիչն հրեղինաց և զարմացուցիչն քերթեից... գնայր ի համբաւտենն և մեծաւքանն հանդիսարանն, ի հրեշտակերաւ կրօնաստանն սուրբ և յատուածաբնակ առաքինարանն Մաքենցաց, առ աստուածագեաց և սերոբէատիպ հարանց հայրն Սաղոն, որ էր էգոնմոս մեծի ուխտին. որ պայծառանայր յայնմ ժամանակի մեծամեծ ճգամբք և անուանելի խառամբք վարուք»⁵⁷:

Ստեփաննոս Սյունեցին այնուհետև «Գնացեալ սորա առ երանելի եպիսկոպոսն Սիւնեաց Մովսէս՝ աշակերտի նմա. և ըստ առատ շնորհին որ ունէր, փոյթ ընդ փոյթ հմտացաւ աստուածային իմաստից. և փարթամ ճոխութեամբ զարգացաւ և հասաւ ի գագաթ տեսական շնորհին՝ լցեալ անհամեմատ հանճարով: Եւ առեալ հրաման յեպիսկոպոսէն նստաւ յամբիոնն րաբունական. և մեկնէր զաստուածային գիրս աշակերտելոցն ի վարժարանին: Ապա հասեալ վախճան երանելոյն Մովսէսի՝ յանձնէ նմա գեղաբարձութիւն աթոռոյն»⁵⁸:

Օրբելյանի հաղորդած նշանավոր ուսուցչապետ Մովսեսը հանդիսացել է Մաքենցաց դպրոցի համբավավոր ուսուցչապետ՝ րաբունապետը. «Ստեփաննոս Սյունեցի (680—735) ... իր նախնական ուսումը կը ստանա կաթողիկոսարանի դպրանոցին մէջ. հետո հաջորդաբար կաշակերտի Մա-

⁵² Նդիշէ պատրիարք Դուրյան, Պատմություն հայ մատենագրության, էջ 52:

⁵³ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների քառաբան, հատ. Դ, էջ 359:

⁵⁴ Հ. Վարդան, Վ. Հացունի, Դաստիարակությունը հին հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 192:

⁵⁵ Ա. Ալադյանյան, Պատմություն հայ դպրոցի, Կամիքե, 1947, էջ 259:

⁵⁶ Ա. Խ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 93:

⁵⁷ Ստ. արք. Օրբելյան, Պատմություն, էջ 132:

⁵⁸ Նույնը, էջ 133—134:

բնկաց ուխտի վանահայր Սողոմոնի և Սյունեցի Մովսեսին»⁶⁰:

Սյունեցուց հետո Մաքենցաց դպրոցում է ուսանել նաև Դվին ծնված, Այրիվանքի միաբան՝

2. ԳՐԻԳՈՐ ԳՐԶԻԿ ՎԱՐԳԱՊԵՏԸ.

Օրբելյանի վկայությունից, ինչպես նաև պատմական այլ աղբյուրներից հայտնի է, որ Ստեփաննոս Սյունեցի և Գրիգոր Գրոգիկ վարդապետները Մաքենցաց դպրոցն ավարտելուց հետո իրենց ուսումը կատարելագործել են Աթենքում և Կ. Պոլսում և Հայաստան վերադառնալով, Ստեփաննոս գործում է Դվինի հայրապետանոցում, իսկ Գրիգոր Գրոգիկը՝ Այրիվանք, որտեղ դառնում է նշանավոր երաժիշտ: Գրել է բազմաթիվ կցորդներ: Մահացել է նույն վանքի մոտիկ մի քարայրում, որտեղ և հետագային եկեղեցի են կառուցել⁶¹:

3. Մաքենցաց դպրոցում է ուսանել նաև Մաշտոց Եղիվարդեցի հայոց կաթողիկոսը (897—898): Մաշտոցը Եղիվարդի Գրիգոր քահանայի որդին էր. ծնվել է 833 թվին: Նախնական ուսումը ստացել է հորից: Նրա մահից հետո աշակերտել է Մաքենցաց վանքում Թեոդորոս կրոնավորի մոտ, ապա անցել Սևան 860 թ., որ և կոչվել է Սևանցի՝ իր գործունեության շնորհիվ:

«Եւ վստն զի քնդ այն ժամանակս փայլատակեալ պայծառանայր սորբ այրն Աստուծոյ՝ Մաշտոց, որ ի Սևան կղզւոջ, որ զփառացն Աստուծոյ անշիջանելի լուսոյ ճառագայթումնն յինքն նկարէր, աստուածային ծաղկմամբ և սրբափայլ կրօնիք կենդանականօք և հոգիախաղաց զօրությամբք ի տեսականի անդ զանտեսն տեսներ, ասկս այնորիկ ամենեցուն աչք ի նա հայէին լաղազս տրոհել և ճանաչել մարթելոյ նորա զհոգևորացն մասանց ընտրութիւնս ստուգագէտ իմացումսի»⁶²:

«Յայսմ ժամանակի պայծառանայր երանելին Մաշտոց և Սևան կղզին մեծահանդէս սուաքինութեամբ, որ էր որդի աշխարհիկ երիցու մի Գրիգոր անուն Եղիվարդեցի և եկեալ էր ի Սորք գաւառ և պանդրխտանայր անդ, որ և եւո զՄաշտոց յա-

շակերտութիւն սորբ հորն Մաքենցաց Ստեփաննոսի»⁶³:

Մաշտոց Սևանցու կենսագրության վերաբերյալ և գրական վաստակի մասին սպառիչ նյութեր են հրատարակել Գաբրիել կաթողիկոս Հովսեփյանը⁶⁴, և Բաբկեն արքունակից կաթողիկոսը⁶⁵:

Մի երկու վկայություն ևս բերենք, որ իրոք Մաշտոց կաթողիկոսն ուսանել է հոշակալոր Մաքենցաց վանքում. «Մաշտոց... ի գեղջէ Եղիվարդայ... զայնու ժամանակս իբրեւ աստղ լուսալայծառ փայլէր յաշխարհիս հայոց... զնաց ի վանքն Մաքենցաց, և անդ կեցեալ սրբութեամբ օրհնեցաւ քահանայ և վարժեալ յուսումն աստուածային գրոց՝ չոքս ի Սևան»⁶⁶:

Հ. Ղ. Ալիշանը նույնպես խոսում է Մաշտոցի մասին. «Յասիւն 844 յիշատակի ՍՏԵՓԱՆՆՈՍ Մաքենցաց վանական... Ամա աշակերտէր միս ևս պարծանք Գեղամայ և հեղինակն Սևանայ վանաց՝ մեծանունն ՄԱՇՏՈՅ... և աստ «ճնաւ զգեղեցիկ աղանին Քրիստոսի զՄաշտոց» ... վարժեցաւ... ի կրօնաստանին որ կոչի Մաքենցոց, ի գաւառին Գեղամայ, և ընկալեալ զաստիճան քահանայութեան ի Դարթի եպիսկոպոսի Սիւնեաց»⁶⁷:

Վերոգրյալ փաստերը մեկը մյուսին կրկնում և ընդունում են հետագա բոլոր ուսումնասիրողները. Օրմանյան սրբազանը «Մաքենցաց վանքին աշակերտության կուտա Մաշտոցը»⁶⁸: Աճառչան՝ «Մաշտոց... աշակերտեց Մաքենեաց վանքի Թեոդորոս կրոնավորի մոտ»⁶⁹. Նորայր արքեպիսկոպոս. «Մաշտոց կը մտնէ Մաքենցաց վանքը և հոն կը զարգանայ Թեոդորոս անուն կրոնավորի մը ձեռքին տակ»⁷⁰:

Թեոդորոս վանականի տնտեցչական, գործունեության մասին գրում են Հ. Գ.

⁶² Ստեփաննոս արքեպ. Օրբելյան, Պատմություն, էջ 173:

⁶³ Գաբրիել կաթող. Հովսեփյան, Հիշատակարանք Ջեղագրաց, հատ. Ա, Անթիլիսս, 1951, էջ 87—98:

⁶⁴ Բաբկեն արքունակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Անկիւրոյ կարմիր վանոց և շրջակայից, Անթիլիսս, 1957, էջ 971:

⁶⁵ Հ. Մ. Չամչյան, Պատմություն հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 724:

⁶⁶ Հ. Ղ. Ալիշան, Սիւնեաց, էջ 68:

⁶⁷ Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, մասն Ա, Կ. Պոլիս, 1911 էջ 987:

⁶⁸ Աճառչան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, էջ 215:

⁶⁹ Նորայր եպ. Պողարյան, Հայ գրողներ Ե—ԺԷ դար, Երուսաղեմ, 1971, էջ 131:

⁶⁰ Նորայր եպ. Պողարյան, Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 112: Տես նաև Հ. Աճառչան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 436:

⁶¹ Ստ. արք. Օրբելյան, Պատմություն, էջ 134—139: Հ. Աճառչան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 533:

⁶² Հովհ. կաթ. Գրասխանակերտցի, Պատմություն, էջ 147—148:

Զարբհանայանը⁷⁰ և Աճառյանը. «Թեոդորոս, վանական Մաքենեաց վանքում, ուսուցիչ Մաշտոց (ծնվ. շուրջ 835 թ.) կաթողիկոսի»⁷¹:

4. Մաքենեաց վանքի դպրոցի աշակերտ է հանդիսացել նաև նշանավոր պատմիչ և հայրենասեր գործիչ **Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին** (898—929). նա գրում է իր մասին. «Զի թեպետ և յաշակերտութենէ առն արքայն Մաշտոցի ի մանկութենէ իմմէ՝ այլև ազգակից հարազատութեան նորա ըստ մարմնոյ»⁷²: Իսկ Թովմա Արծրունին գրում է. «Անեպ և ունեպ էր առ ոսոս արքայն Մաշտոցի. նորին հրահանգեպ կրթարանի ուսումնասիրութեան վարժիք ատոցացեպ. այր քաղցրաբարոյ և հեզահայեաց»⁷³:

Հ. Մ. Չամչյանը ևս նույնն է վկայում. «Յովհաննես կաթողիկոս ի դասնականներս՝ աշակերտ և ազգական երանելոյն Մաշտոցի»⁷⁴:

Հատկանշական է տվեառահայ պատմաբան Արգար Մովսիսյանի հաղորդումն այն մասին, թե «Պատմիչ Հով. Դրասխանակերտցին գրում էր, որ ինքը ուսանել է Մաքենեաց դպրոցում և աշակերտել հարանց հորը, նրանից տվորել է փիլիսոփայության և երաժշտության արվեստները»⁷⁵:

Ուսումնական ի՞նչ ծրագրեր ուներ Մաքենեաց վանքը: Սույն վանքում մեծ կարելություններ դասավանդում էին եկեղեցու վարդապետությունը և հայ եկեղեցու դավանաբանությունը. «Ընդ իս էր վարժարանն վարդապետական կրթութեամբն», «ի վարժս կրթութեան... և աղբիւրաբար արբեցուցանէր ամենեցուն զբան վարդապետական»: «Եղբարց ոմանց (մեկնել) զգիրս Աստուածաշունչա: «Եւ սիրողաց ոմանց աստուածաշունչ վարժից վարդապետութեանց»⁷⁶:

«ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ» սուարկան անշուշտ իր մեջ պարփակում էր ընդհանրա-

կան եկեղեցու սուրբ հայրերի կենսագրությունները և նրանց գործերը: Մաքենեաց վանքի մեծագույն ուսումնասիրության նյութը ՍՈՒՐԲ ԳԻՐԲԸ էր: Աշակերտները սուրբ Գիրքը անգիր էին անում:

Մաքենեաց վանքի դպրոցում անցնում էին նաև «տեսական և գործնական»⁷⁷ առարկաներ, որոնց մեջ մտնում էր ճարտասանությունը կամ հռետորությունը, փիլիսոփայությունը կամ իմաստասիրությունը, որ կարևոր էր վարդապետական կոչման համար: Դասավանդվող առարկաների մեջ կարևոր տեղ էին բռնում նաև քերականությունը և երաժշտությունը:

ՀԱՐԱՆՑ ՀԱՅՐ ՍՈՂՈՄՈՆԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մեզ արդեն հայտնի է ԺԳ դարի պատմիչ Մխիթար Այրիվանեցու այն հաղորդումը. «696 Հայր Սողոմոն արար զտօնականն ի Մաքենիս»⁷⁸: Սողոմոնի գրական վաստակի մասին վկայում է նաև Օրբելյանը. «Որ և յօրինեաց զպայծառացոցիցն տօնից տէրունականաց և զյիշատակս մարտիրոսաց զտօնականն ի 150 թուին հայոց: Եւ անդ տոնեպ զանձն ի մեծամեծ տրևութիւնս և յանդմերեկի վարս մշտաջան առաքինութեանց»⁷⁹:

Մատենադարանի Մշո ճառընտիրում ևս հանդիպում ենք հատկանշական մի կարեվոր տեղեկության Տոնականի մասին. «Զաստուածաբան հայրապետաց զիրաքանչիւրսն ասացեպ ճառս հոգիախառս վարդապետութիւնս, զորս ի մի կանոն կարգադրութիւն ժողովեպ առն Աստուծոյ Սողոմովն՝ Մաքենեաց ոխսին առաջնորդ. ի զատսին Գեղարքունի որ յորջորջեցա յանուն նախարարին Գեղամայ ի թուականին ԾՂԶ (747)»⁸⁰:

Հ. Ղ. Ալիշանը Տոնականի բովանդակության մասին հաղորդում է հետևյալը. «Սողոմոն անմահ յիշատակաց արժանի գործ մի ընծայած է մեր դպրութեան և եկեղեցոյ. Տօնական գիրքը, որ հաւաքած է թե՛ ազգային և թե՛ օտարազգի վարք. «Վսեմական արտադրութիւնս հոգեպատմմըն ճառից պատմութեանց»⁸¹:

⁷⁰ Հ. Գ. Զարբհանայան, Պատմություն հայ բին դպրության, Վենետիկ, 1897, էջ 506:

⁷¹ Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, էջ 300:

⁷² Հովհ. կաթող. Դրասխանակերտցի, Պատմություն, էջ 183:

⁷³ Թովմա վարդ. Արծրունի, Պատմ. տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917:

⁷⁴ Հ. Մ. Չամչյան, Պատմություն, հատ. Ա, էջ 14:

⁷⁵ Ս. Խ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 93:

⁷⁶ Հ. Ղ. Ալիշան, Հայտպատում, Վենետիկ, էջ 509—510:

⁷⁷ Մտեփանոս արք. Օրբելյան, Պատմություն, էջ 133:

⁷⁸ Մխիթար Այրիվանեցի, Պատմություն հայոց, էջ 51:

⁷⁹ Մտեփանոս արք. Օրբելյան, Պատմություն, էջ 132:

⁸⁰ Մատենադարան, Ձեռագիր:

⁸¹ Հ. Ղ. Ալիշան, Հայտպատում, էջ 75:

Ստեփաննոս արքեպիսկոպոս Օրբելյանը հաղորդում է, որ Սողոմոնը հեղինակ է հանդիսացել նաև մի այլ աշխատության՝ վրացիների և հայերի կրոնական վեճերի և քաժանման մասին. «Որպես հասարակ տաք... ի սրբոյն Սաղոմոնի՝ Մաքենոցաց առաջնորդի թղթոյն, որ կարգեալ է յԱղուսնից պատմութեանն ի միջին հատորն»⁸²:

Հ. Ղ. Ալիշանն Օրբելյանի սույն հաղորդագրությունը մանրագլին բնագրիցով գալիս է հետևյալ եզրակացության. «Տօնականէն զատ ուրիշ պատմական յիշատակներ այլ գրած է Սողոմոն. որպէս վրաց և հայոց կրօնական վիճից և քաժանմանց դէպքն, ըստ վկայութեան Ստեփանոսի Օրպելեան... Արդարեւ ի միջինն, որ է Բ հատոր Աղուսնից պատմչին, ի խէ գլոյսն, գո համառօտ յիշատակ մի այդ վրաց և հայոց խնդրոյն. Բայց ոչ Սողոմոնի անուն կա և ոչ անոր արժանատր քնով կամ քաւական գիտելիք բան մի. թերևս Օրպելեանի ունեցած օրինակին մէջ գտնուէր»⁸³:

ՄԱՔԵՆՈՅԱՅ ՎԱՆՔԸ ՈՐԴԵՍ
ԿՐՈՆԱԿԱՆ ՆՇԱՆԱՎՈՐ ՄՐԱՎԱՅՐ
ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՏՈՒ
ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱՎԱՅՐ

Մաքենոցաց վանքը ունեցել է նաև կրկնակի նվիրական արքայություններ, որոնցից առաջինը ՄԱՔԵՆՆԱՅ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ անունով ԿԵՆԱՅ ՓԱՅՏԻ ՄԱՍՈՒՆՔՆ Է, որ այժմ անհայտ է: Իր ժամանակին դա նշանավոր և կարևոր արքայություն է եղել հայ եկեղեցու համար:

Մատթեոս Ռոմալեցի պատմիչը Մաքենոցաց ս. Նշանի մասին հաստատում է. «Եւ հանեալ առ նոսա զՎարազայ սուրբ Նշանն և զՄաքենեացն» և նորօք երդուա կոմսն ի մէջ արքայ եկեղեցոյն Առաքելոցն ոչ մեղանչել նմա»⁸⁴:

Հ. Ղ. Ալիշանը, անդրադառնալով այս հարցին, գրում է. «Ի սրբազան սպասուց վանացս յիշատակի ՄԱՔԵՆՈՅԱՅ ՍՈՒՐԲ ՆՇԱՆՆ, որ յեւս ԺԱ դարու պահիր յՌոմայ, առ Թորոսի Կիրապալատի, գոր և ստեալ նորա իբր երաշխատր ուխտի Փռանկ իշխանին. էլ ընդ առաջ նորա անձնատոր լինել, այ դառանալեցաւ ի Գենգախոհիցն»: Մաքենոցաց վանքը հանդիսացել է նաև հայ եկեղեցու ժամակարգության սահմանափայր: Հ. Ղ. Ալիշանը

վկայում է. «Առաել քան զնիթականն՝ պատուականագոյնը պահէին ի մենաստանիս Մաքենեաց առանդ կարգաց սահմանելոց ի նախնի հարց եկեղեցոյս հայոց»⁸⁵:

Ս. Ներսէս Շնորհալին 1170 թ. գրում է. «Ի նորոգելն զկարգս եկեղեցոյ... Եւս բերել ի սուրբ և ի հոշակատր աստուածաբնակ եւ ի հրեշտակալրան սուրբ հարցն մեծ ուխտից Մաքենեացն»⁸⁶:

Մաքենոցաց վանքի անվան հետ է կապված նաև Վահան Գողթնացու նահատակության և վարքաբանության գրությունը:

Վահան Գողթնացին «զանցեալ յերկիրն Գեղամայ ի վանքն Մաքենիս՝ ճգնեցաւ ամ մի. և ի ձեռս առեալ զաժաշունչ գիրս՝ ընթեռնոյր և խելամուտ լինէր աժային գիտութեանց»⁸⁷:

Հ. Ղ. Ալիշանը, նույնպէս քաղելով անցյալի մեր վարքագրական աղբյուրներից, մանրամասնորեն շարադրում է Վահան Գողթնացու վկայաբանությունը⁸⁸:

Մաքենոցաց վանքը, որպէս վանական տիպար հաստատություն, ունեցել է եկեղեցական ժամակարգության յուրահատուկ կարգ ու կանոն. «ԺԱՄԱՍԵՂԱՅ ԽՐԱՍՔ ՄԱՔԵՆՆԱՅ ՈՒՍՏԻՆ» անունով, որը հետագա դարերում օրինակ է հանդիսացել հայ վանական այլ հաստատությունների համար:

Ինչպէս նշեցինք, 1170 թվականին Ներսէս Շնորհալին, երբ գրաւվում էր ժամակարգության հարցերով, «Եւս բերել ի սուրբ և ի հոշակատր աստուածաբնակ եւ ի հրեշտակալրան սուրբ հարցն մեծ ուխտից Մաքենեացն: Եւ ամենայնիւ ամենայն կամար հաճեալ և հաւանեալ, զպալական եկից եւ զսխալն ուղղեաց. եւ կարգեաց ամենայն հայաստանեայց եկեղեցոյ անշրէլի եւ հաստատուն աւանդ, առաջնորդութեամբ հոգւոյն Աստուծոյ՝ որ յաջողէ զամենայն բարի յամենայնի»⁸⁹:

Մի այլ առիթով հրատարակության կորովի վերոհիշյալ վանքում սահմանված «ԺԱՄԱՍԵՂԱՅ ԽՐԱՍՔ ՄԱՔԵՆՆԱՅ ՈՒՍՏԻՆ» կանոնադրությունը:

⁸² Հ. Ղ. Ալիշան, Միսակն, էջ 70:

⁸³ Բարկեն աթոռակից կարողիկոս, Յուզակ ձեռագրաց Անկիւրոյ կարմիր վանոց եւ շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 73:

⁸⁴ Հ. Մ. Չամչյան, Պատմություն հայոց, Բ. Բ, էջ 384—385:

⁸⁵ Հ. Ղ. Ալիշան, Հուշիկը հայրենեաց հայոց, Վեհաթիկ, 1870, Բ. Բ, էջ 129—200:

⁸⁶ Բարկեն աթոռակից կարողիկոս, Յուզակ ձեռագրաց, էջ 57: Հ. Վարդան Հացունի, Պատմություն հայոց Աղօթանատոցին, Վեհաթիկ, ս. Ղազար, 1965, էջ 380—390:

⁸⁷ Սո. արք. Օրբելյան, Պատմություն, էջ 99—100:

⁸⁸ Հ. Ղ. Ալիշան, Հարաբարտում, էջ 75:

⁸⁹ Մատթեոս Ռոմալեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 262:

«Ժամատեղաց» տպին «խրատք»-ը բաղկացած է 7 մասերից.

1. ԽՐԱՏՔ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄՈՒՆ
2. ԽՐԱՏՔ ԱՌԱԽՑԵՆԱՆ ԺԱՄՈՒՆ
3. ԽՐԱՏՔ ԱՐԵՒԱԳԱԼԻՆ
4. ԻՍԿ ԾԱԾՈՒ ԱՂԱԽԹԻՑ ԽՐԱՏՔՆ ԱՅՍ Է
5. ԽՐԱՏՔ ՊԱՏԱՐԱԳԻ
6. ԵՐԵԿՈՅԻՆ ԱՂԱԽԹԻՑՆ ԺԱՄԱՏԵՂԱՑ ԽՐԱՏՔ
7. ԽՐԱՏՔ ԽԱՂԱՂԱԿԱՆԻՆ:

ՄԱՔԵՆՈՑԱԳ ՎԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԳՐԶՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ

Մաքենոցաց վանքը եղել է նաև գրչության վայր: Մատենադարանում պատկերված են Մաքենոցաց վանքում գրված ներքոհիշյալ համարների տակ հինգ ձեռագրեր՝ հմր. 220, 3629, 4266 (Ա. հատոր) և հմր. 6648, 8196 (Բ. հատոր):

Վերոհիշյալ 5 ձեռագրերի մանրամասն նկարագրությունը տպագրված է «Ցուցակ Ձեռագրացում»⁹⁰: Սույն ձեռագրերի (բացի 8196 համարի տակ եղողը) հիշատակարանները հրատարակված են Լ. Ս. Խաչիկյանի կողմից:

Հմր. 220 ձեռագիրը Ավետարան է, գրված 1499 թ. Ալեքսանոս արքեպիսկոպիտից: Ձեռագիրը նկարագրված է Ձեռագրացուցակի Ա. հատորի 275 էջում: Սույն ձեռագրի հիշատակարանը հրատարակել է Լ. Ս. Խաչիկյանը⁹¹: Այս հիշատակարանից պարզվում է, որ վանքիս ստաճնորդն է եղել 1499 թ. Թադեոս եպիսկոպոսը⁹²: Մատենադարանում պահվող Մաքենոցաց վանքում գրված 3629 թվահամարի ձեռագիրը նույնպես Ավետարան է, գրիչ՝ Ֆանոս արքեպիս (գրված 1498 թ.)⁹³: Ձեռագիրը նկարագրված է Ձեռագրացուցակի Ա. հատորի 1053 էջում: Մեզ հետաքրքրող վանքի պատմության մասին Ֆանոս արքեպիսի հետևյալն է հաղորդում. «... ի ստաճնորդութեան սուրբ ոխսիս Սարգիս վարդապետն: Ետոյ եկա եպիսկոպոս մի Դաթեոս անուն, հակառակութիւն մէջ անկաւ և ի չարէն ոչ եղեւ միաբանութիւն սոցա՝ ելաք....»⁹⁴:

⁹⁰ «Ցուցակ Ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հտ. Ա, Երևան, 1965 թ., էջ 275, 1053, 1181, նույնը՝ Բ. հտ. Երևան, 1970 թ., էջ 364, 692:

⁹¹ Ժե դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, մասն Գ (1481—1500 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967 թ., էջ 283:

⁹² Նույն տեղում:

⁹³ Նույն տեղում:

⁹⁴ Նույն տեղում:

Մատենադարանի 4266 թվահամարի ձեռագիրը Ավետարան է, գրված 1496 թ. Հովհաննես արքեպիսկոպիտից: Սույն ձեռագիրը նկարագրված է Մատենադարանի ձեռագրացուցակի Ա. հատորի 1181 էջում, իսկ հիշատակարանը՝ Լ. Ս. Խաչիկյանի կողմից⁹⁵: Մաքենոցաց վանքի վերաբերյալ տույն հիշատակարանում մեզ հետաքրքրող նյութի շուրջ հիշատակություն չկա:

6648 թվահամարի ձեռագիրը՝ Ավետարան, 1496 թ.⁹⁶, 8196 թվահամարի ձեռագիրը՝ Ավետարան, գրված 1524 թ., գրիչ՝ Ալեքսանոս արքեպիս⁹⁷: Սույն ձեռագրի հիշատակարանը, որքան մեզ հայտնի է, դեռևս չի տպագրված: Այն մենք հանձնում ենք տպագրության: Այդ հիշատակարանը գրված է Մաքենոցաց վանքում:

Հիշատակարան հեղինակի, էջ 138ա:


Փառք եղակի տերութեանն և տափառանքի անձնատրութեան Հար և Որդոյ և Հոգոյն սրբոյ, այժմ և միշտ և յափտեան և յափտեան յափտեանից ամեն. Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականիս հաշոյ ԶՀԳ (937 թ.) Ձեռամբ ոգևորեալ հէք Ֆանոս Աղեքսանոս անուամբ միայն արեղաւ և գործով ունայն և վաթար եմ քան զամենայն մարդ: Ի սուրբ ոխսու Մաքենացոյ ի դոտս սուրբ տաճարիս Աստուածամկիս և Հայր Սողոմի նշխարացս և այլ սրբոց որ աստ կան:

Ըստացող սուրբ Աւետարանիս զշահգատա հաւատոտրն և զճնաղսն իր զհայրն իր Յովհաննէս և զմայրն իր Տեառն յաթոնն և զեղբայրսն իր Քեղուպարսն տաւնն զՄարտիրոսն, Դաւէտն, զԵսէրսն Վուլիանն և անա և իր հոգոյ որդին Բարսեղ քահանայն և զամուսինն իր մարգարիտ և զդուստրն Սանդուխտն և զորդին Ովասափ և հարեղբայրն Վարդան շիկն Վարդանէսն և զորդին Կարապետն և ամուսին Ծահպելին և որդիքն Իգնատիոսն և Առաքեալն և միւս հարեղբայրն Սասիկն իոնտամիր Մաթեոս և զՄարիան տպաշխարողն. լսելով զքան մարգարէին որ աստ երանի որ ունի զառակ ի սիոն և ընդանի զայլ ստացաւ իշատակ և փրկութիւն հոգոյ իր և ճնողաց և ընդառաց և որք կարդայք յիշեսցիք ի մաքրափայլ աղաթս ձեր զվերոյգրեալսն Աստուած վայելել տացէ ընդ սմին զմեղապարտ գծողս հանդերձ ճնաղաքն յիշեսցիք և Աստուած զձեզ յիշէ ամեն:

⁹⁵ «Ցուցակ Ձեռագրաց», հտ. Ա, էջ 1181, Լ. Ս. Խաչիկյան, անդ, էջ 226:

⁹⁶ Նույն տեղում:

⁹⁷ Նույն տեղում:



Հ. Մ. ԲԱՐԹԻՎՅԱՆ

ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (°) ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ՆՈՐԱՎԿԱՅԻ (+902—903 թթ.) ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՎԱՐՔԸ

Հիսուն տարի առաջ անվանի բողանդիստներ Հիպոլիտոս Delehaye-ն ու Պավղոս Peeters-ը «Acta Sanctorum»-ի IV հատորի Հավելվածում հրատարակեցին հայագգի սուրբ Մարիամ Նորավկայի բյուզանդական վարքը. «Երանունի և հավերժամիշատակ Մարիամ Նորավկայի վարքն ու քաղաքավարությունը և հրաշքների մասնակի պատմությունը»¹, նրան կցելով համառոտ ներածություն՝ հուշարձանի ժամանակի, այն բովանդակող ձեռագրերի, վարքում հիշված պատմական դեպքերի ու դեմքերի մասին և այլն²: Վարքագիրն անհայտ է, մենք չգիտենք անգամ, նա հա՞յ էր, թե հույն: Նա, հնարավոր է, ծանոթ էր Ագաթանգեղոսի պատմությանը, գուցե նրա հունարեն թարգմանությանը (տե՛ս ծանոթ. 30), բայց այդ հանգամանքը, հասկանալի

է, դեռևս որևէ հիմք չի տալիս որոշակի խոսք ասելու վարքագրի ազգային պատկանելիության մասին:

Ժամանակագրական առումով վարքն սկսվում է Վասիլ Ա Մակեդոնացու (867—886 թթ.) թագավորությունից, երբ սրբունու ծնողները Հալաստանից գաղթում են Բյուզանդիա: Վարքում հիշված է Ռոմանոս Ա կայսրը (920—944 թթ.), ինչպես նաև բյուզանդա-բուլղարական 927 թ. հաշտության պայմանագիրը: Եթե հետագա շրջանի ընդմիջարկություն չէ Վասիլ Բ կայսեր հիշատակությունը վարքում, ապա այս կայսեր թագավորության ժամանակաշրջանը (976—1025 թթ.) կարելի է ընդունել որպես Վարքի գրության վերջին սահմանը:

Սբ. Մարիամի վարքը պահպանվել է երկու ձեռագիր մատյաններում. Codex Vaticanus graecus, 800, որ թվագրվում է ԺԴ—ԺԵ դդ.³, և Codex Laurae Sancti

¹ Vita S. Mariae Iunioris. Acta Sanctorum Novembris, collecta digesta illustrata ab Hippolyto Delehaye et Paulo Peeters, tomus IV, Bruxellis, 1925, pp. 692—705.

² De S. Maria Iuniore matrona Bizyae in Thracia. Commentarius praevious, ibidem, pp. 688—691.

³ *Acta*. Catalogus codicum hagiographicorum graecorum bibliothecae Vaticanae, ediderunt Socii Bollandiani et Plus Franchi de Cavalieri, Bruxellis, 1899, p. 39—40:

Athanasii Athonensis, K. 81, (ԺԴ դ.)⁴, և գիտությանը հայտնի էր առաջին անգամ հույն գիտնական Մ. Ի. Գեդեոնի հրատարակած առանձին հատվածներից⁵:

Սլավոնագետներն իսկույն ուշադրություն դարձրին խնդրո առարկա վարքին, քանզի նա ի միջի այլոց բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ էր բովանդակում Թ դարի վերջի և Ժ դարի առաջին քառորդի բուդարա-բյուզանդական պատերազմների մասին Բուդարիայի ցար Սիմեոնի (893—927 թթ.) օրոք: Հենց նույն տարին Գ. Բալասչևը հրատարակեց վարքի՝ բյուզանդա-բուդարական պատերազմներին վերաբերող հատվածների հունարեն բնագիրը և նրանց ռուսերեն թարգմանությունը⁶: Բյուզանդական վարքագրությունների հայտնի գիտակ Նր. Լուպարյովը անդրադարձավ վարքին Ը—Թ դդ. բյուզանդական վարքագրություններին վերաբերող իր ընդարձակ ուսումնասիրության մեջ⁷: Այն չլրիպեց այնպիսի խոշոր սլավոնագետների ուշադրությունից, ինչպիսիք էին բուդար պատմաբան Վ. Զլատարսկին⁸ և չեխ պատմաբան ու գրականագետ Ֆ. Դվորնիկը⁹: Հետո-

քրքրությունը վարքի հաղորդած տվյալների վերաբերյալ չի դադարել մինչև օրս, և Բուդարիայի գիտությունների ակադեմիայի հրատարակած «Բուդարական պատմության աղբյուրները» բազմահատոր մատենաշարում հունարեն բնագրով ու բուդարերեն թարգմանությամբ լույս են տեսել վարքի Բուդարիային վերաբերող հատվածները՝ համառոտ ներածությամբ¹⁰, որտեղ վարքը բնութագրվում է որպես «извѣнредно ценен извор» (արտակարգ արժեքավոր աղբյուր), իսկ նրա տվյալները «հանգամանակից ու արժանահավատ» (данните от житнето са подробни и достоверни): Նա ըստ արժանվույն գնահատվել է նաև հունգարացի բյուզանդագետ ու թուրքագետ Դ. Մորավսկիի աղբյուրագիտական մեծ աշխատության մեջ¹¹:

Վարքի հունարեն բնագրի հրատարակիչներին մեկը՝ Պալիոս Peeters-ը, նկատի ունենալով հուշարձանի բացառիկ արժեքը հայագիտության համար, երկու տարի անց «Հանդէս Ամսօրեայ»-ի էջերում հանդես եկավ «Մի մոռացված հայ սրբուհի՝ սր. Մարիամ Նորավկան (+902—903 թթ.)» խորագիրը կրող ֆրանսերեն հոդվածով¹²: Բայց և այնպես այդ կարևոր վարքը հայագիտության մեջ այդպես էլ իր արժանի տեղը չգտավ: Եթե մոռացված էր Peeters-ի հոդվածից առաջ, չհիշվեց այդ հոդվածի լույս տեսնելուց հետո էլ:

Սր. Մարիամի վարքից իմանում ենք, որ հայագրի Վասիլ Ա կալսեր թագավորության ժամանակ (867—886 թթ.) «Մեծ Հայքի մեծամեծներից ոմանք» (շատ շնորհալուստ) Դմսեյան ընտանիքից (Դմսեյան ընտանիք) այդ թվում և տարր Մարիամի, «ազնվական ու փառավոր» (սոցեթոն չէ ընծայոն) հայրը, գալիս են կալսեր մոտ Կոստանդնուպոլիս, վերջինիս կող-

⁴ M. I. Geddes, *Byzantine Literature*, Kōnstantinoupolis, 1899, էջ 294—301, Միջին աղբյ. Մ. Գեդեոնը 1896 թ. 'Ο ἐν Κωνσταντινουπόλει 'Ελληνικὸς Φιλολογικὸς Σάλλος—Ի XXIV—XXVI հատորների հավելվածում ավել է վարքի պատմական վերլուծությունը: Նորագույն ուսումնասիրություններից տես. A. Ehrhard, *Überlieferung und Bestand der hagiographischen und homelischen Literatur der griechischen Kirche*, Leipzig, 1937, 1, 3, S. 820, 828; H.—G. Beck, *Kirche und theologische Literatur im byzantinischen Reich*, München, 1959, S. 565.

⁵ Г. Баласчев, Новые данные для истории греко-болгарских войн при Симеоне, на основании жития Марии Новой. Известия Русского Археологического Института в Константинополе, том IV, 2, София, 1899, стр. 189—220. Հմմտ. И. Соколов—И. Мелеченко, *Византийский Временник*, том VII, 1900, стр. 493—494:

⁷ Хр. Лопарев, Византийские жития святых VIII—IX вв. «Византийский Временник», том XIX, 1912, стр. 120—122:

⁸ Васил Златарски, История на Българската държава през средните векове, том I, част 2, София, 1971, стр. 419—420, 489—490, 499:

⁹ F. Dvornik, Quelques données sur les Slaves extraites du tome IV Novembre des «Acta Sanctorum», Byzantinoslavica, 1, 1929, pp. 39—43:

¹⁰ Извори за Българската история том IX, Гръцки извори за Българската история том V, съставили М. Войнов, Ив. Дуйчев, Л. Йончев, П. Тивчев, В. Тъпкова—Занмова, Г. Цанкова—Петкова, София, 1964, стр. 75—81: (Խնդրո առարկա վարքի հատվածների թարգմանիչը, ծանոթագրողն ու ներածությունը հեղինակը Պ. Տիվչևն է):

¹¹ G. Moravcsik, *Byzantinoturcica I, Die byzantinischen Quellen der Geschichte der Türkvolker*, zweite durchgearbeitete Auflage, Berlin, 1958, S. 570:

¹² Paul Peeters, Une sainte arménienne oubliée, Sainte Marie la Jeune (+ 902—903), *Հանդէս Ամսօրեայ*, 1927, հտ. ԽԱ, էջ 723—730: Վերահրատարակվել է նույն հեղինակի հոդվածների ժողովածուում, որ կրում է հետևյալ խորագիրը. *Recherches d'Histoire et de Philologie Orientales*, t. 1, Bruxelles, 1951, pp. 129—135:

մից արժանանում սիրալիր ընդունելության, ստանում թանկարժեք նվերներ և քարձր պաշտոններ ու աստիճաններ: Այս ժամանակաշրջանում հայերի գաղթի պատճառը հյուզանդիա Թ դարի կեսերին Հայաստանում ստեղծված անկայուն և անապահով վիճակն էր, արարական խալիֆայության գործակալների Հայաստանում գործած բռնությունները: Այդ մասին հանգամանորեն խոսում է կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին իր պատմական երկում: Նա ցույց է տալիս, որ, Ապուսեոս ամիրայի սպանությունից հետո, խալիֆան Հայաստան է ուղարկում իր ատրուկ Բուդային՝ հրամայելով նրան «գիշխանս աշխարհին և զտեսարս համագունդ ի կապանս ըմբռնեալ առ ինքն տարցէ»¹³: Բուդան գալիս է Տարոն, մահ ու սարսափ տարածում, ձերբակալում հազարատ իշխանի որդիներ Աշոտին ու Դավթին և ուղարկում ամիրապետի մոտ: Այդպես է վարվում նա Վասպուրականում Աշոտ Արծրունու հետ, որին նա, ձերբակալելով, ուղարկում է Բաղդադ: Բուդան իր ամիրա գործունեությունը շարունակում է Հազաստանի այլ գավառներում էլ. «Եւ այնուհետեւ ձեռս զգաստօքն արկեալ, զամենայն այր պատերազմական՝ որ տոր ի ձեռին առեալ է, կամ զգէն շարժեալ, հրամայէ ձերբակալս առ ինքն տանել... և ինքն չուէր գնայր հասանել նույն իսկ տապաւոտկա հինի զկողմամբ մայրաքաղաքին Գլմայ»¹⁴: Ձերբակալված հայոց բոլոր մեծամեծներին, հարյուր հիսուն հոգուց ավելի, Բուդան մահապատժի է ենթարկում 853 թ.: Նրանից չի խուսափում նաև Այունիքի իշխան Վասակը, վերջինիս եղբայր Աշոտը, Խաչենի իշխան Ասրենքեսը և նրա այլ ազգականներ, սպարապետ Սմբատը, որ մահապատժի է ենթարկվում Բաղդադում: Բուդայի և նրա հաջորդողների բռնությունները ամա պատճառ դարձան վերապրած հայ իշխանների և նախարարների Հայաստանից փախույթան, այդ թվում և դեպի հյուզանդիա, հայազգի կայսր Վասիլ Ա-ի մոտ: Վասիլի սիրալիր վերաբերմունքը Հայաստանից հյուզանդիա գաղթած հայերի նկատմամբ շատ հասկանալի է: Լինելով հայ, նա աշխատում էր իրեն հայերով շրջապատել: Ինքը Վասիլը դեռ կայսր չդարձած, երբ առաջին անգամ գնաց Կոստանդնուպոլիս, ծառայության մտավ հայազգի կեսար Վարդի ազգական պրոտոսո-

բատոր Թեոփիլոսի մոտ: Հենց Վարդը Վասիլին մտցրեց բյուզանդական բարձր աստիճան պաշտոնության կազմը:

Մարիամ Նորավկաչի հայրը, քաջի Մարիամից, ուներ նաև երկու որդի և երկու դուստր: Այս վերջին երկուսը, դեռևս հոր կենդանության օրոք, ամուսնացան, իսկ կրտսերը՝ Մարիամը, մնաց մոր մոտ հյուզանդական կայսրության մայրաքաղաքում: Մարիամն իր մի քոռ ամուսին Թրակիայի Մեսենե վայրում մի կալված ունեցող Վարդ «Վրացու» միջնորդությամբ ամուսնանում է Կամարա գյուղից ծագող ոմն Նիկեփոր որոնգարի հետ և Կոստանդնուպոլսից տեղափոխվում Թրակիայի այդ գյուղը, որտեղից էլ՝ նույն Թրակիայի Բիզյունե քաղմամարդ քաղաքը:

Հանրահայտ է, որ Թրակիայում դեռևս Մավրիկիոս կայսեր օրոք կար հայկական գաղութ¹⁵, որն էլ այլևի ստվարացավ Կոստանդին Ե-ի՝ Մելիտիներից և Կարինից տեղափոխված հայերի հաշվին¹⁶: Նրանք որպես կանոն հաստատված էին Ֆիլիպուպոլիս (այժմ Պլովդիվ) քաղաքում և նրա շրջակայքում: Ար. Մարիամ Նորավկաչի վարքը հնարավորություն է տալիս էլ ասելի ընդարձակելու Թրակիայի հայկական գաղութի սահմանները, նրա մեջ ընդգրկելով նաև Մեսենեն ու Բիզյունեն, ինչպես նաև Սև ծովի ափին գտնվող Մեդիան:

Ար. Մարիամի վերաբնակեցումը Բիզյունե տեղի ունեցավ Վասիլ Ա-ի հաջորդներ Լևոն Իմաստունի և նրա եղբայր Ալեքսանդրի օրոք (886—912 թթ.), երբ 894 թ. սկսվեց բյուզանդա-բուլղարական պատերազմը և զինվորական Նիկեփորը կայսերի որոշմամբ ուղարկվեց Բիզյունեի զինվորական շրջանը: Հենց այստեղ էլ 902—903 թթ. Մարիամը մեռնում է: Մի քիչ անց մեռնում է և Նիկեփորը: Մարիամի ծայրահեղ քաղաքականությունը, աղքատամիրությունը պատճառ են դառնում նրա սրբացման, նրա շիրիմի ուխտավայր դառնալուն, որտեղ, ըստ վարքի, քերում էին ծանր, անբուժելի հիվանդներին, որոնք ապարքիվելով վերադառնում էին իրենց տները:

Բյուզանդա-բուլղարական հաջորդ սրատերազմի ժամանակ (այն սկսվեց 913 թ.),

¹³ Հմմտ. Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Երևան, 1939, գլ. ԺԳ, էջ 49:

¹⁴ Theophanis Chronographia, ed. C. de Boor t. II, Lipsiae 1883, p. 429; Nicephori archiepiscopi Constantinopolitani Opuscula historica, ed. C. de Boor, Lipsiae, 1880; Nicephori patriarchae Constantinopolitani, Antercheticus adv. Const. Copr. Migne, Patrologia graeca, t. 100, col. 508—509.

¹⁵ Հովհաննես Կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 151:

¹⁶ Նույն տեղում, էջ 153:

Բիզյուն քաղաքը հնգամյա պաշարումից հետո, 922 (կամ 925) թ., ընկալ ցար Միսենի ձեռքը, բնակչությունը նախքան քաղաքի ատումը այն կրակի տալով փախուստի է դիմում և ապաստանում նույն Թրակիայի Մեդիա բերդաքաղաքը։ Միսենը, գրավելով քաղաքը, այնտեղ կալազոր է հաստատում։ 927 թ. Միսենը վախճանվում է, իսկ նրա որդի ցար Պետուրը (927—969 թթ.) դառարկում է Բիզյունեն, ապա 927 թ. հոկտեմբերին բյուզանդական Ռոմանոս Ա Լեկապենոս կայսեր հետ հաշտություն կնքում, խնամահանում կայսեր հետ կնության առնելով նրա թոռ Մարիային։ Բիզյունի փախստական բնակչությունը վերադառնում է իր քաղաքը։

Սբ. Մարիամը Նիկեոսից ունեցավ երեսուներ, ալագին՝ Օրեստեսին, որ հինգ տարեկան հասակում վախճանվեց, երկրորդ՝ Վարդանին (Βαρδάνης) որ նույնպես մանուկ հասակում մեռավ։ Ապա նա ունեցավ երկվորյակ որդիներ Վահանին (Βαζανης), որ զինվորական ծառայության մեջ մտավ և հասավ մինչև դրուզարիտի բարձր աստիճանը, դարձավ Թրակիայի Միլիտրիա քաղաքի բյուզանդական կալազորի հրամանատարը։ Վահանը, հետագայում, հրաժարվելով աշխարհիկ կյանքից, հազավ վանականի սքեմը՝ ստանալով Մարինո անունը։ Երկվորյակներից երկրորդը՝ Ստեփանոսը, հենց սկզբից վանական դարձավ և ստացավ Միսեն անունը։

Արդ, եթե մինչ այդ Մարիամի հոր Մեծ Հայքի մեծամեծներից ու ազնվականներից լինելու հանգամանքն էր ընդգծում նրա ընտանիքի հալածված լինելը, ապա սբ. Մարիամի երկու որդիների անունները՝ Վարդան ու Վահան, ոչ միայն հաստատում են դա, այլև հնարավորություն ընձեռում հանգելու և այլ շատ կարևոր եզրակացությունների։ «Մեծ Հայքի մեծամեծ ու ազնվական», ասել է Մեծ Հայքի ինչ-որ նահանգի նախարարական ընտանիքի անդամ։ Եթե նկատի առնենք Մարիամի որդիների անունները՝ Վարդան ու Վահան, ապա բոլոր հիմքերն ունենք այդ ընտանիքը Մամիկոնյան համարելու, քանզի Ը—Թ դդ. այդ անունները, որպես կանոն, տարածված էին Մամիկոնյան նախարարական տան անդամների շրջանում¹⁷ և միաժամա-

նակ աներկապորեն ցույց տալու, որ Ե դարի հայոց ազատագրական պատերազմների հերոսների՝ Վարդանանց ու Վահանանց ավանդույթները շատ վաղ էին անգամ օտարության մեջ ապրող հայերի շրջանում։ Այս առնչությամբ արժեք է ստանում մի փաստ ևս։ Ինչպես հայտնի է, հայկական հիմնադրոց ավանդության համաձայն, Մամիկոնյանների նախարարական տան հիմնադիրներ են համարվում Ծենաստանից եկած Մամիկն ու Կոնակը¹⁸։ Այն տաճարում, որտեղ ամփոփված էր սբ. Մարիամի մարմինը, երկար ժամանակ ապաստարան էր մի քահանա, որի անունը Նիկետոս Կաննակ-ես էր (Νικητας ὁ Καννακῆς, ὁ νεμεσιάρχης § 23)։ Կաննակ-եսը հենց Կոնակ անունը չէ՝ արդյոք, որ այս ժամանակ վերածվել է մականվան։

Սբ. Մարիամ Նորավկայի վարքը առատ լույս է ափում նաև դեռևս Նիկողայոս Մսոի կողմից առաջ քաշված և նրա կողմից փայլուն կերպով լուծված մի պրոբլեմի վրա¹⁹։ Հարցը հետևյալում է։ Միջնադարում ցեղանունը դեռևս ցույց չի տալիս այս կամ այն անձնավորության ազգային պատկանելիությունը։ Երբ հայկական աղբյուրներում մեկը «հոռում» է անվանված, ապա դա դեռ փաստ չէ, որ նա ազգությամբ հույն է, նա կարող է նաև հունահալան հայ լինել, այսինքն քաղկեդոնիկ, երկաթնակ։ Այդպես էլ «վրացի» դեռ չի նշանակում, որ տվյալ անձնավորությունը ազգությամբ վրացի է, նա կարող է վրացադավան հայ լինել, այսինքն ցեղանունը դավանանք է արտահայտում և ոչ ազգություն։ Երբ ըստ Արիստակես Լաստիվերոսյու թոնդրակյան Վրվեղը, նեղն ընկնելով, «Հոռում խոստանայ լինել»²⁰, նշանակում է, նա որոշել է հունադավան լինել, հրաժարվել հայադավանությունից։ Փիլարտոս Վարաժնունին Մատթեոս Ռոմալեցու համաձայն «Էր ... անհաստ քրիստոնեայ, ոչ Հայ գիտելով զնա և ոչ Հոռում վարքն և կրօնքն զՀոռոմոց ունէր, և հայրենեօքն և

գանի վրա», նույն տեղում, էջ 354—451։ Սբ. Մարիամի Մամիկոնյան ընտանիքին պատկանելու միտքը մեզ հուշել է Բ. Չուգազյանը։

¹⁸ Սեբեոս, գլ. Գ, էջ 12—13։

¹⁹ Н. Я. Марр, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах. «Византийский Временник», том XII, СПб., 1905, стр. 1—68.

²⁰ Արիստակիսի վարդապետի Լաստիվերոսյու Պատմություն, աշխատավորությամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 132։

¹⁷ Նիկողայոս Ադունցը, ելնելով հալածված Թեոդորոս կայսրուհու եղբայր Վարդի անունից, նրանց երկուսին էլ Մամիկոնյան է համարում։ Տե՛ս նրա «Վարդ Մամիկոնյան (856—866)» Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 320—353։ Նույնի «Մամիկոնյան իշխանունին բյուզանդական

մայրենեօքն Հայ էր»²¹։ Այդպես էլ հայկական աղբյուրներում «վրացի» և բյուզանդական աղբյուրներում ¹³⁷⁸ (իվեր) ցեղանունը կրողը կարող է նաև վրացադավան հայ լինել։ Օրինակ Աննա Կոմենեայի «Ալեքսիական»-ում հայազգի համարվող (էջ ¹³⁷⁸ ¹³⁷⁸ ¹³⁷⁸) նշանավոր ռազմական գործիչ քաղկեդոնիկ Գրիգոր Բակուրյանը²², որ Ֆիլիպուպոլսում կառուցած սբ. Աստվածածնի վանքի Կանոնադրության հունարեն բնագիրը իր իսկ ասելով ստորագրել է հայերեն (¹³⁷⁸ ¹³⁷⁸ ¹³⁷⁸) հիշում է իր հայադավան ազգականներին²³, նույն Կանոնադրության մեջ իրեն ¹³⁷⁸ (իվեր-վրացի) է անվանում²⁴, իսկ Մատթեոս Ուոհայեցիի ցույց է տալիս, որ նա էր «վրացի ազգա»²⁵։ Վերոհիշյալ Կանոնադրությունը, բացի հունարեն բնագրից, ուներ նաև վրացերեն և հայերեն պատճեններ, քանզի, ինչպես քաջատրում է Գրիգոր Բակուրյանը, վանքի վանականները «իվերներ» լինելով, կարող է հունարեն չիմանալ²⁶։ Բայց իվերի (վրացու) համար քաղական էր վրացերեն բնագիրը, էլ ինչու էր Բակուրյանը կազմում նաև հայերենը։ Այդ հարցին պատասխանել դժվար չէ, իվերների տակ նա ենթադրում է նաև վրացադավան հայերին²⁷։ Օրինակները կարելի է բազմաթիվել։

Սբ. Մարիամ Նորավկայի վարքը փայլուն կերպով հաստատում է այս փաստը։ Ինչպես վերևում տեսանք, Մարիամի քույրերից մեկը անուանացավ Թրակիայի Մեսենե կոչվող քաղաքի արվարձանում մի փոքր կալված ունեցող վերաբնակի հետ, որ կոչվում էր ¹³⁷⁸ ¹³⁷⁸ ¹³⁷⁸ (Վարդ Վրացի)։ Տվյալ ցեղանունը վրացերեն կլինի «քարթվելի», հունարեն՝ «իվեր», բայց հունարեն վարքում, հունարեն տառերով և հունարեն հոդով այն բերված է հայերեն՝ «Վրացի» (¹³⁷⁸ ¹³⁷⁸ ¹³⁷⁸)։ Դեռ ավելին, վար-

քագիրը ցույց է տալիս, որ տեղի բնակիչները այդ Վարդի կալվածք կոչում են «Վրացու» (¹³⁷⁸ ¹³⁷⁸ ¹³⁷⁸) կալված։ Այս երկու փաստերից կարելի է հանգել չորս կարևոր եզրակացությունների.

- 1) Եթե նա Վարդ է, ապա նա հայ է։
- 2) Եթե նա Վարդ է, բայց «Վրացի», ապա նա վրացադավան հայ է։
- 3) Եթե վարդի բնակչությունը Վարդին տալիս է ցեղանվան հայերեն ձևը (և ոչ հունարեն «իվեր» կամ վրացերեն՝ քարթվելի), ապա այդ բնակչությունը հայկական է և հայախոս։
- 4) Եթե այդ բնակչությունը Վարդին «Վրացի» (վրացադավան) է համարում, անվանում ու հորջորջում, ապա փաստ է, որ ինքն այդպիսին չէր կարող լինել, նա հայադավան էր։

Որպես հայերեն «վրացի»-ի տարբերակ աղբյուրներում հանդիպում է և «իվերացի», Վրաստանի՝ «իվերիա»։ Ժամանակագրական առումով վարքին մոտիկ կանգնած Մտեփանոս Տարոնեցի Ասողիկը գրում է «իվերիացուց ազգ»²⁸, «իվերիացուց աշխարհ»²⁹ և «իվերիա»³⁰։ Սրա լույսի տակ, ինչպես և սբ. Մարիամ Նորավկայի վերոբերյալ քաջատիկ կարևորություն ունեցող փաստերի, կարելի է հարց քարձրացնել Բյուզանդիայում հատկապես Ժ—ԺԲ դդ. գործած մի ոչ հույն բնույթի լեզվաբանի ազգային արտահայտչության մասին ևս։ Խոսքը ¹³⁷⁸ ¹³⁷⁸ ¹³⁷⁸ (Իվերիցի) մականվանն է վերաբերում, որը կրում էին Բյուզանդական կայսրության ալազանու քազմաթիվ ներկայացուցիչներ³¹։ Մինչև օրս այդ մականվան ¹³⁷⁸ ¹³⁷⁸ ¹³⁷⁸ վերջածանցը համարվում էր փառաբանական (հայերեն՝ «իկ») փոքրացնող նշանակություն ունեցող, ինչպես օրինակ Թեոփիլոս-Թեոփիլիցիս³² (փոքր, փոքրակազմ Թեոփիլոս), Նիկո-

²¹ Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 206։

²² Anna Comnena Alexias, lib. II, 4.

²³ Сведения византийских писателей о Грузии, том V, греческие тексты с грузинским переводом издал и примечаниями снабдил С. Г. Каухчидзе, Тбилиси, 1963, стр. 252.

²⁴ Նույն տեղում, էջ 250։

²⁵ Նույն տեղում, էջ 98։

²⁶ Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրություն, էջ 148։

²⁷ Сведения византийских писателей о Грузии, том V, стр. 254.

²⁸ Н. Марр, Архив, стр. 19—20.

²⁹ Մտեփանոս Տարոնեցու Ասողիկան Պատմություն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 35։ Հմմտ. Արիստակես Լաստիվերցի, էջ 32. «գորբն Վեփիացու»։

³⁰ Մտեփանոս Տարոնեցի, էջ 35։

³¹ Նույն տեղում, էջ 96։

³² А. П. Каждан, Социальный состав господствующего класса Византийской империи XI—XII вв., Москва, 1974, стр. 98, 105, 108, 120, 126, 154, 173...

³³ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 6, Բյուզանդական աղբյուրներ, Գիրք Բ, Կոստանդին Միրամանյան, քաղաքագրության բնագրից, առաջարկ և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարսիկյանի, Երևան, 1970, էջ 41, 42, 44, 45։

դասու-Նիկուլիցիս³⁴, Նիկեփոր-Նիկեփորիցիս³⁵ և այլն: Արդ, ավելի տրամաբանական չէ՞ ^{1372-73-ի} -ի- 77-ի վերջածանցի սկզբնական ձևը (եղևելով այս վարքի ^{1372-73-ից} համարել-77-ի, եմթադրել, որ գործ ունենք ^{1372-73-ի} «իվեր-ացի» բառի հետ, չէ՞ որ ի վերա ամենայնի հունարեն արձանագրություններում հանդիպում է հայերեն -ացի վերջածանցը: Հմմտ. Թորթոսի ավագանում գտնվող Էգրեկ (Ագարակ) գյուղի եկեղեցու վրայի 1006/1007 թվակիր հունարեն արձանագրությունը, որտեղ ի միջի այլոց հիշված է պատրիկ Սմբատ ΒΗΧΚΑΤΖΙ (Վիսկացի)³⁶ և գտնել, որ «իվերացին» հետագայում հունարեն տեսք է ընդունել (կարևոր չէ, որ -իցիս վերջածանցի ծագումը հունական չէ): Եթե դա հաստատվի, ապա բյուզանդական իվերիցիս ֆեոդալական ընտանիքի ազգային պատկանելիության հարցը փայլուն կերպով լուծված կլինի, այն կարելի է աներկբայորեն հայկական համարել, քանզի մականվան -ացի հայկական վերջածանցի առկայությունն այլ բանի մասին չի կարող վկայել:

Ար. Մարիամ Նորավկաչի վարքը արժեքավոր տեղեկություններ է բովանդակում նաև միջնադարյան իրավունքի մասնագետներին (ամուսիններից յուրաքանչյուրն իր ունեցվածքը տնօրինում է ըստ իր հաշիցողության, § 5, տեղը իրավասու է ծառայի (տորկի) կյանքի ու մահվան, § 8), ապա և միջնադարյան մարդու հավատալիքները ուսումնասիրելու համար: Նա առատ նյութ է մատակարարում նաև բժշկության պատմությանը զբաղվող մասնագետներին: Մենք վարքից իմանում ենք, թե ժ դարում ո՞ր հիվանդություններն էին համարվում ծանրագույն ու անբուժելի (հոգեկան հիվանդություններ, անդամալուծություն):

Ստորև տալիս ենք ար. Մարիամ Նորավկաչի բյուզանդական վարքի ամբողջական թարգմանությունը՝ հավատացած լինելով, որ հայագետներն այն կգնահատեն ըստ արժանիւյն, նրան կցուցաբերվի անհրաժեշտ ուշադրություն, որին նա արժանի է լիովին:

³⁴ «Советы и рассказы Кекамена. Сочинение византийского полководца XI века». Подготовка текста, введение, перевод и комментарий Г. Г. Ливанова, Москва, 1972, стр. 250, 252...

³⁵ Cedr., t. II, p. 706.

³⁶ H. Bartikian, La généalogie du Magistros Bagarat, Catèpan de l'Orient, et des Kekaumènos, Revue des Etudes Arméniennes, t. II, 1965, p. 262.

Βίος καὶ πολιτεία καὶ μερικὴ θραύσις τῶν
αὐτοῦ μαχαρίων καὶ ἀποδείξεις Μαρίας τῆς νεαρῆς

ԵՐԱՆՈՒՀԻ ԵՎ ՀԱՎԵՐԺԱՀԵՍԱՍԱԿ
ՄԱՐԻԱՄ ՆՈՐԱՎԿԱՅԻ ՎԱՐՔԵՆ ՈՒ
ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Արտաքին մարտերին տղամարդ կոչվածներն են սուս մասնակցում և ցույց տալիս իրենց ֆիզիկական հզորությունը: Բայց առաքինության ապարեզը բաց է ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց, արդյո՞ք առավաճ երկու սեռերին էլ հավասար սիրով շնորհում է մրցանակներն ու հաղթական պսակները, այստեղ մրցման մասնակցելու ցանկացողների համար արգելք չէ ո՛չ սեռը, ո՛չ բախտը, ֆիզիկական անզորությունը, հասարակական դիրքը, ո՛չ մի այլ բան: Այստեղ նախապատվություն չի՝ տրվում տղամարդուն, մի կողմ չի՝ մղվում կինը, մարտում տեղը կամ հարուստը չի՝ գերադասվում ստրկից ու աղքատից, [վերջինը] դուրս չի՝ մղվում ու անարժան չի՝ համարվում, անաշխատությունը չի՝ տրվում չափաֆախն, հատուկ տղամարդուն, անշափահասուն ու մանուկն էլ անպիտան չի՝ համարվում: Ագոնոթետ² [Աստուռն] մեկ է՝ և՛ ամուսնական լծից հրաժարվողները, և՛ այն կրողները, նա այս բարի մարտին մասնակցից դառնալու կոչ է անում երկու սեռերին անխտիր, անկախ իրենց պաշտոնից, հասակից, հասարակական դիրքից՝ երկրպիսի թագավորներին, բոլոր ժողովուրդներին, իշխաններին, երկրպիսի բոլոր դատավորներին, պատանիներին ու աղջիկներին, ձերերին ու երիտասարդներին: Ահա երանունի Մարիամը, մեր սերնդի հրաշքը, որին է նվիրված մեր խոսքը: Թեև նա կին էր, ամուսնացած, երեխաների տեր, բայց այդ ամենը՝ [կնոջ] քնորոշ փափկատնությունը, ընտանեկան հոգսերը, երեխաներին սնելու կարիքն ու հոգսը, արգելք չդարձան, որ նա բարգավաճի Աստծո մոտ, ընդհակառակը, այդ բոլորը է՛լ ավելի նպաստեցին նրա բարգավաճման, նա ցույց տվեց, թե ինչքան սխալ են մեղսագործ մարդիկ, որոնք այդ բոլոր հանգամանքները ստաքինություն գործելու համար արգելք են համարում ու սկսում: Արդ, վերևից սկսենք երանումու մասին ճշմարիտ խոսքը:

2. Կաշերական գայիտնը գտնվում էր Վասիլի ձեռքում, ոչ Եփրանաճնի³, այլ Մակեդոնացու, նրա, ով ձիապանից կայսր դարձավ⁴, Միքայելին սպանեց⁵, [Միքայելին], որի օրոք վերջ առան պատերազմարտների լկտիությունը⁶ ու սկսեց վերստին փրթել ողողափառ դավաճանը: Նա վերջին պատերազմարտ [կայսր] Թեոփիլոսի⁷ որդին էր և գինու առատ օգտագործումը պատճառ դարձավ նրան ծաղիկ «հարկեցող» մականվամբ⁸: Վասիլին ամա նրան սպանելով, տիրացավ թագավորության: Նրա թագավորության օրոք Մեն Հայքի մեծամեծներից

նեկիսողական վասիլ կազմեր: Նա համոզյով բն-
դոնեց նրանց, նվերներ չհարկեց ու պաշտոններ
և քարծրագույն աստիճաններ: Նրանցից մեկն էլ
բարեկաշտ Մարիամի հայրն էր: Նա ուներ երկու
որդի և երեք դուստր, որոնցից երկուսը դեռ հոր
կենդանության օրոք հարսնացան, իսկ մեր կողմից
փառաբանվող Մարիամը, լինելով կրտսերազույցը,
հոր մահից հետո, մնաց մոր մոտ և նրա կողմից
էր դաստիարակվում: Մարիամի քրոջ ամուսինը,
նրան **Վարդ Վրացի** (*Յերեմ* + *Եթաշէշ*) էին ան-
վանում, Թրակիայի Մեսենե լվայում] մի պոռա-
սի⁹ ուներ, որը նրա անունով այսօր էլ դեռ
«Վրացու» [պոռասի] են կոչում (*շոն Եթաշէշ*):
Վարդը հաճախ էր գաղես այդ փոքր կալվածքը,
որտեղ մտերմացավ ու բնկերացավ մի ոմն Նիկի-
փոր դրոնգարի¹⁰, որ ծագումով Կամարաներ կոչ-
ված գյուղից էր: Ժամանակի ընթացքում նրանց
մտերմությունը խորացավ ու անց, իսկ Վարդն
ուղեց այն է՛լ ավելի սերտ դարձնել և մտածում էր
կապը ավելի ամրացնել ու ամփոփոս դարձնել:
Նա մի անգամ խոսքի բռնվելով Նիկիփորի հետ,
ասաց նրան. «Քանի որ, ո՛վ տղամարդկանց մեջ
ամենափրկիս, մենք այդպես մտերմացանք ու
կապվեցինք միմյանց, արդար եմ համարում սիրո
այս կապը է՛լ ավելի ամրապնդել ու կատարյալ
դարձնել՝ խնամիական կապեր հաստատելով. որ-
պեսզի մենք աղերսվենք կրկնակի կապերով՝ և՛
բնկերական, և՛ խնամիական»: Նա շարունակեց ու
ասաց. «Իմ կինը մի կույս քույր ունի, շատ գեղե-
ցիկ, ոչ միայն դեմքով, այլև հոգով, նրա մարմնի
գեղեցկությունը կարծես հոգու գեղեցկության ար-
տաքցումն է: Եթե Աստված կամենա և դու նրան
կին առնես, մեր սերը ամփոփոս կդառնա: Աղջկա
մորն համոզելու՝ դատեր ամուսնությանն հավա-
նություն տալու գործը ես իմ վրա եմ վերցնում»: Այդ
խոսքերը Նիկիփորին դուր եկան և նրանք առանց
հապաղման գնում են Կոստանդնուպոլիս և հարցի
շուրջ գրուցում աղջկա մոր հետ: Նա համոզվում
է և աղջկան տալիս Նիկիփորին: Գեղեցկագույն
Մարիամն ամա տնից դուրս գալով, հետևում է
ամուսնուն:

3. Մյուտոնը չնկատել հնարավոր չէ, անգամ երբ
այն թաքցված է, քանզի նրան մատնում է բուր-
նուրը: Հենց այդպես էլ առաքինագործությունը,
քանզի գործերն են նրա առկալությունը բացահայ-
տում: [Մարդկանց] ուշադրությունը չվրիպեց և
այդ ամենաբարեկաշտ կինը՝ ջերմոտանդությամբ
Տիրոջ ծառայողը: Նրա արարքների վրա հարևան-
ները հիանում էին, նրանց մասին բոլորը խոսում,
քանզի նրա հազարամյությունը բարության արտա-
հայտություն, խոհեմության պլուն, աստվածասիրու-
թյան օրինակ, ողորմածության տիպար, ամենքի
հանդեպ նրա ունեցած բարեկաշտության կերպար
էր: Ոչ որ չուեսավ նրան բարկացած, ծառաներին
զանակոծելիս, հայդդական խոսքեր ասելիս: Նա
արտակարգ սիրում էր սրբաբանները, այն աստի-
ճան, որ կարող էր Դավթի հետ միասին ասել.

«Տեր, սիրելի դիպելչություն տամ քո, ես զուգի
յարկի փառաց քոց»¹¹: Նա չէր հանդուրժում որևէ
բանի կարիք ունեցողին խոժոռ կամ դատարկա-
ձևոն ուղարկել. [իրեն] դիմողը ցանկացածն ստա-
ցած գնաց: Նա արտակարգ հարգում էր քանա-
մաներին՝ որպես Աստծուն տառավորողների և
սարսափելի ու մեծ խորհուրդների պաճապանների,
վանականներին վերաբերվում էր ինչպես հոր՝ և
բոլորի նկատմամբ ամոթեալ էր: Էլ չեմ խոսում
նրա լավ տանտիկնության, աշխատասիրության
մասին, պարզ ու ռատարակ հազնվելու, չափավոր
սեղանի և ալյնի մասին, որոնք նա ի բնե ուներ:
Բայց ինչպե՛ս չխոսենք սուրբ տաճարների հան-
դես նրա ունեցած ջանասիրության մասին, լուել
նրա շտապելու մասին դեպի տաճար, ինչպե՛ս լուել
առ Աստված ուղղված նրա բարեվաշխույն ու զուսպ
օրհներգության մասին: Նա իր տան մեջ աղոթա-
բան չունենալու պատճառով երկեղյան ու աստվա-
յան գյուղի կաթողիկե եկեղեցին էր համայնում:
Նրա ջերմոտանդության առաջը չառավ ոչ վատ
եղանակը, ոչ ժամանակի փոփոխությունը, ոչ ա-
մառվա շոգն ու ձմռան սառնամանիքը, ոչ անձրևն
ու ձյունը, ոչ ճանապարհի երկարությունը, որ մեկ
սազարեզից ավելի էր, ոչ էլ ամեն անգամ գետն
անցնելու անհրաժեշտությունը, քանզի ի վերա
ամենացին չոր ոտքերով գնալ հնարավոր չէր, պետք
էր քրի վրայով անցնել: Ահա այդ [դժվարություն-
ները] կանացի մարմնի մեջ տղամարդու հոգի ու-
նեցողին երբեք չխամբեցրին, նա ետ չմնաց այդ
բարի երթից, միայն ծանր հիվանդությունը կարող
էր արգելք հանդիսանալ: Նրա եկեղեցի գնալը
ինքնանպատակ չէր, նա տաճարի մի ծածուկ տե-
ղում ծուներ էր դնում՝ այնքան ժամանակ, մինչև
քրտիմբը գետին չհուսեր և ինքը ուժապատ չլիներ:
Թե երանուրին ինչքան էր աստվածասեր, ինչքան
էր ողորմած ու մարդասեր գեղակիցների (*հոշոշ-
շոշ*) հանդեպ, կարելի է իմանալ հետևյալ փաս-
տից. մի անգամ պետական հարկերը զանձողն
եկավ, նրան սովորաբար դիպելետես (*ճուշոշոշ*)
են անվանում, և գյուղի պաճապանը վճարելու
հնարավորությունը չունեցող բնակիչներին ձեռ-
բակալում ու տանջելով բանտ էր նետում: Ի՞նչ ա-
րեց այդ գրացող հոգին: Այդ լուրի վրա նա վատ
զգաց, չկարողացավ տանել գյուղի բնակիչների
տառապանքները և աչք գցեց իր ունեցվածքին,
ոսկի փնտրեց տառապալներին ազատելու համար,
բայց չգտավ, դրա համար ճանրոները իրեն պարտ-
քով տվեցին: Պարտք վերցրած [դրամը] նա մի
շնորհքով մարդու միջոցով ուղարկեց այն [հարկա]-
հավաքին և բաճառարկալներին ազատեց: Բանտից
ազատվածները յուրաքանչյուրն իր տունը չզնաց,
այլ բոլորը բերկրայից եկան իրենց փրկարարի
մոտ՝ փառաբանելով նրան ու [նրա] բարեգործու-
թյունը համբավելով: Ծառերից ամա այս մեկ
փաստը [ես բերեցի], ցույց տալու համար նրա
սկզբնական շրջանի մարդասիրությունը: Իսկ ինչ-
պիսի՞ն էր նա արտակարգ դեպքերում ու փորձու-


քյանների ժամանակ: Մեկ բուլամորթորեն վնասվում էր ու նուսարիկ լինում, կամ ընդհակառակը՝ բազարաբ տանում ու արիանում: Մի խոսքով նրա մեջ չէր բացակայում և ոչ մի մարդկային գիծ, և չպետք է մեղադրել դժբախտությունների մեջ ընկած աստվածասեր [կնոջ]: Այդ մասին [այժմ] կատվի:

4. Ամուսնության պտուղը արու զավակ էր և մանկան նա Օրեստես անվանեց: Երեխան մինչ տարեկան էր, երբ մահվան մանգաղի անժամանակ հունձը դարձավ: Ուրիշները ինքնաբերական լաց էին լինում ու կուրծք ծեծում, սակայն նա, մայր լինելով, ճիշտ է, արտակոտոր էր լինում, բայց իր ներքում էր պահում կակիժը, թեև բացահայտորեն արտավում էր, բայց անտեղի ոչինչ չարեց, մագերե չփետեց, ացտերը ձեռքերով չկեղեքեց, շորերը չպատռտոտեց, գլխին հող չթափեց, հայհոյիչ խոսքեր չասաց, նա իսկույն հաղթահարեց բնությունը, միայն այնքան արտավեց, ինչքան [պետք է] ցույց տալու համար, որ մայր է: Նա գոհամամ էր ասում մեր հոգիների պահպանման և ցածր ձայնով ու առողջ մտքով մեծահոգաբար Հորի խոսքերն էր ասում. «Տէր ետ եւ Տէր առ. որպէս Տեսան հաճոյ թուեցա՝ նոյնպէս եւ եղեւ. եղիցի ամուն Տեսան օրհնեալ յախտեամա»¹²: Այդպես համբերությամբ ու գոհությամբ էր նա տանում փորձությունները: Եթե նա միաձին որդու մահն այդպես բազարաբ տարավ, ապա այլ ցավերը նա ինչպիսի չէր կարող դյուրությամբ ու համբերությամբ տանել:

5. Իսկ ի՞նչ եղավ այնուհետև: Մարիամը երկրորդ որդի ունեցավ, որին Վարդան կոչեց, ապա զնաց Բիզյուն¹³: Վերաբնակության պատճառը հետևելով էր: Վասիկ կայսրից հետո իշխանությունը ժառանգեցին նրա որդիներ Լևոն Իմաստունն ու Ալեքսանդրը¹⁴, իսկ բուլղարների իշխան Սիմեոնը¹⁵, անունով քրիստոնյա, արյունաբորու մի մարդ, այն ժամանակները արշավում է հոռուպեցիների վրա և բազում ժողովուրդ կոտորում¹⁶: Ահա այն ժամանակ Մարիամի ամուսին Նիկիփորը աչքի է ընկնում բուլղարների դեմ պատերազմում և կայսրերի բողոքմամբ ուղարկվում Բիզյունի տուրման¹⁷: Նա գնում է այնտեղ կնոջ և երեխաների հետ: Այստեղ Մարիամը, ճիշտ է, թեև գլուղական կյանքը քաղաքայինով փոխարինեց, բայց իր կենցաղավարությունը չփոխեց, նա նույն հակումներին էր մեռնում: Նա աստար էր կանգնում այդ կամանց ու որբերին, հոգում բարանձավներում ու տնակներում ճգնող վաճառականների կարիքները: Մի ինչ-որ քահանայի մտերմանալով, նրա միջոցով հոգում էր շրջակա տաճարների հարդարման: Նրա կյանքում միայն մեկ բան փոխվեց, այն, որ նա այլևս ամեն օր եկեղեցի չէր գնում, ինչպես նախկինում, այլ տանն էր աղոթում, երկրպագելով Աստվածամոր պատկերին և երգելով պատշաճ օրհներգն ու սաղմոսները: Նա լավ էր յուրացրել [Սաղմոսի] գիրքը: Այդպիսի փոփոխության պատճառը ոչ անտարբերությունն էր, ոչ էլ ծուլությունը,

այլ հաշվենկատ ամոթխածությունը, բազմամարդ քաղաքում բոլորի աչքին չեղևալու ցանկությունը՝ լինեն նրանք օտարականներ կամ տեղացիներ: Մենք նրա [կենցաղավարության] միայն այս մեկ փոփոխությունն արձանագրեցինք, իսկ շնացած ամեն ինչում նա նույն ձևով շարունակում էր, նույն կարգ ու կանոնով: Լսեց հավերժափշտակը Փրկչի ձայնը. «Մի՛ արհամարհիցեք զմի ի փոքրիկացս յայցսանէ»¹⁸ և նրանց հրեշտակներին ջանում էր վկա ունենալ նրանց նկատմամբ իր ցուցարկած հոգատարության: Եթե իրեն դիմեր տիրոջ փողը կորցրած, կամ ապաքը կտրած որեւ մի օտար ստրուկ, նա [Մարիամից] ասանում էր կորցրածը և քերկրացած վերադառնում իր տիրոջ մոտ՝ առանց ասրափելու ծեծ ու զանակոծումից: Նա իր ծառաներին ու աղախիներին վերաբերվում էր ոչ ինչպես ստրուկների, նա ափսոսում էր նրանց, կարծես իր [տան] անդամները լինեին, իմաստությամբ դատելով գտնում էր, որ նրանք ևս Աստծու սրբաբաններն են՝ նույն բնությամբ օծոված, նկատի առնում, որ ամեն մի ֆիզիկական, ամենից օժկարին աշխատանքը ստրուկներն են կատարում, այն ժամանակ երբ մենք հաճախ հանգիստ նստած ենք: Այդ պատճառով նա չէր ուզում խոշտանգել նրանց, ընդհակառակը, ջանում էր սնուցանել ու հոգալ նրանց: Նա հրաման էր տալիս օտարականների առջև [տան] դնելը չփակել, դռները բաց էր ընդունում և աստաձեռն հյուրընկալելով, նրանց քերկրացած ճամփու էր դնում: Եթե [հյուրընկալվողները] վաճառականներ լինեին, էլ ինչպիսի՝ պատիվ, ինչպիսի՝ հյուրասիրություն էր նա ցուցաբերում նրանց նկատմամբ, կարծես երկնքից իջած, աղոթք ու երկմանք ընձանք քերող Աստծու հրեշտակներ լինեին, այդպես էր նրանց ընդունում ու պատվում, հաճույքով ողջունում: Այդպիսին էր նա ուրիշների նկատմամբ, բայց իր հանդեպ անուշադիր էր և զարդ էլ համարում համեստությունը: Նա աստվածային Պողոսի մեծ խրատի համաձայն¹⁹ չէր կրում ոսկեղեն ու [ճոխ] հանդերձներ: Նա ոսկե [զարդերը], փայլուն ու թանկագին բարերը, ճոխ հանդերձները աղբատների ձեռքով իր հոգում էր կրում: Նա ինչ որ ծառանգություն էր ստացել, ամենը թողեց երկնային զանձի հետ, նա [իր] զավակներին ոչինչ չթողեց, նա իր ամուսնու ունեցվածքի և ոչ մի բանին ձեռք չտվեց, որպեսզի դրանք ստվեր չգցեն իր արարքների վրա և որպեսզի [ամուսինն] իրեն շտապության մեջ չմեղադրի և տունը տակնուվրա լուծված չլցնի: Ինչ վերաբերում է նրա սեղանին, ապա եթե ամուսինը քաղաքից չէր բացակայում, միայն մեծ պահքն էր պահում, իսկ թեև նա գորակոչվելով հեռանում-գնում էր, նա ընդհանրապես հրաժարվում էր միս ուտել, պատճառաբանելով ամուսնու բացակայությամբ, բայց իրականում նկատի ուներ պահքից ձեռք բերած օգուտը: Նա գիմի էլ չէր խմում, մանուկ հասակից նրա համը չէր տեսել, քանզի իր վրա բացասաբար էր անդադարացնում:

(Շարունակելի)



ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԼԱԹԵՅԻՆ (ԾԵՐԵՆՑ) ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ

Միջնադարյան հայ մշակույթի գործիչների մեջ ուրույն տեղ ունի հիշատակագիր և գանձասաց, խմբագիր և մեկնող, բազմադյուն գրիչ Գրիգոր Խլաթեցին: Նրա կենսագրությունից ոչ քիչ տվյալներ են հասել մեզ. բացի այդ, Խլաթեցու աշխատությունների կապակցությամբ ուսումնասիրողները անդրադարձել են նաև այդ հարցերին¹: Գրիգոր Խլաթեցին ծնվել է Խլաթ քաղաքում 1340-ական թվականներին: Հոր անունը Ծեր էր և այդ պատճառով նրան երբեմն կոչել են Ծերեց: Նախապես, շուրջ վեց տարի, աշակերտում է Վարդան ճգնալորի մոտ Արծկեի Ցիպնավանքում: Այնուհետև գնում է Սյունիք՝ Հովհաննես Որոտնեցու դպրոցը, և այդտեղ էլ ծանոթանում Գրիգոր Տաթևացու հետ:

¹ «Ցիշատակարան Աղետից Գրիգորի Խլաթեցու», աշխ. Գր. Խալաթյանց, Վաղարշապատ, 1897: **Մ. Արեղյան**, Գրիգոր Խլաթեցի Ծերեց, «Երկեր», Դ, Երևան, 1970, էջ 408—409: **Գաբեղին արքեպ. Հովսեփյան**, Խաղրակեանք և Պողոսեանք հազոց պատմութեան մէջ, Երուսաղեմ, 1942, էջ 40, 114, 119: **Հ. Աճառյան**, Հազոց անձնանունների բառարան, Ա, Երևան, 1942, էջ 608—609: Գրիգոր Խլաթեցու կյանքն ու կենսագրությունը հատուկ քննության նյութ է դարձել պատմության ինստիտուտի աշխատակից Սեդա Մարաբյանի համար: Աշխատությունը անտիպ է:

Ույ՞ տարի մնալուց հետո, երբ մահանում է Որոտնեցին, և երբ Լանկ-Թամուրը ասպատակում և ավերում է Հայաստանի այդ վայրերը², Խլաթեցին ստիպված է լինում վերադառնալ իր հայրենի գավառը և Քաջբերունյաց Սուխարավանքում աշակերտում Սարգիս վարժապետին: Տասը տարի անց նա ստանում է վարդապետական աստիճան և հաստատվում Արծկեի Ցիպնավանքում: Այստեղ էլ արդեն սկսվում է Խլաթեցու արգասալից գործունեությունը: Նա իր շուրջն է հավաքում բազմաթիվ աշակերտներ. շուրջ հիսուն տարի ձեռագրեր է ընդօրինակում, որոնք կա՛մ նվիրում է եկեղեցիներին և կա՛մ վաճառելով՝ արդյունքը բաշխում աղքատներին:

Խլաթեցին միաժամանակ շրջագայում է Հայաստանի տարբեր վայրերում (օրինակ, Գանձերի ժողովածուն կազմելու համար 1387 թ. լինում է նաև Այրիվանքում), իսկ 1406 թ. կեսերին, Վարդան Հոգեցեցու մահից հետո, նա ստանձնում է Խառաքատի դպրոցի տեսչությունը³:

Յոթանասուն տարեկանից անց էր, երբ

² Այս տվյալը բերված է Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանից»: Թվում է, պատեղ ժամանակագրական փոքրիկ անճշտություն կա:

³ Տես **Ս. Մաթևոսյան**, Չեռագրագիտական սրբազրություններ, «Էջմիածին», 1968, Ե, էջ 61:

ովստի գնաց Երուսաղեմ և, երկու տարի մնալուց հետո, վերադարձաւ: Ահա այդ միջոցին տեղի է ունենում բրդերի հարձակումը Արծկեի և Յիսկաւականի վրա, ուր Գրիգոր Խլաթեցուն բռնեցին և հալատքը չորանայու պատճառով մահատակեցին (1426 թ.):



Նկար 1

Խլաթեցու գրական կարևորագույն գործերն են Հայսմաւորքը և Գանձարանը: Ըստ որում, Հայսմաւորքի նոր խմբագրությունը կոչվել է իր անունով՝ «Ծերեցեց», իսկ Գանձարանում ավելացրել է նոր երգեր ու գանձեր:

Մյուս գործերից պետք է հիշել Ծննդոց գրքի մեկնությունը, Խրատ ժամատեղացը, Գովությունն Սաղմոսի, Հանելուկներն և այլն: Գրիգոր Խլաթեցու գրական գործունեության մեջ առանձնահատուկ նշանակություն է ստացել 1422 թ. շարադրված «Հիշատակարան աղետիցը» կամ «Պատմություն Լանկ-Թամուրի հաջորդաց սև և

սպիտակ ոչխարավորացը»⁵: Նրա տաղերից հիշատակվի են «Գանգատ ունիմ սակ Գեզ, թագավոր իմ Հիսուս Քրիստոս» և «Ողբ մեռելին»:

Ժամանակակիցներն ու նրա անմիջական հետևորդները ամենաբարձր տիտղոսներով են շնորհագարդել մշակույթի այս մեծանուն գործչի անունը. «Զնոգևոր հայրն մեր և զծնադ զմեծ քաբունապետն Գրիգորիոս որդի Ծերին»⁶, «Վարդապետին Գրիգորի եռամեծին»⁷, «Յաւատաւաւրբնակ ուխտս, սո մեծ վարդապետիս Գրիգորի մականուն Ծերեցեց»⁸: Հետագայում Խլաթեցու անունը գրեթե սրբացվում է՝ «Սուրբ վարդապետ», հիշատակվում նվիրական այլ անունների կողքին՝ Տաթևացի, Որոտնեցի, Կեչաւեցի, Բաղիշեցի և այլն⁹:

Նրա ձեռագրերը հանդիսացել են ամենաբնութի օրինակները հետագա բնօրինակների համար. «... յնոյիք և ի լաւարիմակէ, զոր էր ստուգ քաներ .սուրբ վարդապետն Գրիգոր Ծերեցեց»¹⁰:

Մեզ հայտնի են նաև Խլաթեցու աշակերտներից մի քանիսի անունները, որոնցից հատկապես ուղում ենք ստանձնացնել Սուսքել Բաղիշեցուն և Հովհաննէս Խլաթեցուն:

Գրիգոր Խլաթեցու բնօրինակած քաղմաթիւ ձեռագիր-մատյաններից մեզ հայտնի են տասը:

1. Գանձարան, ձեռ. Մատ. № 5328, շուրջ 1388 թ., Յիսկաւական, գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի, ստացող՝ Թումա, թերթ՝ 293, թուղթ, 27×17 մեծությամբ, երկայուն, թվորագիր: Գրչի հիշատակարանը՝ 289թ էջում:

2. Ավետարան, 1393 թ., Յիսկաւական, գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի¹¹:

3. Ժողովածու, ձեռ. Մատ. № 5435, 1400 թ., Խաւաթաստա վանք, գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի, ծաղկող՝ Ներսէս պատանի, ստացող՝ Սանվել, թերթ՝ 584, թուղթ, 27,5×18 մեծությամբ, երկայուն, թվորագիր: Գրչի հիշատակարանը՝ 470թ էջում:

⁵ «Հիշատակարան աղետիցի» համեմատական բնագիրը՝ համապատասխան ծանոթագրություններով հրատարակված է Լ. Ս. Խաչիկյանի «ԺՆ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների» Ա հատորում, Երևան, 1955, էջ 272—288:

⁶ Հիշատակարաններ, ԺՆ, Գ, էջ 324:

⁷ Հիշատակարաններ, ԺՆ, Գ, էջ 345:

⁸ Հիշատակարաններ, ԺՆ, Գ, էջ 347:

⁹ Հիշատակարաններ, ԺՆ, Գ, էջ 152:

¹⁰ Հիշատակարաններ, ԺՆ, Գ, էջ 52—53:

¹¹ Լ. Ս. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 599: «Ազգագրական Հանդէս», 1897, Բ, էջ 281—284:

⁴ Գրիգոր Խլաթեցու մահատակության պատմությունը (նրան սպանել է բուրդ քնկ Թովկանը) շարադրել է Թովմա Մեծոփեցին («Նոր վկայք», էջ 264—272):

4. Ավետարան, 1402 թ., Մատենական, խլար, գրիչ՝ Գրիգոր Խլարեցի¹²:

5. Ճառքնոց, ձեռ. Մատ. № 1520/1521, 1404—1406 թթ., գրիչ՝ Գրիգոր Խլարեցի, ստացող՝ Ստեփանոս, թերթ՝ 402/453, թուղթ, 62,5×39 մեծության, երկայուն, բոլորագիր: Կան մանր հիշատակագրություններ:

6. Մատյան ողբերգության Գրիգոր Նարեկացու, ձեռ. Մատ. № 1573. 1413 թ., գրիչ՝ Գրիգոր Խլարեցի, թերթ՝ 345, թուղթ, 15,3×11 մեծության, միասյուն, բոլորագիր, գրչի հիշատակարանը՝ 340բ էջում:

7. Ժողովածու, ձեռ. Մատ., № 8775, 1415 թ., Երուսաղեմ, գրիչ՝ Գրիգոր Խլարեցի, ծաղկող՝ Գրիգոր երեց, կազմող՝ Գրիգոր, ստացող՝ Մկրտիչ, թերթ՝ 368, թուղթ, 18,5×13,9 մեծության, միասյուն, բոլորագիր: Գրչի հիշատակարանը՝ 220բ էջում:

8. Ավետարան, ձեռ. Մատ. № 3714, 1419 թ., Ցիպնավանք, գրիչ՝ Գրիգոր Խլարեցի, ստացող՝ Հովհաննես երեց, թերթ՝ 265, մագաղաթ: 23,5×16 մեծության, երկայուն, բոլորագիր: Գրչի հիշատակարանը՝ 268ա էջում:

9. Մատյան ողբերգության Գրիգոր Նարեկացու, ձեռ. Մատ. № 7019, 1423 թ., գրիչներ՝ Գրիգոր Երզնկացի և Գրիգոր Խլարեցի, ստացող՝ Կիրակոս, թերթ՝ 168, թուղթ, 15,5×12,8 մեծության, միասյուն, բոլորագիր: Գրչի հիշատակարանը՝ 164բ էջում:

10. Գանձարան, ձեռ. Մատ. № 8366, 1425 թ., Ցիպնավանք, գրիչ՝ Գրիգոր Խլարեցի, ստացող՝ Աստվածատուր, թերթ՝ 212, թուղթ, 15×11 մեծության, միասյուն, բոլորագիր: Գրչի հիշատակարանը՝ 212ա էջում:

Այս տասը ձեռագրերից զատ Մատենադարանում գտնվում են մեկ-երկու այլ ձեռագրեր¹³, որոնց ընդօրինակությունները, հավանաբար, անմասն չեն եղել Գրիգոր Խլարեցու մասնակցությունից, թեև մեր այդ ենթադրությունը ճշգրտման կարիք ունի:

Ձեռագրերի հիշյալ ցանկից պարզ է դառնում, որ Խլարեցին իրեն միշտ անվանել է գրիչ և այդ մասին միանման տողեր թողել. «Եւ արդ, գրեցաւ սա ի վանս Ցիպնայ, ընդ հովանեաւ ամենագոր սուրբ Նշա-

նի և սուրբ Ստեփանոսի, ձեռամբ յոգնամեղ և անիմաստ գրչի Գրիգորի պիտականուն վարդապետի, յամի ՊԵԸ (1419) թրականի, ի հայրապետութեան տեսուն Պատրիարքի և յաշխարհակալութեան Ղարա-Ռսաֆին» (ձեռ. Մատ. № 3714):



Նկար 2

Որպես նաև ծաղկող նա կոնկրետ հիշատակություն չի արել (ինչպես մեր շատ մանրանկարիչները)¹⁴: Բայց անուղղակի մի քանի փաստեր հաստատում են, որ Գրիգոր Խլարեցին քաջահմուտ է եղել նաև այդ արվեստին և ինքն էլ, մեծ մասամբ, հանդիսացել իր ընդօրինակած ձեռագրերի ծաղկողը: Որոնք են այդ փաստերը.

ա) Ակնհայտնի նույն ձեռագրատճն ենք տեսնում ինչպես բնագրերի, այնպես էլ գեղանկարի քաջատրագրություններում. իսկ վերջիններս, որպես կարգ, կատարվում էին ծաղկողների կողմից: Խլարեցու ձեռագրա- ոճը այս դեպքում տարակուսանքի տեղիք չի տալիս: Ինչպես հմուտ ձեռագրագետ Ա. Մաթևոսյանը նկատել է, «Գրիգոր Խլարե-

¹² Տես «Հանգես Ամսօրեայ», 1917/1918 թթ. էջ 59: «Հիշատակարաններ», ԺԵ, Գ, էջ 308:

¹³ Ձեռ. № 2783, Ճառքնոց, 1408 թ., Գ. Տաթևացի, Գիքը Հարցմանց, 1413 թ., Խառնարանա վանք, Մատ. № 917, Գ. Տաթևացի, քարոզ- գիրք, 1416 թ., Մատ. № 2047:

¹⁴ Օրինակ, Սիմեոն Արճիշեցին, Թումա Մինասնեցը, նույնիսկ Թորոս Ռոպինը իրենց երբեմն գրիչ են համարել: Հատկապես Վասպուրականում «գրիչ» համարելու ձևը շատ էր ընդունված:

ցին ինքնատիպ գրչություն ունի, նույնիսկ որոշ տատերի իրեն հատուկ գրչություն, որով անմիջապես մատնում է իրեն»¹⁵:

բ) Խլաթեցու ձեռագրերում հանդիպում են նրա՝ որպես նկարչի հուշող մեկ-երկու



Նկար 3

վկայություններ: Օրինակ՝ № 1520 Ճառքն-տիրի մանրանկարների կապակցությամբ (որ դրանք ծաղկել ու նկարազարդել է Խլաթեցին) Ա. Մաթևոսյանը բերում է այսպիսի մի փաստ. 49-րդ պրակի լուսանցքներից մեկում «Քրիստոսի քառասունա-րեայ ի տաճարին յընծայումն» ճառի դիմաց նկարված է մի շքեղ տաճար և ստորին լուսանցքում Խլաթեցու ձեռքով գրված. «Այս արարի, որ թիւն ի ՊԾԵ էր: Տաւնս, ի յայս տեղս եղաք»¹⁶: Դա արդեն նկարչի ստորագրության մասն մի բան է:

գ) Այն դեպքերում, երբ նկարազարդումների հեղինակն այլ անձնավորություն է, ձեռագրի հիշատակարանում կամ հիշատակագրություններում բարեխղճորեն նշվում է հիշյալ անձնավորության անունը,

¹⁵ «Ձեռագրագիտական սրբագրություններ», (Էջմիածին, 1968, Ե, էջ 80):

¹⁶ Ձեռագրագիտական սրբագրություններ, (Էջմիածին, 1968, Ե, էջ 80):

(օրինակ, 1400 թ. ժողովածուում՝ ծաղկող Ներսես պատանի, հավանաբար Խլաթեցու աշակերտներից): Իսկ երբ նկարների բացատրագրություններն ու բնագրի ձեռագրատճը դրսևորում է բացարձակ նույնություն (այսինքն երկու դեպքերում էլ Խլաթեցին է), բնականաբար, մեկ այլ նկարչի անուն չի հիշվում¹⁷:

Կարծում ենք, որ այս փաստարկումներն անստարկելի են, և Գրիգոր Խլաթեցին հանդիսանում է իր ընդօրինակած ձեռագրերի նկարազարդումների հեղինակը:

Խլաթեցու պատկերազարդած ձեռագրերից թեմատիկ մանրանկարներ պարունակում են երկուսը. Խառաքաւսա վանքում 1393 և Ցիւղնավանքում 1419 թթ. ընդօրինակված Ավետարանները¹⁸: Առաջին Ավետարանի մասին տեղեկությունները բաղել ենք «Ազգագրական Հանդեսից». «Դիլիսկայ գիղի եկեղեցում (Ջավախք) կայ քառածալ, քամբակի թղթի վրայ երկշար, բոլորագիր տառերով գրուած մի Աւետարան, որ զարդարուած է Քրիստոսի մարդեղութեան տանկչորս և չորս աւետարանիչների եօթը պատկերներով: Սա կոչում է Ամենափրկիչ և ամեն կիրակե քազմաթիւ ոխտաւորներ ունի»¹⁹:

Կցկտուր այս տողերից երևում է, որ Դիլիսկա գյուղում գտնվող Ավետարանն ունեցել է հարուստ նկարազարդումներ (տանկչորս թեմատիկ պատկեր), թեև փոքր-ինչ անորոշ է չորս ավետարանիչների յոթ պատկերների իմաստը: Այստեղ երկու ենթադրություն կարելի է անել. կա՛մ ավետարանիչների հետ եղել են նաև համապատասխան առաքյալները²⁰ և կա՛մ պատ-

¹⁷ Մաշտոցյան Մատենադարանի «Ցուցակ ձեռագրացի» (Երևան, 1965, հատ. Ա, Երևան, 1970, հատ. Բ) հեղինակները ևս գտնում են, որ Խլաթեցու ընդօրինակած ձեռագրերի հեղինակը ինքն է: Տես № № 5328 (էջ 83), 8775 (էջ 811) և այլն:

¹⁸ Խլաթեցու ընդօրինակած մյուս ձեռագրերը համեմատաբար աղքատ են նկարազարդումներից. կան գլխազարդեր, լուսանցազարդեր, զարդագրություններ, որոնք, բացառությամբ մեկ-երկու հետաքրքրական ցմուշների, սովորական ձևեր են ներկայացնում:

¹⁹ «Ազգագրական Հանդես», գիրք Բ, 1897, Թիֆլիս, էջ 281:

²⁰ Հազվադեպ, բայց հանդիպում է ավետարանիչների այնպիսի պատկերազարդություն, երբ առաքյալները թեղադրում են ավետարանիչներին: Պետրոս առաքյալը թեղադրում է Մարկոսին, իսկ Դուկասին՝ Պողոս առաքյալը (տես այդ մասին ավելի հանգամանորեն Գ. Հովսեփյան, Խաղբակյանը կամ Պողոսյանը Հաղոց Պատմության մեջ, մասն Ա, Վա-

վիրատուների դիմապատկերները, ինչպես դա կոտենենք 1419 թ. քնդորինական ձեռագրում:

Ընտիր ձեռագիր է 1419 թ. Ավետարանը: Սկզբի 1ա—4բ էջերը պարունակում են համարաբարտի խորանագարդերի մեկնության բնագիրը, մի բան, որի կարևորությունը մեծ է հայկական ձեռագրերի խորանների զարդագրության իմաստային քաջատրությունների համար: Տվյալ դեպքում դրա պատկանելիությունն այնպիսի ճշմարտապատում և խորագիտակ մի հեղինակի, ինչպիսին Գրիգոր Խլաթեցին է, իրավունք է տալիս խորանների մեկնությանն սույն բնագիրը դասել այդ կարգի լավագույն գործերի՝ Շնորհալու, Վարդանի, Սյունեցու մեկնությունների շարքին:

Թեմատիկ մանրանկարները սկսվում են ձեռագրի 5ա էջից. «Մկրտություն», «Այլալերպություն», «Հիսուսի հրաշագործությունները», «Ղազարոսի հարությունը», «Մուսր դեպի Երուսաղեմ», «Համբարձում» և «Ս. Հոգու Գալուստը»: Այս ցանկից պարզ է դառնում, որ թերթաբաթի են եղել «տոնական» մի շարք կարևոր տեսարաններ, որոնք պարտադիր են Ավետարաններում՝ «Ավետումը», «Ծնունդը», «Ռոտնվան», «Մատնությունը», «Խաչելությունը», «Հարությունը», «Իծխքի ավերումը»:

Պահպանված պատկերները, քաջատությամբ թերևս «Ղազարոսի հարության», ներկայացված են տիպիկ վասպուրականյան սխեմաներով, որոնք մեզ քաջ ծանոթ են Խլաթեցու ճախորդած վարպետների ստեղծագործություններից²¹: «Ղազարոսի հարությունը» վասպուրականում գրեթե պարտադիր դարձած թեմա է, որն ունի իր հատուկ նշանակությունը: Հիսուսը հարություն է տալիս մեռած Ղազարոսին՝ դրանով իսկ հավաստելով իր աստվածային հրաշագործ կարողությունը, միաժամանակ շեշտելով ապագա համընդհանուր հարության գաղափարը²² (ինչին տեսնում էր հարյուրամյակներ շարունակ օտարի ծանր լծի տակ գտնվող վասպուրականցին):

Տեսարանն ավելի արխայիկ բնույթ ունի. ճիմական միտքն արտահայտվում է եր-

կու գլխավոր կերպարների՝ Հարություն տվողի և հարուցչի միջոցով: Ինչպես Գ. Միլլեն նկատել է²³, հետագայում այդ կարգի հորինվածքներն աշխուժացվել են այն հետաքրքրությամբ, որը դրսևորվել է դեպ-



Նկար 4

քին ներկա գտնվող Բեթղեմեի հողանքի խմբով²⁴. իսկ դա նկարին տվել է գեղարվեստական-գաղափարական որոշակի միտվածություն²⁵:

Գրիգորի մոտ Հիսուսին ուղեկցում են երեք աշակերտ. չկան ժողովրդի քաղմությունը և այլն: Նման կարճատևությունը ավելի հարազատ է հին բնագրերին ու պատկերագրական-պայմանական ձևերին: Սակայն մեր հեղինակն, այսպես ասած, ժանրային մեկ-երկու մանրութների ավելի ցայտուն արտահայտման շնորհիվ պատկերին հաղորդել է որոշակի աշխուժություն՝ ազատելով այն պատկերագրական չոր սխեմատիզմից ու կրավորականությունից: Հիսուսի ոտքերն քնկած քույրերից մեկը՝ Մարթան, գլուխը բարձրացրած շատ բնական էտ է շրջել ու նայում է հարություն

²³ G. Millet, Recherches sur L'iconographie De L'evangile aux XI^e, XV^e, et XV^e siecles, Paris, 1960, p. 240—251.

²⁴ Ինչպես դա ներկայացված է Հովհաննու Ավետարանի 11-րդ գլխում. «Բազումք ի հրէից անտի եկեալ էին առ Մարթա եւ Մարիամ, զի մօրիաքեցեմն զնոսա վասն եղբորն»:

²⁵ Ն. Պոկրովսկին նշում է, որ երբեմն Ղազարոսի հարությունը արտահայտել է մարդկային հոգին դժոխքից դուրս բերելու բնդհանուր միտքը (տես Н. Покровский, Евангелие в памятниках иконографии преимущественно византийских и русских, СПб., 1892, ст. 252).

վարձապատ, 1928, էջ 150—152): վասպուրականի 18-րդ դ. մեկ-երկու ձեռագրերում ևս այդպիսի օրինակներ կան:

²¹ Այդ մանրանկարիչների մասին տես «Էջմիածին», 1973, Գ, էջ 48—53, 1974, Գ, էջ 28—33, ԺԱ, էջ 49—57:

²² Как факт подтверждающий возможность и действительность общего воскресения (Иоанн Златоуст, Беседы на св. Иоана, 1665, ст. 468—469,

առնող եղբորը: Դեպքին ներկա գտնվող երկու երիտասարդներից մեկը վերցրել է գերեզմանաքարը, իսկ մյուսն օգնում է Ղազարոսին պատանքից դուրս գալու: Տպավորիչ է Հիսուսի ձեռքի օրհնող շարժումը:



Նկար 5

Գրիգոր Նյաթեցու այս ձեռագիրն առանձին ուշադրություն է գրավում ճանաչողական նշանակություն ունեցող մեկ նկարով: Ձեռագրի 14բ էջում ներկայացված է մեզանում շատ հայտնի տարրական դպրոցի պատկերը: Թվում է, որ հայկական ձեռագրերում առաջին անգամ ենք հանդիպում նման տեսարանի և այն էլ Գրիգոր Նյաթեցու մոտ, որը միանգամայն բացատրելի է: Լինելով ուսուցչապետ, դպրոցի հիմնադիր ու վերատեսուչ, ունենալով բազմաթիվ աշակերտներ, Նյաթեցին տվյալ առիթն օգտագործել է երիտասարդ սերնդի դաստիարակման ու դպրոցի գաղափարները մասսայականացնելու համար: Նկարի ձախ կողմում, արտոյի վրա, բազմել է վարդապետը: Նա ձախ ձեռքին բռնել է խառազանը, աջ ձեռքին՝ մի տախտակ, վրան գրված «Երանեսայ է այր որ»: Քահանայի դիմաց, ձեռքերը կրծքին մեղապարտի պես ծալած, կանգնել է աշակերտը. ավելի աջ,

հատակին, ծաղապատիկ նստել է մեկ ուրիշը (վարդապետի սպասավորը)՝ ձեռքին թարմ միստներ, որոնք պետք էին գալու վարդապետին աշակերտներին խառազանելու համար²⁶: Բոլորովին չժխտելով «տարրական դպրոցի» այս բացատրությունը, նկարից ստացած տպավորությամբ մենք կարող ենք մեկ այլ ենթադրություն ևս անել. քահանայի առջև կանգնած է մի երիտասարդ այր (գուցե և նրա աշակերտը), որը ոչ թե ծուլացել է սովորելու դասը, այլ փոքրիկ զանցանք է կատարել, վարդապետը նրան հիշեցնում է սաղմոսի հայտնի խոսքերը. «Երանեսայ է այր, որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց. ի ճանապարհի մեղադրաց նա ոչ եկաց, և յաթոռս ծանոց նա ոչ նստաս»²⁷ և պատժում նրան ճիպտահարելով: Ավետարանը կոչված էր մարդկանց դաստիարակելու, նրանց զանազան «շեղումներից» ետ պահելու նպատակին, մի բան, որին միանգամայն ձրգտել էր ընդգծել հենց Ավետարանում գրությունը այդ պատկերը²⁸: Սաղմոսի այս խոսքերն ունեն և իրենց հաշտի մեկնաբանությունները, ըստ որի այն ավելի շատ արտահայտում է քրիստոնեական գաղափարախոսության հիմնական միտումը. Անբարիշտներին չհետևել՝ և ընդունել ավետարանական պատգամները, որոնք երանելի հատկանիշ են մարդու համար²⁹: Խլաթեցու աշխատանքն այս առումով էլ շատ բնորոշ է Ավետարանին, որպես առաջին սրբազան խրատ ամեն մի երիտասարդ ընթերցողի:

Ձեռագրի 15ա էջում ներկայացված են պատվիրատուները՝ դեմ-դիմաց նստած. Հովհաննես երեցը և նրա հայր Դանիել քահանան: Վերջինս ձեռքերը պարզել է դեպի սուրբ Գիրքը, որը գտնվում է Հով-

²⁶ Աղապես է մեկնաբանել պատկերը պրոֆ. Լ. Ս. Նաչկելյանը ԺԵ դարի հիշատակարանների Ա հատորում, էջ 225 (արտահայտված է նաև նկարի պատճենը):

²⁷ Տես «Գիրք սաղմոսաց Դավթի», Վեներտիկ, 1855, էջ 3 (Սաղմոս Ա. 1):

²⁸ Եթե դա տարրական դպրոց է, ապա ուշագրավ է Նյաթեցու դավանաբանական դպրոցում պատմի մեջ նաև ծեծը կիրառելու համար: Ի դեպ, միանգամայն համամիտ ենք նաև պրոֆ. Լ. Նաչկելյանի այն կարծիքին, որ Նյաթեցին ի դեմս այդ վարդապետի իրեն է ներկայացրել՝ իր ինքնանկարը:

²⁹ Տես, օրինակ, Վարդան Բարձրաբերդցի, Մեկնություն Սաղմոսաց Դավթի, Աստրախան, 1797, էջ 17—20:

հանձնախմբի մոտ. դա նրանց համար լույս է ու փրկություն: Թե՛ պատվիրատուներ Հովհաննեսն ու Դանիելը և թե՛ նախորդ տեսարանի քահանան ներկայացված են ճիշտ միան և տարազով. մինչև ոտքերի թաթերն իջնող երկար ներքնագգեստներ, տրված կանաչով կամ դեղինով, վրաները սև թիկնոց՝ վզի մոտ ագուցվող մեծ կոճակով: Նրանք գլխներին ունեն արևելյան սպիտակ փակեղներ (փաթոց, չալմա), որն այնքան էլ հատուկ չէ հայ հոգևորականներին³⁰:

Միան ճատած այս տղամարդիկ աչքի են ընկնում պատկերավորման ազգային հատկանիշներով՝ սև, մեծ աչքեր՝ խորհող ու կենդանի տպավորությամբ, երկար քիթ, ոչ շատ առաջ եկած քեղ ու մորուք... Աշակերտների մոտ հետաքրքրականը գեղջկական պարզ հագուստներն են ու փոսփուլավոր գեղեցիկ քլոզները: Դրանք թերևս «արդիականացման» այն տարրերն են, որոնք, անկախ պատկերվող թեմայից (թեկուզ դա լինի խիստ կանոնիկ «այսպեպությունը»), հարազատ ու գրավիչ են դարձնում ամեն մի նկար, նրանց հոգու ու միտումների արտացոլումը դրսևորում:

Տիպիկ վասպուրականաց, գեղեցիկ բուսամոտիվներով ու պալատան կամարներով զարդարված խորանները զբաղեցնում են ձեռագրի 9ր—13ա էջերը: Խորանների գրվածքները հենված են եռալուսների վրա, որոնք, որպես կարգ, խարիսխների ու խոյակների փոխարեն ոճավորված բուսազարդեր են ունենում:

Գույներն այստեղ փոքր-ինչ խամրած են թվում. հավանաբար ձեռագիրը երկար ժամանակ անխնամ է մնացել: Լրիվ պահպանված են ալետարանիչների դիմանկարներն ու անվանաթերթերը՝ 15բ—16ա՝ Մատթեոս, 83բ—84ա՝ Մարկոս, 128բ—129ա՝ Դովթաս, 208բ—209ա՝ Հովհաննես (Պրոխորոսի հետ):

Ծերունի ուղղությանը պատկանող այս վարպետը, որին լիակատար կերպով հասկանալի էին ամեն մի նկարի էությունն ու խորունկ միտումը, նույնչափ հմուտ էր գույնի ու գծի արտահայտման հնարավորություններում: Այդ առումով նա հանդիսանում է վասպուրականյան ոճի բարձր կատարողներից մեկը, որոշակիորեն ձևավորված գեղանկարչական այդ լեզվի տիրապետման իր սկզբունքներով: Ուզում ենք

ասած լինել, որ վասպուրականյան ոճը Խլաթեցու նման մտածողի ու մեկնիչի համար ոչ միայն հնից եկող տեղական սովորությունների պարզ կիրառումն էր, ուսուցչից աշակերտ, հորից որդի փոխանցվող (ժողովրդական արվեստին բնորոշ հատկանիշ), սովորույթ, այլև նպատակի ու ասելիքի, պատկերացումների դրսևորման ուրույն միջոց:

Կյանքը դիտելով որպես արարչական հավերժ ստեղծագործ պրոցես, Խլաթեցին արվեստում էլ իրականությունը պետք է դիտեր հավերժականության տեսանկյունով (և ոչ թե սուօրյա անցողիկ շոշափելի մանրամասներով): Խլաթեցու պատկերած գեղարվեստական իրականությունը (նաև վասպուրականի մանրանկարիչների) հետո էր պարզունակ իրապաշտությունից: Էականը պատմականի ու միջավայրի կոնկրետությունը չէր, այլ նրանց համամարդկային-փիլիսոփայական ընդհանրացումը. այն, որ մարդը, կյանքը հավերժ անմահ գոյություններ են՝ օժտված նախախնամականի անտես ուժով ու գեղեցկությամբ: Այս գաղափարներն են իրենց առավելագույն պարզեցված ու կարճատև ձևով մարմնավորում առանձին վասպուրականի մանրանկարչության խիստ յուրատիպ ու հնամենի ոճում³¹:

Այստեղից արդեն իր դերն է սկսում խաղալ նկարչի անհատականությունը, գծի ու գույնի տիրապետման նրա վարպետությունը: Իսկ այդ հատկանիշներում Խլաթեցին պատշաճ բարձրության վրա է: Արդեն թեմատիկայի այդպիսի ըմբռնումը՝ մեկնաբանված գեղանկարչական արտահայտման ուրույն լեզվով, ինչպիսին խիստ կարճատևությունն է, մի քանի գույների հակադիր համադրությունն ու զարդա-դիմային կառուցվածքը, այդ մանրանկարների հաղորդում է բանաստեղծական շունչ, կերպարները հագեցնում ռոմանտիկական խորհրդավորությամբ: Յուրաքանչյուր մանրամասն ձևով ամբողջական է ու արտահայտիչ: Չկա որևէ ավելորդ բան, լրացուցիչ առարկա, լրացուցիչ գույն: Բայց, ի տարբերություն վասպուրականի մի քանի այլ մանրանկարիչների, նա աշխատում է այդ, այսպես ասած, «սուղ» ոճը փրկել չոր էությունից, որոնք կարող են կարդացվել միայն որպես քարացած խորհրդանիշներ, որպես ձևանիշներ: Խլաթեցու մոտ ամենատիրական թվացող ձևերում ինչ-որ

³⁰ Այդ մասին հանգամանորեն խոսել ենք վասպուրականի մանրանկարչությանը նվիրված մեր գրքում («Վասպուրականի մանրանկարչությունը», գիրք Ա, Նրեան, 1975, էջ 76):


³¹ Այս հարցերի շուրջ խոսել ենք նաև Հովհաննես Խիզանցուն նվիրված մեր հոդվածներից մեկում («Էջմիածին», 1974, էջ 49—57):

հույզ կա, անորոշ մի կիրք, աննշմարելի, բայց սրտամոտ մի բան, որով անմիջական կապ է ստեղծվում ընթերցողի հետ: Դա, ինչպես վերևում էլ ասացինք, մասամբ գալիս է Խլաթեցու կերպարների յուրօրինակ «արդիականացումից»: Որոշակի նշանակություն է ստանում նաև նրա գոտ կատարողական լեզուն: Սահուն վրձինը երբեմն հասնում է ձևի բյուրեղացման, որը կարծես ներքին իմաստն էլ պարզորոշ է դարձնում: Չորությունից խուսափելու համար հիմնական գծին կից նա տանում է ստվերի պես մի նուրբ շերտ. մարմնի բաց մասերում՝ կապտա-շագանակագույն երանգային խաղեր, իսկ հագուստներում տիրապետում է զարդառճավորումը՝ շարժմանը համընթաց ու ճաշակավոր: Նույնիսկ գոտ պայմանական «անկենդան» տարրերը այնքան ինքնատիպ ձևերով են տրվում, որը նույնպես նպաստում է ընդհանուր տպավորությանը՝ գետի ափը «Մկրտության» տեսարանում, բնապատկերը՝ «Այլակերպությունում», արմավենու ծառը՝

«Մուտք Երուսաղեմում» (ուղղակի կատարյալ վարպետությամբ արված):

Մեր նկարչի մոտ գույները (դրանք չորսն են կամ հինգը՝ կարմիր, կանաչ, դեղին, կապույտ, շագանակագույն) այնքան հագեցված ու վառ չեն, ինչպես նրան նախորդած Վասպուրականի մի քանի մանրանկարիչների ձեռագրերում: Բայց գծի հստակությունն ու, որոշ դեպքերում՝ փափկությունը, ասես լրացնում է գունային այդ մեղմությունը, մի տեսակ յուրովի «գրաֆիկական» շահեկանություն ստեղծում: Գունա-գծային այդպիսի դաշնությունը միաժամանակ հավաքվածություն է հաղորդում հորինվածքներին:

Այսպիսին է Գրիգոր Խլաթեցու կենսագրությունն ու գործունեության համառոտ նկարագիրը՝ միջնադարյան հայ մշակույթի պայծառ դեմքերից մեկի, մտածողի ու արվեստագետի, որի թողած ժառանգությունն ու քարի անունն անգնահատելի է մեզ համար:





ՅՈՒՑԱԿ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱՏՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի սուրբ և փառատոբեալ ճրաշա(մինչև այստեղ մեծատառ երկաթագրով, մնացյալը նոսրգրով) լի և մեծապաշտառ սրբոյ Մենաստանէս սրբոյն Աղբերկայ գերանրաշ սրբոց վանուց և յԱստածամօխ սարափելի տարբ Բեկոէ Տեառն մերոյ Յիսուսի Գրիստոսի: Եւ ի գործեկադարոց տարբ Նշանէս: Եւ յԱմենօրնեալ Աստուածամորն քաղցրահայեաց սրբոյ Տաճարէ. Եւ յամենայ աստուածամանոյ սրբոց ճրաշագարդ Տաճարաց: Եւ ի նոր որոց ամփոփեալ մեծանրաշ սրբոց ճշխարաց: Եւ ի սոցին տպատար և պաշտօնեալ ի Տէր Մարտէոս մեղապարտ վարդապետէ: Յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան, նամակ պահպանութեան և շնորհք Առաքելական և Աստուածային բազմապատիկ օրհնութեան առ ընդհանոր ամենայն ազգս քրիստոնէից լուսաւորչադասան հայկազուն սեփ' ուր և հասցէ նամակ օրհնութեան մերոյ, ի քաղաքս, ի գիւղս, ի վանս և յամենայն շէնս: Նոյն Արքի է պանծալի եպիսկոպոսաց, Աստուածաբան վարդապետաց, պաշտօնաւոր քահանայից, ուսումնաւոր տարւազաց, Ատենազարդ դպրաց, Աստուածաւոր իշխանաց և համայն տերաւոր զօրացեալ ժողովրդոցն հայազնէից վերաբնակելոց յամենայն տեղիս, արանց և կանանց, ձերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, և ամենայն չափու տիղ և հասակի ի Բրիստոս Աստուած հաւատացելոց լիցի միշտ ինդալ յարագորարն կենօք ամէն: ...

(Տրվում է այստեղ Աղբերկա վանքի պատմությունն և ապա խոսվում է հօգուտ վանքին կատարվելիք հանգանակության մասին):

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը-թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը-Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Գ-Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե-Ը-ից, ԺԱ-ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա-Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա-Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է-Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից և ԺԱ-ից:

... Արդ' ուրեմն ամա զայն սքանչելաւորաշ տարբ ճշանն ընդ ձեռն գրամատոյց հայրապետիւ եղբայր մերոյ Ռաֆայէլ շնորհազարդ վարդապետին ստաբեցաք առ բարեպաշտ աստուածափրութիւն ձեր, վասն որոյ սիրով տարբ հոգւոյն և աստուածային օրհնութեամբն ծանուցանեմք սիրելեացդ մերոց, զի յաղագս արդեանս ժամանակի դստն բերմանց և ի մերս տարաբախտութեանց այս զարմանաւորաշ տարբ վանքս ի վաղ ժամանակաց անկեալ կալ ի ներքոյ պարտոց և նեղութեանց, չունելով մեր յալ տատեքէ ճար և հնար ազատութեան, միանգամայն յուով տեսնն ապատուան Լոբա մեծի օգնականութեամբ քրիստոսաւոր օրհնեալ հաւատացելոց ամենեւոյն: Ուստի յերես անկեալ աղաչեմք զի ի փառս Աստուծոյ, և ի սէր գործեկադարոց սրբոյ ճշմոյսին և համենայն ճրաշագործ սրբոց մատանց որք ի սուրբ վանս զեւտեղեալ կան զմիմեանս յորդորելով և պատճառ բարեաց լինելով լի և սուստ ողորմութիւնս շնորհեցիք և յատկապէս օգնութիւնս արասցիք ծանրաբեռն պարտոց վճարման, և զոր ինչ որ ի բարի սրտից ձերոց բղիթէք ի խաթեր խաչեցելոյն Յիսուսի անխնայաբար շնորհեցիք, այսինքն թէ քահանայից, թէ խոտմանց, թէ կտակս, թէ հոգեւածինս, և թէ խաշահամբոյրս, և թէ այլ զանազան տուրս սիրապարզ և ողորմութեամբ, աներկմիտ մտօք և յօժար կամօք շնորհեցիք ի ձեռս լիշեալ հայրապետիւ վարդապետիդ. զի ի նմա հասեալն ի սուրբ Աղբերկայ ճրաշալի վանս հասեալ գիտասցիք: Որ և ողորմածն Աստուած գտրոց և ողորմութեանց ձերոց փոխարէն Ռ.տիկս (հազարապատիկս—Ն. Մ.) շնորհեցէ. զձեզ միշտ շէն և պաշտառ պահեսցէ. մեղաց ձերոց թողութիւն շնորհեցէ, զհոգիս ձեր և ճշեցեցելոցն ձերոց ի փառս արքայութեան հանգուցէ. և զամենայն խնդիրս ձեր ի բարին կատարեցէ, և փրկեալ ազատեցէ զձեզ զամենեսեանդ յամենայն երեկի և աներկոյթ թշնամեացն փորձանաց: Այլ և օրբան այս գերանրաշ տարբ վանքս ստոյմսերգութիւն, ժամ, պաշտօն և պատարագ մատչիցի յամենայնէ ձեզ և ձեր համայն ճշեցեցելոցն և կենդանեացն մասն և բաժին եղիցի. Ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Գրեցաւ օրհնութեան կոնդակս ի թուոյս ՌՄԶԸ (1839 թ.—Ն. Մ.) սեպտեմբեր հինգն: Արդեամբ և կամեցողութեամբ Սրբոյ Երուսաղէմի բնիկ միաբան Ռաֆայէլ շնորհափաջ վարդապետին, ի յիշատակ սրբոյ Աղբերկայ մեծահրաշ վանոց: Ձեռամբ մեղապարտ գրչի տիրացու Յարութիւն Ալթաբարմախեան կոչեցելոյ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կոնդակի կոնակի մասում մատիտով գրված է)
Եւ մշեցի վերի թ[ա]ղցի Նազ... Մխիթարեան
մէկ գումէշ մը նովիրեցի սուրբ Աղբերկան 1911 ...:

№ 356
ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թերթերը՝ 107:— **Պրակներ**՝ չունի: Ծակված առանձին թղթեր են, որոնք ժապավենով միացված են:— **Մեծությունը**՝ 28,3×21,6×1,2 սմ.:— **Նյութը**՝ բարակ և հասարակ թուղթ:— **Կազմը**՝ սկզբում և վերջում մեկական հասարակ բարակ սովորաբար թուղթ:— **Պահպանակները**՝ սկզբում մեկ հատ հասարակ թուղթ:— **Վիճակը**՝ լավ:— **Գրությունը**՝ միասյուն:— **Դատարկ թղթերը**՝ բոլոր թղթերի կրոնակի մասում գրություն չկա:— **Տողերը**՝ անհամաչափ, 37—43:— **Գծումներ**՝ չկան:— **Գիրը**՝ շեղագիր:— **Զարդագրություն**՝ չունի:— **Գրիչը**՝ Տիրացր Եպիսկոպոս:— **Պատվիրատուն**՝ Ամերիկացի հայոց առաջնորդության երեսփոխանական ժողովը:— **Ժամանակը**՝ 3 դեկտեմբերի 1922 թ.:— **Վայրը**՝ Ռուսթ, Մեասեչուսեց, ԱՄՆ:— **Ծանոթություն**՝ ձեռագիր տեղեկագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից:

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ստորև տրվում է բովանդակության գլխավոր մասերը)

- Թ. 1ա.— (Նախաբան):
- Թ. 3ա.— (Առաջնորդի էությունը):
- Թ. 12ա.— Առաջնորդարանի դրությունը:
- Թ. 19ա.— Առաջնորդական այցելություններ:
- Թ. 50ա.— Եկեղեցու ներքին կեանք:
- Թ. 87ա.— Ամուսնական հարցեր:
- Թ. 89ա.— Մարդաբանարի խնդիր:
- Թ. 90ա.— Վարչական կեանք:
- Թ. 95ա.— Արտաքին յարաբերություն:
- Թ. 103ա.— (Վերջաբան):
- Թ. 105ա.— Ցուցակ 1921 թ. օգոստոս 21 Ռուսթ գումարում երեսփոխանական ժողովի:
- Թ. 107ա.— Ցանկ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Սկզբում գտնվող պահպանակի վրա գրված է)
Տեղեկագիր տարեկան
Առաջնորդի հայոց Ամերիկացի
Տ. Տիրացր Եպիսկոպոսի
1922, Դեկտ. 3:
Թ. 1ա.— (Թի) 1698
1922 Դեկտ. 3—4 տ.

«Որոց ո՛չ գոյ առաջնորդություն, թոթափին իրրև գտերև»:

Հոգեւորմ Նա՛րբ,
Մեծարող Պ. Պ. Երեսփոխանը:
Թ. 104ա.— Կամք Հայրական օրհնութեամբ և սիրով,

Տիրացր Եպիսկոպոս
Առաջնորդ Հայոց Ամերիկացի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ


(Առաջին թերթը ներկայացնում է առաջնորդարանի նամակի թուղթը, որի վերևում տպված է հետևյալը)

Առաջնորդություն Հայոց Ամերիկացի,
Ռուսթ, Մէաս.
The Prelacy of the Armenian Church in America,
65 Laurel Street, Worcester, Mass.

(Կենտրոնում կա առաջնորդարանի էմբլեման, որի վրա գրված է հետևյալը) Առաջնորդություն Հայոց Ամերիկացի
American Diocese of the Armenian Church.

№ 357
ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թերթերը՝ 176:— **Պրակներ**՝ չունի: Ծակված առանձին թղթեր են, որոնք ժապավենով միացված են:— **Մեծությունը**՝ 28,5×21,7×1,7 սմ.:— **Նյութը**՝ բարակ և հասարակ թուղթ:— **Կազմը**՝ սկզբում և վերջում մեկական հասարակ բարակ սովորաբար թուղթ:— **Պահպանակները**՝ սկզբում և վերջում մեկական հասարակ թուղթ:— **Վիճակը**՝ լավ:— **Գրությունը**՝ միասյուն:— **Դատարկ թղթերը**՝ բոլոր թղթերի կոնակի մասում գրություն չկա:— **Տողերը**՝ անհամաչափ, 36—41:— **Գծումներ**՝ չկան:— **Գիրը**՝ շեղագիր:— **Զարդագրություն**՝ չունի:— **Գրիչը**՝ Տիրացր Եպիսկոպոս:— **Պատվիրատուն**՝ Ամերիկացի հայոց առաջնորդության երեսփոխանական ժողովը:— **Ժամանակը**՝ 7 հոկտեմբերի 1923 թ.:— **Վայրը**՝ Բոստոն, Մեասեչուսեց, ԱՄՆ:— **Ծանոթություն**՝ ձեռագիր տեղեկագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից:
(Ըարմոնակի)



ՄԱՀ ՄԻՆԱՍ ՄԻՆԱՍՅԱՆԻ
(1892—1975)

Կարճատև հիվանդությունից հետո, 1975 թվականի նոյեմբերի 25-ին, Երևանում, վախճանվեց բազմալատուկ դասախոս, իրավաբան, թարգմանիչ, 1945—1954 թթ. հոգևոր գեմարանի տեսուչ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Մինաս Սարգսի Մինասյանը:

Հանգուցյալը ծնվել է 1892 թվականին Արևմտյան Հայաստանի Կյուրին քաղաքում: Ծննդավայրում նախնական կրթությունը ստանալուց հետո, ավարտում է Ամերիկյան քոլեջը, ապա Կ. Պոլսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

Այնուհետև Մ. Մինասյանը նվիրվում է կրթական-մանկավարժական գործունեության:

1922 թվականին, բնտանիքով փոխադրվելով Կովկաս, նախ բնակվում է Թիֆլիսում, ապա, 1926 թվականին, բնդմիջո նստատեղում Երևանում: Այստեղ նա սկզբում աշխատակցում է հայ մամուլին: Երկար տարիներ աշխատում է նաև որպես ժողովրդական դատավոր:

Այնուհետև նա կրկին անցնում է մանկավարժական գործունեության և 30 տարի անընդմեջ եվրոպական և արևելյան լեզուներ դասավանդում Երևանի պետական համալսարանում, Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական, ինչ-

պես նաև գեղարվեստա-թատերական ինստիտուտներում: Միաժամանակ Մ. Մինասյանն աշխատում է Հայկական ՍՍՀ գիտու-



թյունների ակադեմիայի պատմության ինստիտուտում՝ որպես ավագ գիտական աշխատող: Տարիներ շարունակ նա զբաղ-

վում է թարգմանչական գործունեությանը: Երկար ժամանակ Մ. Մինասյանը եղել է Կյուրիևի Հայրենակցական միության նախագահը Հայաստանում և հանդիսացել Սիյուրքահայ կոմիտեի Հայ հայրենակցական միությունների խորհրդի անդամ:

1945 թվականի հունիսին Մայր Աթոռում գումարված ազգային-եկեղեցական ժողովի կողմից Մ. Մինասյանն ընտրվել է Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և մինչև 1954 թվականը պատասխանատվության բարձր գիտակցությամբ ու սրտագին ջանքերով կատարել իր պարտականությունները:

1945 թվականի նոյեմբերին Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի հրամանով ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերաբացման առիթով Մ. Մինասյանը հրավիրվում է Մայր Աթոռ՝ իբրև հոգևոր ճեմարանի տեսուչ և միաժամանակ անցըներեն լեզվի դասախոս: Հոգևոր ճեմարանում նա ծավալում է կրթական-մանկավարժական բեղուն գործունեություն:

Մ. Մինասյանը բազմաթիվ շահեկան հոդվածներով հանդես է եկել Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրում:

Բարեխիղճ և նվիրված աշխատանքի շնորհիվ Մ. Մինասյանը Մայր Աթոռում վայելել է միաբանության, ուսանողության և բոլոր աշխատակիցների սերն ու հարգանքը:

Նոյեմբերի 26-ին, Մ. Մինասյանի մանվան տխուր առիթով, Վեհափառ Հայրա-

պետը հետևյալ ցավակցական հետագիրն է ուղարկում հանգուցյալի սգավոր հարազատներին.

«Վիշտ պատճառեց Մեզ մահվան գույժը վաստակաշատ կրթական գործիչ Մինաս Մինասյանի, որ երկար տարիներ շարունակ նվիրումով ու արդյունավետությամբ վարել էր տեսչության պաշտոնը սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի:

Անձամբ Մենք ճանաչել ու գնահատել ենք նրան՝ իբրև ազնիվ կրթական մշակ ու հայրենասեր դաստիարակ:

Մայր Աթոռում նրա բարի հիշատակը կպահպանվի անմոռաց:


Մեր սրտագին ցավակցություններն ենք ներկայացնում սգակիր ընտանիքի բոլոր անդամներին՝ մաղթելով նրանց արևշատություն:

Հարգանք հանգուցյալ Մինաս Մինասյանի վաստակին և օրհնություն նրա արդար հոգուն»:

Դեկտեմբերի 7-ին, կիրակի օրը, Մայր տաճարում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, հավարտ ս. պատարագի, կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և հոգևոր ճեմարանի տեսչին տեսուչ, հանգուցյալ Մինաս Մինասյանի հիշատակին:

Վաստակաշատ դասախոսի, ազնիվ ու հայրենասեր հայ մարդու հիշատակը վառ ու անմոռաց կմնա Մայր Աթոռում բոլորի սրտերում:

Հանգիստ նրա ոսկորներին:





Յ Ա Ն Կ
«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1975 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՅՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԻՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
կոնգակը Իրաքի հայոց թեմի առաջնորդ տ.
Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանին արքուրան
սրտով շնորհակալ առթիվ, Ժ 3:

ԱՄԻՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
կոնգակը Կարապետ Այուսեանին ա. Գրիգոր
Լուսավորչի շքանշանով պարգևատրելու առթիվ,
Ժ 5:

ԱՄԻՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
կոնգակը Անդրանիկ Անդրեասյանին ա. Գրիգոր
Լուսավորչի շքանշանով պարգևատրելու առթիվ,
Ժ 7:

ԱՄԻՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
կոնգակը Երվանդ Տեմիրճյանին ա. Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարգևատրելու առթիվ,
Ժ 9:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնգակը 1975 թվականը
հորեղանակա՞ն տարի հայտարարելու և Ամենայն
Հայոց Հայրապետության կիկիցան շքանի պատոմության հիշատակը ոգեկոչելու առթիվ, ԺԲ 3:

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Մենդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծույթուն Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետի և բույր եկեղեցիների հոգևոր պետերի ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա 11:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհափորական գիրը Ամանորի և սուրբ Մենդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրատվական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին, Ա 14:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Քենտրերիկի նորընտիր արքեպիսկոպոս Դոմագ Զրեղերիկ Կոզանի միջև փոխանակված պաշտոնական գրությունները, Գ 3:

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծույթուն Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետի և բույր եկեղեցիների հոգևոր պետերի ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Դ 7:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհափորական գիրը Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրատվական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին, Դ 10:

Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության խոսքը՝ ուղղյալ Միացյալ Նահանգաց հայոց արևելյան թեմի տարեկան թեմական պատգամափորական ժողովին, Դ 19:

Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության խոսքը՝ ուղղյալ Միացյալ Նահանգաց հայոց արևմտյան թեմի տարեկան թեմական պատգամափորական ժողովին, Դ 20:

Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության խոսքը՝ ուղղյալ Միացյալ Նահանգաց հայոց արևելյան թեմի հոգևորականաց համագումարին, Դ 21:

Վեհափառ Հայրապետի խոսքը՝ ուղղված բուրբար օրթոդոքս եկեղեցու պետ Նորին Արքույթուն Ս. Մաքսիմ Պատրիարքին, Զ 3:

Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա-ի խոսքը՝ ուղղված Բուլղարիայի արտաքին գործերի մինիստրությանն աղբյուր եկեղեցական գործերի խորհրդի նախագահ Ստոյնո Բարբուկին, Զ 6:

Նորին Արքույթուն Ս. Մաքսիմ Պատրիարքի խոսքը բուրբար եկեղեցու ա. Սինդի կողմից ի պատիվ Հայոց Հայրապետի տրված ճաշկերպի ժամանակ, Զ 8:

Հայոց Հայրապետի ողջույնի խոսքը Լամբերտ պալատում Քենտրբերիի արքեպիսկոպոս Դոնալդ Ֆրեդերիկ Վոչանին, է—Ը 3:

Հայոց Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Միևիստրների ավետի նախագահ Գրիգոր Ա. Արզումանյանին, է—Ը 79:

Բ. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Հաղորդագրություն (Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակը հանդիսությամբ նշելու առթիվ), Բ 3:

Հաղորդագրություն (Բուդարիայի Նորին Արքունիքում Ս. Մաքսիմ Պատրիարքի և ս. Սիմոնի հրավերով 1975 թվականի մայիսի 16—27-ը Ամենայն Հայոց Հայրապետի Բուդարիայում գտնվելու առթիվ), Զ 10:

Հաղորդագրություն (Հայոց Հայրապետի արտասահման տասներորդ ուղևորության առթիվ), է—Ը 6:

Հաղորդագրություն (Սեպտեմբերի 16—21-ը Մայր Աթոռ ս. Էջմիածնում գումարված համաօրթորոշ խորհրդակցության առթիվ), Թ 22:

Գ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի տասներորդ ուղևորությունն արտասահման, Զ 14:

Հայոց Հայրապետը Ռումինիայում, Զ 15:

Հայոց Հայրապետը Բուդարիայում, Զ 31:

Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի տասներորդ ուղևորությունը արտասահման, է—Ը 8:

Վեհափառ Հայրապետը Անգլիայում, է—Ը 5:

Վեհափառ Հայրապետը Ամմանում, է—Ը 28:

Վեհափառ Հայրապետը սուրբ երկրում, է—Ը 37:

Դ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ա. Հ.—Ժամանակի և կյանքի մեծ խորհուրդը, Ա 7:

Ա. Հ.—Գևորգյան ճեմարանի հիմնադրության 100-ամյակը, Գ 7:

Ա. Հ.—Եղևոցի 60-ամյակը, Ե 3:

Ա. Հ.—Մեծ հաղթանակի 30-ամյակը, Ե 5:

Ա. Հ.—Կիլիկյան շրջանի Ամենայն Հայոց Հայրապետության և հայ մշակույթի 300 տարիների պատմության հիշատակը, ԺԲ 6:

Ե. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ և սուրբ Մենդյան տոնի առթիվ Մայր տաճարում, Ա 3:
Ամանորյա և սուրբ Մենդյան տոնակատարությունը Մայր Աթոռում, Ա 16:

Եկեղեցական բաժ. լուրեր, Ա 19, Բ 71, Գ 47, Դ 23, Ե 68, է—Ը 90, Թ 31, Ժ 11, ԺԱ 37, ԺԲ 15:

Հայտարարություն (1975 թվականի Ա համարից «Էջմիածին» ամսույթի զվտագրողների և վերջնագրողների փոխակալ առթիվ), Ա 21:

Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճարում, Դ 3:

Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ հանդիսավոր ս. պատարագ և հայրապետական քարոզ Մայր տաճարում, Դ 22:

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռում, Դ 32:

Վեհափառ Հայրապետի գահակալության քսաներորդ տարեդարձի հանդիսություն Մայր Աթոռում, Թ 25:

Մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչություն, Թ 27:

Ա. Հ.—Տիրամայր Սիրամուշ Պաճյանի մահվան տարելիցը, Ժ 16:

Ս. Ստեփանոսի տոնը և սարկավազական ձեռնադրություն Մայր Աթոռում, ԺԲ 17:

Զ. ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՊԱՆՈՒՄ

Դիպլոմային աշխատանքների պաշտպանություն հոգևոր ճեմարանում, Դ 36:

Ամալկերչի հանդիսություն հոգևոր ճեմարանում, Զ 53:

Հոգևոր ճեմարանի վերաբացումը, Թ 30:

Է. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՏԱԿԱՆ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ—Մեծ պանոս խոմեր, Գ 59:

Աստվածաշնչական ընթերցումներ, Դ 12:

ՍԱՐԳԻՍ ՍՐԿ. ՍԱՐԳՍՅԱՆ—Արդարության կրոնական գաղտնիքն Աստվածաշնչում, Թ 58:

ՆԵԿՏԱՐԻՈՍ ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈՒՍՏ—Ցաղագս տառի սրբոց Թեոդորոսի, Ժ 24:

Կիրովաբաղի հայոց ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցու վերանորոգված Ավագ սեղանի օծումը, ԺԲ 20:

ՀՈԲԵՆՅԱՆՆԵՐ

Ը. ԿԻԼԻՑԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ 300-ԱՄՅԱԿԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՆ ՆՎԻՐՎԱՆՆԵՐ ՆՅՈՒԹԵՐ

ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Կիլիկյան շրջանի Ամենայն Հայոց Հայրապետության և հայ մշակույթի 300-ամյա պատմության ոգեկոչումը Մայր Աթոռում, ԺԲ 10:

Թ. ԵՂԵՌԵԻ 60 ԵՎ ՄԵՐ ՀԱՂՎԱՆԱԿԻ 30-ԱՄՅԱԿՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱՆՆԵՐ ՆՅՈՒԹԵՐ

ՀԱՄԼԵՏ ՄԻԹԻԹԱՐՅԱՆ—Մայր Աթոռ ս. Էջմիածնի հայրենասիրական գործունեությունը Հայրենական պատերազմի տարիներին, Ե 8:

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Այսօր, ապրիլի 24-ին, Մայր Աթոռում և Երևանում, Ե 33:—Հանդիսու-

թյաններ Մայր Աթոսում Եղեռնի 60-ամյակի և Մեծ հաղթանակի 30-ամյակի առթիվ, Ե 39:
ԵՂԵՐՈՒՄԷ ԵՎ ՀԱՂԻԹԱՆԱԿՈՒՄԷ ԵՎ ԳԵՂԻՄԷ ՄԻՋ:
ՎԱՀԱՆ, ԹԵՂԵՆՅԱՆ—Ամապոր բան մը այնտեղ,
Ե 56:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ—Հողանջ եղեռնական, Ե 56:
ԳԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ—Առկայծ կրակ, Ե 58:
ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ—Նամակը, Ե 56:
ՆԱԽՐԻ ԶԱՐՅԱՆ—Զաքն հաղթեցական, Ե 56:
ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ—Նախրան դադար բարդի, Ե 61:
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ—Էրապրոմ, Ե 62:
ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ—Սպասում, Ե 62:
ՀՐԱԶՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ—Մայրը, Ե 63:
ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ—Մեծ հաղթանակի օրը, Ե 64:
ՄԻՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ—Տաղ վերադարձի, Ե 64:
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ—Խաղաղություն, Ե 64:
ՄԱՐԿ ՌԻԺԿՈՎ—Ապրիլ, Ե 65:
ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱԳԱՄՅԱՆ—Սողոմոն
թեմիկյանի մի նամակը, Ե 66:

Ժ. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԸՆԴՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԳՐՈՒԹՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՒԱԳ ՏԷՐ-ՄԻՐՏՅԱՆ—Ուխտի
խօսք արտասանում Ս. Տ. Գեորգ Գ կաջողիկոսի
շիրմի վրա, Գ 10:

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ—Նորին Վենախառության
օծման երկրորդ տարեդարձը և ս. Էջմիածնի
ուսումնարանի հիմնադրությունը, Գ 13:

Գեորգյան ճեմարանի դասախոս և սիրված բա-
նաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի ճառը ճե-
մարանի հիմնադրության 15-ամյակի առթիվ, Գ
16:

ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ—Հայ դպրության նոր
դարբնոցը, Գ 18:

ԽԱՀԱՏՈՐ ԿԱՆԱՅԱՆ—Ողջույնի և երախտագի-
տության խոսք Գեորգյան ճեմարանի 100-ամյակի
առթիվ, Գ 25:

ՄԻՀՐԱՆ ԳԱՄԱՂԵԼԻ ԳԱՄԱՂԵԼՅԱՆ—Էջմիածնի
Գեորգյան ճեմարան, Գ 28:

ԺԱ. «ԷԶԻՄԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՆՅՈՒԹԵՐ

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Մայր Աթոռի պաշտոնա-
թերթ «Էջմիածին» ամսագրի հրատարակության
երեսնամյակը, Բ 4:

Թուրքիայի հայոց ամենապատիվ տ. Շնորհք սրբ-
բազան պատրիարքի ողջույնի խոսքը («Էջմիա-
ծին» ամսագրի հրատարակության 30-ամյակի
առթիվ), Բ 22:

Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ.
Վոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի ողջույնի
խոսքը («Էջմիածին» ամսագրի հրատարակության
30-ամյակի առթիվ), Բ 23:

Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի ա-
ռաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Միմուկյանի ող-
ջույնի խոսքը («Էջմիածին» ամսագրի հրատա-
րակության 30-ամյակի առթիվ), Բ 25:

Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջ-
նորդ տ. Տիրացր եպ. Մարտիկյանի ողջույնի
խոսքը («Էջմիածին» ամսագրի հրատարակության
30-ամյակի առթիվ), Բ 27:

Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ տ. Վահան
եպ. Տեղյանի ողջույնի խոսքը («Էջմիածին»
ամսագրի հրատարակության 30-ամյակի առթիվ),
Բ 28:

Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպ. Շաքար-
յանի ողջույնի խոսքը («Էջմիածին» ամսագրի
հրատարակության 30-ամյակի առթիվ), Բ 29:

Վրաստանի հայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպ.
Սրապյարյանի ողջույնի խոսքը («Էջմիածին»
ամսագրի հրատարակության 30-ամյակի առթիվ),
Բ 31:

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԸԱՔԱՐՅԱՆ—Խաղաղու-
թյան պաշտպանության հարցը «Էջմիածին» ամ-
սագրի էջերում, Բ 32:

ԷԶՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Հայ դավանաբա-
նական գրականությունը «Էջմիածին» ամսագրի
էջերում, Բ 33:

ՍՈՐԵՆ ՔՈՒԱՆԶՅԱՆ—«Էջմիածին» ամսագիրը
և հայագիտությունը, Բ 45:

ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ—Հայ լեզվաբանությունը
«Էջմիածին» ամսագրի էջերում, Բ 56:

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀԼԻԶՅԱՆ—«Էջմիածին»-ը և հայ
կրթչության հարցերը, Բ 63:

ԺԲ. ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՄՆՆԳՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Սուրբ Օծու-
յուն Ս. Տ. Վազգեն Ա-ի շնորհավորական գիրը
մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի
80-ամյա հոբելյանի առթիվ, ԺԱ 11:

Ամենայն Հայոց Հայրապետի ցավակցությունը մե-
ծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի մահ-
վան առթիվ, ԺԱ 12:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ—Էջմիածնի պատմական
դերը, ԺԱ 13:

Վարպետի՝ Ավետիք Իսահակյանի խոսքը Էջ-
միածնի դերի և նշանակության մասին Մայր Ա-
թոռի տոնի առթիվ, ԺԱ 18:

Ավետիք Իսահակյանի խոսքը ողջված Վենախա
Հայրապետին՝ Նրա զանակության առաջին
տարեդարձի առթիվ, ԺԱ 19:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ—Բարի գալուստ մեր թան-
կազին հարազատներին, ԺԱ 20:

ԷԶԵՐ ՎԱՐՊԵՏԻ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
Է՛յ ջան հաղթենիք, ի՛նչքան սիրուն ես, ԺԱ 21:

Կը տեսնեմ անա,—լուռ երևցին, ԺԱ 21:

Հայրենիքիս, ԺԱ 21:

Հայ հարապատկությունը, ԺԱ 21:

Մեր պատմիչները և մեր գուսանները, ԺԱ 22:

Անի, ԺԱ 22:

Մեծ հաղթանակի օրը, ԺԱ 23:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ—Խոսացումներ, ԺԱ 24:

ԷԶՆԻԿ ԱԲԵՂ. ՊԵՏՐՈՍՅԱՆ—Ավետիք Իսահակ-

յանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսությունների Մայր Աթոռում, ԺԱ 29:
 ԻՄԲԵՆՏ ԱԹԱՅԱՆ—Դիտողություններ «Ավ. Իսովհակյանը և հայ երգը» հարցի առթիվ, ԺԱ 33:

**ԺԳ. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
 ԳԻՐՔԵՐՈՒՄ**

Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարության նստաշրջանը Մայր Աթոռ ա. Էջմիածնում, Գ 38:

Հաղորդագրություն (1975 թվականի փետրվարի 24—28-ը Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարության Մայր Աթոռ ա. Էջմիածնում ժողովի առթիվ), Գ 45:

Ա. Հ.—Հանուն Եվրոպայի խաղաղության և անվտանգության, Է—Ը 82:

Հայոց Հայրապետի խոսքը՝ Հելսինկիում Եվրոպայի անվտանգության և համագործակցության վեճաժողովի ավարտման առթիվ, Է—Ը 85:

ԺԴ. ԷՎՈԻՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ՍԱՀՄ եկեղեցիների պատվիրակության այցը ԱՄՆ, Դ 28:

Ուղղափառ աստվածաբանների խորհրդակցությունը Կրետեում, Դ 30:

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ—Համաօրթոդոքս խորհրդակցություն Մայր Աթոռ ա. Էջմիածնում, Թ 3:

Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական գիրքը ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարքության հաստատման 50 և ռումին օրթոդոքս եկեղեցու ափտոկեֆալության 90-ամյակի առթիվ, ԺԱ 3:

Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարքության 50 (1 նոյեմբեր 1925—1 նոյեմբեր 1975) և ռումին օրթոդոքս եկեղեցու ափտոկեֆալության 90-ամյակի (1885—1975) հանդիսությունները Բուխարեստում, ԺԱ 6:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Հավատո և կարգի հանձնաժողովի» նստաշրջանը Ակրայում (Աֆրիկա), ԺԱ 53:

Ուստագնացություն Վատիկան, ԺԱ 54:

Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի «Աշխատանքները շարունակող կոմիտեի» նստաշրջանը Հունգարիայում, ԺԱ 54:

Սովետական Միության կրոնական բոլոր կազմակերպությունների պետերի և ներկայացուցիչների խորհրդակցություն Մոսկվայում, ԺԱ 55:

ԵՀԽ-ի «Եկեղեցիների մասնակցությունը մարդկության զարգացման գործին» հանձնաժողովի 6-րդ ժողովը Ջագորսկում, ԺԱ 56:

ԺԵ. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Հաղորդագրություն (Սույն թվականի փետրվարի 19-ին Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և հոգևոր տեսուչ տ. Ներսես եպս. Պո-

զապայանի, համայնքային և եկեղեցական խորհրդի ատենապետ Հայկ Ապանյանի և եկեղեցական խորհրդի ատենապետ Բարսեղ Կյուպենկյանի Լոնդոնի Լամբեթի պալատ այցելության առթիվ), Գ 6:

Կ. Պոլսի հայոց ամենապատիվ տ. Ծնորոք սրբազան պատրիարքի 1974 թվականի տարեկան տեղեկագիրը, Գ 35:

Ջեռնադրություն տ. Հայկազուն արեղա Նաջարյանի (Լոնդոն), Դ 34:

ԹՂԹԱԿԻՑ—Հովվական այցելություն ի Խարթում, Զ 55:

Հայոց Հայրապետի հայրական կոչը Լիբանանի կաթիքավոր հայ ընտանիքներին օգնելու համար, ԺԱ 8:

ԺԶ. ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ

ԵՂՎԱՐԴ (ԵՂԻԾԵ ԱՐՔԵՊ. ՏԵՐՏԵՐՅԱՆ)—Հատվածներ «Կարմիր Զորավար» պոեմից, ԺԲ 22:

ԺԷ. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՍՅԱՆ ՀԱԿՈՒՐ Ա.—Հայոց մոլորական համարված գրքերն ըստ լատինական մի հին ցուցակի, Ժ 27:

«Բարեպաշտ և հանճարեղ Հայաստանը», (Իրավաբանական դոկտորների ֆրանսիական ազգային ընկերակցության գլխավոր քարտուղար, իրավաբան Միշել Լոսպիսի տպավորությունները Հայաստանի մասին), Դ 25:

ԲԱՐԹԻԿՅԱՆ ՀՐԱԶ Մ.—Մամփոնյան (") սուրբ Մարիամ Նորավայի (+902—903 թթ.) բյուզանդական վարքը, ԺԲ 39:

ԹԱՀՄԻԶՅԱՆ ՆԻԿՈՂՈՍ—Խաչատուր Տարունցիև և հայոց պատարագի նախերգը, ԺԱ 46:

ԿՐՈԶԵՎ ԿՐՈԶՅՈՒ ՓԱՎՈՂ—Հայ-պոլկարական հարաբերությունները թրքական տիրապետության շրջանին, Դ 52:

ՀԱՆՈՐՅԱՆ ՀՐԱՎԱՐԴ—Գրիչ և մանրամասնիչ Կարապետ քահանա, Դ 46: — Գրիգոր վարդապետ Խլաթեցի (Մերենց) մանրամասնիչ, ԺԲ 47: ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ ԱՍՏՏՈՒՐ Շ.— ԺԶ—ԺԷ: ղդ. մոռացված բանաստեղծ Գրիգոր Վանեցիև և նրա անտիպ տաղերը, Ժ 40:

Մովսեսի հայոց վարդապետի գրեալ պատասխանիք թղթյոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երէց (Մովսես վրդ. Երզնկացու սույն աշխատության հրատարակումը՝ Եզնիկ արք. Պետրոսյանի), Ա 30, Գ 50:

ՊԱՏՐԻԿ ԱՌԱՔԵՎ—Նոր նյութեր խաչքարերի պատմության առնչակից, Ժ 46:

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵԶՆԻԿ ԱՐԵՂԱ—Հայ եկեղեցու տեղական տոնիկի սրբերը, Թ 33, Ժ 49:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ Հ.—Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախորդները, Ա 41, Դ 37, Զ 58, Թ 49:

ՏԵՐՅԱՆ ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ—Մաքենցաց մեծ

և հուշակալոր վանքի արտամուրթունք, ԺԱ 39, ԺԲ 32:

ԺԸ. ԿԵՆԱՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՈՒՐԵՆ ՔՈՒԱՆԶՅԱՆ—Մաշտոցյան մրցանակի նոր դասիները (Վազգեն Հակոբյան), Ա 52:

Ա. Հ.—Սուրեն Ավչանի ծննդյան 70-ամյակը, Ա 59:

ԺԹ. ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մատենագիտություն («Էջմիածին» ամսագրի 30-ամյակի առթիվ, Տ. Տ. Գևորգ Զ և Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետների՝ ամսագրում տպագրված կոնկադների, քարոզների և ելույթների), Ա 22:

ՆՈՒՐԱՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ—Յուզակ Մաթ Աթոռ և

Էջմիածնի նոր տպագրված նկարների, Ա 61, Գ 62, Գ 56, ԺԱ 57, ԺԲ 55:

Ա. Հ.—Ծնորդք արքեպիսկոպոս Գալուստյան, «Առաջ շարք», 208 էջ, Բեյրութ, 1974, տպարան Տոնիկյան և որդիք, Ժ 18:



ԳԵՎՈՐԳ ՀԱՏԻՏՅԱՆ—«Կարմիր Զորավար», ԺԲ 25:

Ի. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հանգիստ տ. Եղիշև քանանա Վարդանյանի, Ա 64: Ա. Հ.—Ման նարտարապետ պրոֆ. Էդվարդ Ռոբուշյանի, Է—Ը 88:

Հանգիստ արժանապատիվ տ. Աշոտ սովագ քանանա Տեր-Հարությունյանի, Թ 64:


Ման Մինաս Մինազյանի, ԺԲ 57:





ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնգրեսը 1975 թվականը հրեղյանական տարի հայտարարարելու և Ամենայն Հայոց Հայրապետության կիլիկյան շրջանի պատմության հիշատակը ոգեկոչելու առթիվ	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ա. Հ.—Կիլիկյան շրջանի Ամենայն Հայոց Հայրապետության և հայ մշակույթի 300 տարիների պատմության հիշատակը	6
ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Կիլիկյան շրջանի Ամենայն Հայոց Հայրապետության և հայ մշակույթի 300-ամյա պատմության ոգեկոչումը Մայր Աթոռում	10
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ—Եկեղեցական քեմ. լուրեր	15
Ա. Ստեփանյանի տոմը և սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում	17
Կիրովաբադի հայոց ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերանորոգված Ավագ սեղանի օծումը	20
ԵՂԻՎԱՐԴ—Կարմիր Զորավար	22
ԳԵՎՈՐԳ. ՀԱՏԻՏՅԱՆ—Գրքերի ֆետ—«Կարմիր Զորավար»	25
ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ—Մաքևնոցաց մեծ և հռչակավոր վանքի պատմությունը	32
Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ—Մամիկոնյան (°) սուրբ Մարիամ Նորավկայի (+902—903 թթ.) բյուզանդական վարքը	39
ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ—Գրիգոր վարդապետ Խլաթեցին (Մերեմ) մանրամասնիչ	47
Յուզակ Մայր Աթոռ ա. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	55
Մամ Մինաս Մինասյանի	57
Յանկ «Էջմիածին» ամսագրում 1975 թվականի ընթացքում տպագրված նյութերի	59



**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտատրության 8/XII 1975 թ.: Ստորագրված է տպագրության 16/I 1976 թ.:
Տպագրական 4 մամուլ + 1 ներդիր, թուղթ՝ 60×84¹/₈, պատվեր 918

Մայր Աթոռ ա. Էջմիածնի տպարան, 1975 թ.